Մեր երկրի ամենամեծ հարստությունը մեր ժողովուրդն է, նրա մտավոր ներուժը:

ԲԱԿՈ ՍԱՀԱԿՅԱՆ
Արցախի Հանրապետության նախագահ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

«ՏՆՏԵՍԱԳԵՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2017

ՀՏԴ 378
ԳՄԴ 74.58
Բ 362

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝ **Կորյուն Աթոյան**
ՀՊՏՀ ռեկտոր,
տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝
Ա. Սիմոնյան /պ.գ.դ., պրոֆ./
Գ. Գալստյան /տեխն.գ.դ., պրոֆ./
Ա. Թարվերդյան /տեխն.գ.դ., պրոֆ./
Գ. Վարդանյան /տ.գ.դ., պրոֆ./
Ա. Սարգսյան /փ.գ.դ., պրոֆ./
Մ. Մինասյան /տ.գ.թ., դոց./
Պ. Քալանթարյան /տ.գ.թ., դոց./
Խ. Մխիթարյան /տ.գ.թ., դոց./
Ա. Հակոբյան /տ.գ.թ., դոց./

Կազմակերպական կոմիտե՝
Գ. Վարդանյան /տ.գ.դ., պրոֆ./
Խ. Մխիթարյան /տ.գ.թ., դոց./
Մ. Մինասյան /տ.գ.թ., դոց./
Վ. Ավանեսյան /պ.գ.դ., պրոֆ./
Ս. Խաչիկյան /տ.գ.թ., դոց./

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ:
Բ 362 ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ.- Եր.: «Տնտեսագետ» հրատարակչություն, 2017.- 134 էջ:

ԳՄԴ 74.58

ISBN 978-9939-61-160-0

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բացման խոսք

Սլավիկ Ասրյան 6
ԱՀ ԿԳՄ նախարար

Ողջույնի խոսք

Բակո Սահակյան 8
ԱՀ նախագահ

Լևոն Մկրտչյան 10
ՀՀ ԿԳ նախարար

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ ԵՎ ԱՀ-ՈՒՄ

Ներածական ելույթներ

Կորյուն Աթոյան 15
ՀՊՏՀ ռեկտոր

Արամ Սիմոնյան 21
ԵՊՀ ռեկտոր

Մանուշ Մինասյան 30
ԱրՊՀ ռեկտոր

Արսեն Լոքյան 39
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր

Գագիկ Գալստյան 41
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ռեկտոր

Արշալույս Թարվերդյան 42
ՀԱԱՀ ռեկտոր

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԲՈՒՀԵՐԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Բուհերի հարկման մի քանի հիմնահարցերի մասին 47
Արմեն Թամազյան
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր

Ինքնակարգավորման մեխանիզմների ձևավորումը և զարգացումը բարձրագույն կրթության ոլորտում 51
Պարույր Քալանթարյան
ՀՊՏՀ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր

Բարձրագույն կրթության հասարակական ընկալումը. 21-րդ դար 55
Վիտյա Յարամիշյան
ԱրՊՀ ուսանողների, շրջանավարտների և հասարակության հետ կապվող աշխատանքների գծով պրոռեկտոր

Բարձրագույն կրթության դերը տարածքային զարգացման քաղաքականության համատեքստում 59
Սոս Խաչիկյան
ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի տնօրեն

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿ

Հետազոտական կարողությունների զարգացման հնարավորությունները ԱրՊՀ-ում 65
Վալերի Ավանեսյան
ԱրՊՀ գիտության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր

Բարձրագույն կրթության և աշխատաշուկայի փոխադարձ կապերի կառավարման ազդեցությունը կրթության որակի վրա 69
Արմեն Գրիգորյան
ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն

Ակադեմիական շարժունության հիմնախնդիրները ՀՀ բուհերում 76
Աղավնի Հակոբյան
ՀՊՏՀ ուսումնական բաժնի պետ

Մասնագիտական կրթական ծրագրերի բարեփոխման անհրաժեշտությունն ու հիմնախնդիրները ՀՀ-ում 80
Գայանե Մերդինյան
ՀՊՏՀ ուսումնական բաժնի ուսումնամեթոդական ծառայության ղեկավար

Բուհերի գիտահետազոտական գործունեության արդի հիմնախնդիրների շուրջ 85
Խորեն Մխիթարյան
ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ

Կրթության որակի բարձրացման որոշ հարցերի շուրջ 91
Գեորգի Սահակյան
ԱրՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր

ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳ

Բարձրագույն կրթությունը որպես արժեք 97
Գագիկ Վարդանյան
ՀՊՏՀ գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր

Գիտելիքը որպես արժեք 103
Արամ Սարգսյան
ՀՊՏՀ փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի վարիչ

Բարձրագույն կրթության համակարգում ակադեմիական անազնվությունը բնորոշող հիմնական վարքագծային դրսևորումները 110
Մերի Բադալյան
ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան

Կրթությունը որպես ազգապահպանման և զարգացման գործոն 119
Սուրեն Սարգսյան
ՀՊՏՀ փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր

Աշխատաժողովի արդյունքները 129

2017 թ. հունիսի 29-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի և Արցախի պետական համալսարանի նախաձեռնությամբ, ԱՀ նախագահի բարձր հովանու ներքո Ստեփանակերտում անցկացվեց բարձրագույն կրթության հիմնախնդիրներին նվիրված աշխատաժողով: Աշխատաժողովին մասնակցեցին Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, ՀՀ և ԱՀ կրթության և գիտության նախարարներ Լևոն Մկրտչյանը, Սլավիկ Ասրյանը, Հայաստանի և Արցախի համալսարանների ռեկտորներ, կրթության և գիտության բնագավառի առաջատար հետազոտողներ: Ժամանակակից կրթության հրատապ հարցերի պատասխանների որոնումն ընթացավ գիտությունների համադրմամբ, տարբեր գիտական ուղղությունների ներկայացուցիչների, ինչպես նաև բնագավառի պատասխանատու պաշտոնյաների մասնակցությամբ: Աշխատաժողովի առանցքային թեման արտացոլում էր բարձրագույն կրթության զարգացման արդի միտումները և ուղղված էր ժամանակակից համալսարանների համընդհանրական խնդիրների և դրանց ազգային ու տարածաշրջանային առանձնահատկությունների բացահայտմանը: Քննարկումները կազմակերպվեցին տարբեր ուղղություններով, ինչը հնարավորություն ընձեռեց ընդգրկելու համալսարանի գործունեության բազմաթիվ կողմեր.

1) *բարձրագույն կրթության պետական կարգավորում և բուհերի ինքնավարություն,*
2) *կրթության որակ,*
3) *արժեհամակարգ:*

Այդ ուղղությունների շրջանակներում ծավալվեցին քննարկումներ ՀՀ և ԱՀ բարձրագույն կրթության համակարգերին բնորոշ հիմնախնդիրների շուրջ:

Ժողվածուում ներառվել են ԱՀ նախագահի, ՀՀ և ԱՀ կրթության և գիտության նախարարների ողջույնի խոսքերը, ՀՀ և ԱՀ համալսարանների ռեկտորների ներածական ելույթները, ինչպես նաև աշխատաժողովի մասնակիցների զեկույցները:

Հուսով ենք, որ ներկայացված նյութերը կնպաստեն աշխատաժողովում սկիզբ առած քննարկումների շարունակմանը և մեկնակետ կդառնան ինչպես առանձին համալսարանների, այնպես էլ, ընդհանուր առմամբ, ՀՀ և ԱՀ բարձրագույն կրթության համակարգերի զարգացման խնդիրները լուծելու համար:

Կազմակերպական կոմիտեն շնորհակալություն է հայտնում աշխատաժողովի մասնակիցներին, ովքեր ներկայացրին բովանդակալից զեկույցներ հրատապ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ, աշխատաժողովի ընթացքում ակտիվ մասնակցեցին քննարկումներին: Համոզված ենք՝ աշխատաժողովը գիտելիքների և փորձի փոխանակման հիանալի հնարավորություն էր:

Աշխատաժողովի կազմակերպական կոմիտե

ՍԼԱՎԻԿ ԱՍՐՅԱՆ
ԱՀ ԿԳՄ նախարար

Արցախի Հանրապետության մեծարգո՛ նախագահ, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության հարգարժա՛ն նախարար, հարգելի՛ հյուրեր, մասնակիցնե՛ր

Թույլ տվեք ողջունել աշխատաժողովի՝ Հայաստանից ժամանած մասնակիցներին և ասել, որ աշխատաժողովի կազմակերպման գաղափարը ծնվեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր պարոն Աթոյանի և ԼՂՀ նախագահի հանդիպման ժամանակ, երբ նախանշվեցին ոլորտի որոշ հիմնախնդիրներ, որոնք լուծում են պահանջում: Պարոն Աթոյանի նախաձեռնությամբ էլ կազմակերպվեց աշխատաժողովը: Արցախի պետական համալսարանը և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը նախանշեցին այն հարցերի շրջանակը, որոնք դարձան քննարկման առարկա:

Հետպատերազմյան տարիներին, երբ արդեն չկար Խորհրդային Միությունը, չկար կենտրոնացված համակարգ, ՀՀ-ում և Արցախում կարիք կար օրենսդրական դաշտի կարգավորման. ընդունվեցին «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքները և բազմաթիվ ենթաօրենսդրական ակտեր:

Ժամանակի պահանջն էր ինտեգրվել Բոլոնիայի եվրոպական գործընթացին, և Լեռնային Ղարաբաղը ևս հետևողական եղավ՝ իր մասնակցությունն ունենալով դրան: Երբ ՀՀ կրթության և գիտության նախարարությունն էր ղեկավարում Բոլոնիայի գործընթացը, կայացան

բավական թվով միջոցառումներ. Արցախում՝ միջազգային գիտաժողով «Կրթությունն առանց խտրականության» խորագրով, որտեղ հնչեցին արդիական հարցեր, առաջարկություն եղավ Արցախի՝ Բոլոնիայի գործընթացին միանալու վերաբերյալ, սակայն, բոլորիս հայտնի պատճառներով, դա հնարավոր չէր:

Ցանկանում եմ նաև շեշտել, որ ԼՂՀ բուհերը համագործակցում են արտասահմանյան մի շարք բուհերի, ինչպես նաև ՀՀ բուհերի հետ. միայն համագործակցությամբ կարող ենք ապահովել կադրային ներուժ և առաջ տանել կրթական ոլորտը:

Տարեկան 60 նպատակային տեղեր են հատկացվում Արցախին Հայաստանի Հանրապետության տարբեր բուհերում, նաև 30 տեղ՝ մագիստրատուրայում, 5-ը՝ ասպիրանտուրայում: Մենք՝ կրթական ոլորտի ներկայացուցիչներս, համագործակցելով և միմյանց խնդիրներին լավ ծանոթանալով, կկարողանանք նպաստել պետության խնդիրների լուծմանը: Բարձրագույն կրթությունը որպես ներփակ համակարգ դիտարկելը ճիշտ չէ, որովհետև ողջ կրթական համակարգը պետք է գործի՝ սկսած նախադպրոցականից մինչև հետբուհական կրթություն. այս օղակները սերտորեն փոխկապված են և լրացնում են միմյանց: Բուհը լիարժեք կաշխատի, եթե դպրոցից ստանա գրագետ շրջանավարտներ, և մենք էլ կկարողանանք բուհն ավարտած խելացի մասնագետներով ապահովել կրթօջախները: Եվրոպական կրթական եռաստիճան համակարգը գործում է բոլոր բուհերում, և դրանք, այո՛, կարևոր են որակյալ մասնագետներ ունենալու առումով. դա տարիների քրտնաջան գործունեության արդյունք է: Համոզված ենք, որ համագործակցության շնորհիվ կհասնենք մեծ արդյունքների:

ԲԱԿՈ ՍԱՀԱԿՅԱՆ
ԱՀ նախագահ

Աշխատաժողովի հարգարժա՛ն մասնակիցներ, հարգելի՛ ներկաներ

Բարձրագույն կրթության հիմնախնդիրների շուրջ նման ներկայացուցչական միջոցառման կազմակերպումն Արցախում կարևոր է ու պահանջված:

Մեր երկրի ամենամեծ հարստությունը մեր ժողովուրդն է, նրա մտավոր ներուժը: Այդ ռեսուրսն իսկապես անսպառ է:

Եվ պատահական չէ, որ կրթության ու գիտության ոլորտը որակվել է որպես ռազմավարական նշանակություն ունեցող ուղղություն մեր հանրապետության զարգացման հայեցակարգում:

Տարեցտարի աճում են կրթության բնագավառին հատկացվող պետական միջոցները: Արցախում գործում են մի շարք հաստատություններ, որոնց ուսուցման պայմանները համապատասխանում են միջազգային չափանիշներին: Դրանց մի մասը նորակառույց է:

Հատուկ ուշադրություն է դարձվում նաև փորձի փոխանակման խնդիրներին: Ողջունելի է, որ հետևողականորեն ավելանում է մայր Հայաստանի առաջատար բուհերից Արցախի պետական համալսարան և այլ կրթական հաստատություններ հրավիրված դասախոսների ներգրավվածությունը ուսումնական գործընթացում: Դա մեծապես նպաստում է դասավանդման որակի բարձրացմանը և գիտակրթական ժամանակակից մեթոդներին ծանոթացմանն ու դրանց կիրառմանը:

Կարևոր ենք համարում նաև աշխարհի առաջատար բուհերում ուսում ստանալու հարցում մեր երիտասարդներին պետական աջակցության ցուցաբերումը: Վերջին տարիներին տասնյակ արցախցի ուսանողներ ընդգրկվել են այդ ծրագրերում:

Ձեռքբերումների հետ մեկտեղ կան նաև բազմաթիվ անելիքներ և լուծում պահանջող խնդիրներ:

Դա բարձրագույն կրթության որակի մակարդակի բարձրացումն է, բուհերի նյութատեխնիկական բազայի և լաբորատոր պայմանների բարելավումն ու արդիականացումը, գիտակրթական ներուժի կիրարկումը տնտեսության տարբեր ճյուղերում և այլն:

Ակնհայտ է, որ Արցախը միայնակ չի կարող արդյունավետորեն լուծել նշված բոլոր խնդիրները: Ինչպես ռազմավարական կարևորագույն այլ ծրագրերի իրականացման գործում, այստեղ ևս մենք զգում ենք մայր Հայաստանի և Սփյուռքի աջակցության կարիքը: Առավել ևս, որ գիտության և կրթության ոլորտը Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության ամրապնդման գործուն ուղիներից է՝ հատկապես գլոբալացման ներկա ժամանակահատվածում:

Այս տեսանկյունից շատ կարևոր է նման միջոցառումների իրականացումը: Թեմաներն ու հարցերը, որոնք կքննարկվեն և կարծարծվեն աշխատաժողովի ժամանակ, կապված են կրթական ոլորտում առկա մի շարք հիմնախնդիրների հետ:

Ուզում եմ վստահ լինել, որ համաժողովը կհասնի իր առջև դրված նպատակներին:

Բոլորիդ մաղթում եմ հաջողություններ աշխատանքում և ամենայն բարիք:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ
ՀՀ ԿԳ նախարար,
պ.գ.թ., դոցենտ

Արցախի Հանրապետության մեծարգո՛ նախագահ, պարո՛ն նախարար, հարգելի՛ գործընկերներ

Թույլ տվեք ողջունել այս աշխատաժողովը, որի թեմատիկան շատ կարևոր և համահունչ է այսօրվա մեր քաղաքական և ուսումնական հիմնախնդիրներին, որ առաջացել են կրթության և գիտության ոլորտում: Պարո՛ն նախագահ, շատ շնորհակալ ենք, որ Ձեր ուշադրության կենտրոնում եք պահում կրթության և գիտության ոլորտը, որովհետև խոր համոզմունք ունենք, որ մեր հիմնական զենքը, որ պետք է առաջ տանի Հայաստանն իր բարդ տարածաշրջանային խնդիրները լուծելու ճանապարհին, մեր գիտական ու կրթական ներուժն է:

Շատ կարևոր հարցերի պատասխաններ պետք է բոլորս որոնենք. առաջինը՝ ինչ ունենք, երկրորդը՝ ինչ պիտի հաղթահարենք և ինչ անենք:

Իմ խորին համոզմամբ մենք պետք է ելնենք այն հիմնադրույթից, որ Հայաստանի կրթական և գիտական համակարգերը պետության հիմնական գործիքներն են. բանակի, մշակույթի և մի քանի այլ հզոր գործիքների միջոցով պետությունն ապահովում է իր անկախությունը: Եվ, այս իմաստով, մենք պետք է մեր բարեփոխումները դիտարկենք այդ տեսանկյունից: Ինչպես անենք, որ առկա ներուժը նպատակաուղղվի մեր երկրի առջև ծառացած հիմնախնդիրների լուծմանը՝ մեր ժողովրդի համար ստեղծելով թռիչքաձև զարգացման հնարավորություն: Սա ուղղակի պահանջ է, և, գտնվելով այստեղ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, դա զգում ես ամեն օր: Պետք է հասկանանք՝ ինչ արդյունքներ ունենք:

Առաջինը՝ պարոն նախարարը ճիշտ ասաց, որ ունենք միջազգայնորեն ընդունելի համակարգ. այն ճանաչված է և ընթեռնելի: Մենք եվրոպական կրթական դաշտում ենք: Բոլոնիայի գործընթացի մշտադիտարկման արդյունքներով Հայաստանի Հանրապետության գիտակրթական, բարձրագույն և մասնագիտական կրթության համակարգերը ԱՊՀ տարածքում առաջնային դիրքերում են, առաջիններից ենք նաև Արևելյան և Արևմտյան Եվրոպայի կրթական համակարգերում: Սա հենց իրենց գնահատականն է:

Երկրորդ կարևոր խնդիրը, որ մենք ունենք, հետևյալն է. Հայաստանի փոքրությունը մեր առավելությունն է դառնում, որովհետև ունենք 90-95 հազ. ուսանողություն, սակայն 66 բուհ, որն անթույլատրելի է կառավարման տեսակետից: Գիտեմ, որ ԼՂՀ-ում էլ կա այդ խնդիրը, այսինքն՝ առկա է կառավարման լուրջ հարց: Եվ մեկ այլ կարևոր հարց. այս տարի բակալավրիատն ավարտածների 90%-ը հումանիտար մասնագիտությամբ են: Այսինքն՝ եթե այս ճանապարհով գնանք, աստիճանաբար կվերածվենք ընդամենը սպասարկող երկրի՝ տարբեր տիպի հումանիտար և զբոսաշրջային ծառայություններ մատուցող երկրի: Ստեփանակերտում էլ մենք արմատապես պետք է փոխենք իրավիճակը և տոկոսային հարաբերակցությունը հակառակը շրջենք, քանի որ մարտահրավերները շարունակվելու միտում ունեն, և մենք իրավունք չունենք գիտությունը կորցնելու:

Սա է պատճառը, որ բարձրագույն կրթական համակարգում պետք է տարանջատենք և հստակեցնենք համալսարաններին առաջադրվող խնդիրները: Համալսարանները պետք է վերադառնան համալսարան – ինստիտուտ ուղղվածության իրենց ձևաչափին: Յուրաքանչյուր համալսարան պետք է հետևի իր առաքելությանը: Մայր համալսարանները (ԵՊՀ, ԱրՊՀ) պետք է կատարեն իրենց առաքելությունն ամբողջ երկրում, իսկ ուղղվածություն ունեցող համալսարանները՝ մնան իրենց առաքելության շրջանակներում:

Երեկ նախագահի հետ զրույցում շատ հետաքրքիր մտքեր ծագեցին՝ կարելի է տարածաշրջանային քլաստերներ ստեղծել:

Օրինակ՝ առաջինը կարելի է հարավային ցանց ստեղծել, որը կմիավորի Արցախի, Գորիսի, Կապանի ուսումնական հաստատությունները, և Ստեփանակերտը կդառնա հարավային գիտակրթական կենտրոն, որը կունենա կարևորագույն նշանակություն:

Մոտենում է ԼՂՀ-ում գործնական որոշակի ծրագրերով հանդես գալու պահը, և այդ ներկայությունը պետք է ճկուն լինի: Նոր օրենքով համալսարաններին կտրվի մեծ ինքնավարություն՝ պետությանը թողնելով խաղի կանոնները սահմանողի դերը:

Ես կրկին շնորհավորում եմ մեզ այս աշխատաժողովի առթիվ և ցանկանում, որ նման միջոցառումներ Ստեփանակերտում հաճախ լինեն:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ ԵՎ ԱՀ-ՈՒՄ

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր,
փ.գ.դ., պրոֆեսոր

Արցախի Հանրապետության մեծարգո՛ նախագահ, աշխատաժողովի հարգարժա՛ն մասնակիցներ

Թույլ տվեք Ձեր քննարկմանը ներկայացնել բարձրագույն կրթության որակի ապահովմանն առնչվող համահավաք հիմնախնդիրները, որոնց առանձին դրույթներին դեռ կանդրադառնան մեր գործընկերները: Ուշագրավ է, որ բարձրագույն կրթության նկատմամբ հետաքրքրությունն անկում է ապրում ոչ միայն մեր, այլև զարգացած տնտեսություններ ունեցող երկրներում, ինչի հիմնական պատճառը տեխնոլոգիական սրընթաց վերափոխումներն ու աշխատաշուկայի կառուցվածքային տեղաշարժերն են: Թերևս հենց այս խնդիրը լուծելու անհրաժեշտությամբ է պայմանավորված զարգացած տնտեսություններում բարձրագույն կրթության ոլորտում որակի համընդհանուր կառավարման վրա այդչափ մեծ կենտրոնացումը:

Փաստ է, որ կրթության բնագավառում որակի բարձրացումը մշտապես եղել և շարունակում է մնալ ոլորտի պատասխանատուների ուշադրության կենտրոնում, սակայն, ցավոք, փաստ է նաև, որ այս ուղղությամբ դեռևս հնարավոր չի եղել բեկում կատարել: Ըստ այդմ, կարևորելով ՀՀ կրթության ոլորտում թափ հավաքող բարեփոխումների առաջնահերթությունները և ելնելով այս բնագավառում ձևավորված իրողություններից, ինչպես նաև կրթության միջազգայնացման, հետազոտական համալսարանների կայացման, կրթություն–աշխատաշուկա կայուն կապերի ձևավորման և կրթության որա-

կի հետևողական բարելավման մարտահրավերներից, մենք նույնպես կարևորել ենք առկա հիմնախնդիրների քննարկումը:

Հատկանշական է, որ ոլորտում գոյություն ունեցող խնդիրներն ունեն խոր արմատներ և պայմանավորված չեն բացառապես համակարգի կառավարման դրվածքով: Դրանք կապված են հասարակության կողմից կրթության՝ իբրև բարիքի արժևորման կարծրատիպերի, բուհերի ինստիտուցիոնալ կայացման ոչ բավարար աստիճանի, երբեմն արտաքին իրողություններից կտրվածության, կրթական գործընթացին արտաքին շահառուների սահմանափակ մասնակցության, դասախոսակենտրոն փիլիսոփայության տարածվածության ու բազմաթիվ այլ ներքին խնդիրների հետ, որոնք հաճախ քողարկվում են հենց բուհերի կողմից: Մյուս կողմից՝ դրանք պայմանավորված են ոլորտի կարգավորման գործող մեխանիզմների ոչ բավարար արդյունավետությամբ, հեռանկարային զարգացման միասնական տեսլականի ու ապագային միտված ռազմավարական պլանավորման բացակայությամբ:

Այս համատեքստում կարևոր է վերլուծել այն հիմնական խնդիրները, որոնք առկա են բարձրագույն ուսումնական հաստատություններում և խոչընդոտում են բարձրորակ կրթական ծառայությունների մատուցման գերխնդրի լուծմանը: Հատկանշական է, որ քննարկման ներկայացվող խնդիրների լուծումը ոչ միայն առանձին բուհերի առաքելությունն է, այլև սերտորեն փոխկապակցված է ոլորտը կարգավորող լիազոր մարմնի գործունեության, հասարակության և, մասնավորապես, կրթական գործընթացի մասնակիցների արժեհամակարգի, կայացած աշխատաշուկայի և բարձրագույն կրթության այլ շահառուների ակտիվ ներգրավվածության հետ: Հարկ է նշել, որ առանց կրթական գործընթացի բոլոր սուբյեկտների համատեղ և համակարգված ջանքերի, կրթական խնդիրների լուծման և որակի բարձրացման հարցերում հաջողությունների գրանցումը, թերևս, անհնարին է:

Կցանկանայինք հատուկ շեշտադրել, որ այս խնդիրների լուծումը պահանջում է մեր կրթական համակարգում առավել խորքային ու համակարգված վերլուծությունների իրականացում: Դա հնարավորություն կընձեռի բացահայտելու և օբյեկտիվորեն վեր հանելու առկա ակնհայտ և քողարկված խնդիրներն ու դրանց առաջացման պատճառները: Մյուս կողմից՝ դա հնարավորություն կտա նաև գնահատելու մեզ առաջարկվող արտերկրի փորձը կրթական համակարգում ներդնելու հնարավորությունները և կանխատեսելու դրանց ներդրման հետևանքները: Այլապես մենք շարունակաբար փորձելու ենք համա-

դրել անհամադրելին: Երբ զարգացած երկրների հետ նույնական կրթական միջավայր, բուհերի համադրելի ինստիտուցիոնալ կարողություններ ու ֆինանսավորման մեծություն, միմյանց գործունեության գնահատման, վերահսկման ու ինքնակարգավորման զարգացած մշակույթ, կայացած և հասուն աշխատաշուկա, ինչպես նաև բարձրագույն կրթության գիտակցված ընտրության ընկալում չկա, սակայն մեր բուհական համակարգում ներդնում ենք այդ չափանիշներով առաջ շարժվող երկրների մոտեցումներն ու չափորոշիչները, չենք կարող ակնկալել միևնույն որակն ու արդյունքները:

Բուհական կրթության որակի բարելավման ամենաառանցքային խնդիրներից կարելի է համարել հասարակության արժեհամակարգի փոփոխությունը և ակադեմիական անազնվության դրսևորումները բուհերում: Ցավով պետք է արձանագրենք, որ ուսուցչի և դասախոսի նկատմամբ հասարակության մեջ ձևավորված նախկին պատկառանքը տարիների ընթացքում զգալի հետընթաց է ապրել: Դրան նպաստել են բազմաթիվ գործոններ: Կրթության համակարգի պարբերական քննադատությունը, լրատվական դաշտում ուսուցիչներին, բուհերին մեղադրող տեղեկատվական հոսքի առատությունը բացասական վերաբերմունք են ձևավորել այս ինստիտուտի նկատմամբ: Մյուս կողմից՝ ասպիրանտական կրթությունը հիմնականում բանակից խուսափելու համար օգտագործողների մեծ տեսակարար կշիռը, դասախոսների մարդկային կապիտալում ներդրումների սուղ միջոցները հնարավորություն չեն տալիս բեկում մտցնելու դասավանդման գործընթացում որակյալ կադրերի ներգրավման քաղաքականության մեջ: Իսկ բուհերում ոչ նյութական խրախուսման համակարգերի բացակայությունը սահմանափակել է կրթական գործընթացում դասավանդողի և ուսումնառողի ոգևորվածությունը, ինչպես նաև ապագայում ամբողջովին ներդրման շահադրդվածությունը: Խնդիրն ավելի է սրվում ակադեմիական անազնվության դրսևորումների համապատկերում, ինչի առաջացման բարենպաստ միջավայր բուհական համակարգում, ցավոք, առկա է մինչև օրս: Արտագրությունների և հետազոտական աշխատանքն այլոց պատվիրելու լայն հնարավորությունը, տարբեր բնույթի համաձայնությունները, դասավանդողների կողմից սուբյեկտիվության և ոչ պատշաճ վարքագծի դրսևորումները, ի վերջո, հանգեցնում են հասարակության կողմից կրթության կարևորման աստիճանի ու որակի անկման:

Կարծում ենք՝ կրթության որակի ապահովման մյուս առանցքային խնդիրը ոլորտում մրցակցության անհավասար պայմանների առ-

կայությունն է, ինչը բացասաբար է անդրադառնում կրթական համակարգի արդյունավետության վրա: Մասնավորապես՝ բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող իրավական նորմերին տարբեր աստիճանով ենթարկվելու հանգամանքը բուհերի միջև անհավասար մրցակցության նախապայմաններ է ստեղծում: Այդ պարագայում հատկապես միջազգային կրթական հաստատությունները մրցակցային առավելություններ են ստանում, քանի որ կրթական գործընթացի ամբողջ շղթան իրենց հայեցողությամբ կազմակերպելու հարցում անհամեմատ ազատ են: Դա վերաբերում է ինչպես կրթական ծրագրերի կառուցմանը, այնպես էլ դիմորդների և դասավանդող անձնակազմի ընտրությանը, նրանց ուսումնական բեռնվածության նորմերի սահմանմանը, բուհերի միջոցների հաշվին ուսման վարձերի սահմանված զեղչերի կիրառման ազատությանը, գնումների իրականացմանը և այլն:

Կրթության որակի ապահովմանը վերաբերող մյուս խնդիրն այն է, որ, ցավոք, մեր բուհերից շատերը և հատկապես պետական բուհերը առավելապես ընկալվում են իբրև փնտրեսական, այլ ոչ թե կրթական գործունեություն ծավալող հաստատություններ: Այս ընկալումն էլ պայմանավորում է ոլորտի կարգավորման, վերահսկողության սահմանման սկզբունքները: Գործնականում Հայաստանի բուհերի գործունեության վերահսկողությունը առավելապես կենտրոնացած է ընթացակարգային, այլ ոչ թե բովանդակային, ծրագրային խնդիրների վրա: Եթե բուհերի գնումների գործընթացը, զեղչման մեխանիզմները, վարձավճարի սահմանաչափերը և տնտեսական գործունեության մյուս ուղղությունները գտնվում են մշտադիտարկման գործընթացում, ապա կրթական ծրագրերը մինչ օրս հավատարմագրված չեն: Բուհերը մինչև վերջերս առաջնորդվել են բացառապես կրթական չափորոշիչներով: Դա այն դեպքում, երբ, սկսած 2005 թվականից, Կառավարության մի շարք որոշումներում ամրագրված է կրթական ծրագրերի բովանդակությունը եվրոպական չափանիշներին և աշխատաշուկայի ներկա պայմաններին համապատասխանեցնելու պահանջը: Ավելին, այս ուղղությամբ ընթացիկ վերահսկողություն գրեթե չի իրականացվել: Մինչև 2015 թվականը իբրև բարձրագույն կրթության մասնագիտություններ հաստատվել է հիմնականում այն ամենը, ինչը որ պետական բուհերը ներկայացրել են, վերջիններիս տրամադրվել են տարբեր մասնագիտություններով կրթական ծրագրեր իրականացնելու արտոնագրեր հիմնականում ուսումնական, այլ ոչ թե կրթական ծրագրի հիման վրա, բուհերին հատկացվել է այնքան կրթական տեղ, որ-

քան հայցել են՝ առանց անդրադառնալու նպատակահարմարությանը: Արդյունքում՝ բուհերը ուսումնական ծրագրում ներառել են դասընթացներ, որոնք որևէ կերպ միտված չեն բարձրորակ մասնագետի պատրաստմանը, ստացել են աշխատաշուկայի պահանջարկն էականորեն գերազանցող քանակով կրթական տեղեր, իրականացրել են առկա իրողություններից և սահմանված պահանջներից կտրված կրթական գործունեություն:

Պակաս կարևոր խնդիր չէ նաև բուհերի հավատարմագրման գործող չափանիշների փոփոխությունը և դրանցում հեռանկարային կայունությունը փաստող ռազմավարական ցուցիչների ներառումը: Փաստ է, որ հավատարմագրման ներկայիս չափորոշիչները չեն նպաստում բուհերի ռազմավարական զարգացման խոչընդոտների բացահայտմանը և ուղենիշների հստակեցմանը: Բուհերի կրթական ծրագիր իրականացնելու ունակությանը վերաբերող մեղմ պահանջները, բուհերի և կրթական ծրագրերի հավատարմագրման հստակ չափելի ռազմավարական ցուցիչների և մեթոդաբանության բացակայությունը ո՛չ բուհին, ո՛չ էլ ոլորտը կարգավորողին հնարավորություն չեն ընձեռում նախապես գնահատելու տվյալ կրթական ծրագիրն իրագործելու բուհի իրական ունակությունը, ինչպես նաև ինստիտուցիոնալ կարողությունների միջնաժամկետ ու երկարաժամկետ կայունությունը: Ցավոք, գործող մեթոդաբանությունը հնարավորություն չի տալիս ընթացիկ գնահատման միջոցով բացահայտելու բուհերի խոցելի կողմերը և քայլեր ձեռնարկելու դրանց վերացման ուղղությամբ:

Ոլորտի մյուս առանցքային խնդիրը բարձրագույն կրթությամբ մասնագետների նկատմամբ գործատուների ոչ հստակ և ոչ հասցեական պահանջների առկայությունն է: Աշխատաշուկայում մասնագետների նկատմամբ հստակ աստիճանական պահանջների բացակայության պայմաններում բարձրագույն կրթություն պահանջող հաստիքներով կարող են աշխատել ոչ միայն լավ կամ վատ առաջադիմություն ունեցող, այլև մասնագիտական կրթություն ունեցող ու չունեցող, ընդհանրապես բարձրագույն կրթություն ունեցող ու չունեցող անձինք:

Հանրակրթության ոլորտում մասնագիտական կողմնորոշման ինստիտուտի, ինչպես նաև բուհական համակարգում օբյեկտիվ և վստահություն ներշնչող վարկանշային համակարգի բացակայությունը նույնպես էապես խոչընդոտում է դիմորդների՝ իրենց ունակություններին համապատասխան մասնագիտություններ և որակյալ բուհեր ընտրելու հնարավորությունը: Ավանդաբար հայկական ընտանիք-

ները հակված են երեխային բարձրագույն կրթություն ստանալու հնարավորության ընձեռմանը: Սակայն դպրոցներում բացակայում է մասնագիտական կողմնորոշման ինստիտուտը, ինչի պատճառով անձը մասնագիտությունն ընտրում է ոչ թե ապագայում աշխատաշուկայում ինքնաիրացման հնարավորությունների գնահատման հիման վրա կամ նախորդող կրթության ընթացքում ձեռք բերած հմտություններին համապատասխան, այլ, ելնելով այլոց խորհուրդներից կամ մասնագիտության հեղինակությունից (բրենդային լինելուց), որը հաճախ չի համապատասխանում ուսումնառողի կարողություններին, իրական նախասիրություններին և հեռանկարում որևէ աճի հնարավորություն չի ընձեռում: Նույնկերպ՝ կրթական ծրագիր իրականացնող բուհն ընտրվում է ոչ թե ինստիտուցիոնալ կարողություններից կամ կրթական ծառայությունների որակից ելնելով, այլ ավանդաբար ձևավորված կարծրատիպաբրենդային ընկալումներով, ինչը հաճախ հիասթափության և ուսումնառության գործընթացում ներդրման ցանկության նվազեցման պատճառ է դառնում:

Բուհերի բյուջեներում ուսման վարձի ընդգծված մեծ տեսակարար կշիռն ամենալուրջ խնդիրներից է, որի հետևանքով բուհը չի կարողանում ընտրանքային գործառույթ իրականացնել, քանի որ վերանում են ցածր ունակություններ ունեցող ուսումնառողներից ազատվելու դրդապատճառները, մանավանդ որ մի ստվար զանգվածի նկատմամբ առկա է հովանավորչություն (բարեխոսություններ): Վատ ուսանողներից ազատվելը կարող է բազմաթիվ բուհերի սնանկացման պատճառ դառնալ, քանի որ վերջիններս, բացի ուսման վարձից, ֆինանսավորման այլ աղբյուր իրականում չունեն: Համեմատության համար նշենք, որ ամերիկյան և եվրոպական բուհերի բյուջեների ընդամենը 17-30%-ն է ձևավորվում ուսման վարձից (ներառյալ՝ արտասահմանցի ուսանողներին), ռուսական առաջատար բուհերում՝ մինչև 60%-ը, հայկական բուհերում՝ 60-90%-ը: Որակյալ կրթական համակարգ ունեցող երկրներում բուհերի ֆինանսավորման աղբյուրները բազմազան են. ներառում են նաև մասնավոր հիմնադրամների (էնդաումենտ) նվիրատվություններ, տարաբնույթ դրամաշնորհներ, պետական և մասնավոր պատվերներ, ինչպես նաև գործունեության այլ ձևեր: Ռուսաստանում փորձ է արվում հարցը կարգավորելու պետական պատվերի և նվազ չափով մասնավոր պատվերի շրջանակներում գիտական արտադրանքի ձևավորմամբ, Չինաստանում՝ պարզ պետական ֆինանսավորմամբ:

ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ
ԵՊՀ ռեկտոր,
պ.գ.դ., պրոֆեսոր

ՀՀ բարձրագույն կրթության ոլորտը կարգավորվում է երկու հիմնական՝ «Կրթության մասին» շրջանակային (1999 թ.) և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» (2004 թ.) օրենքներով: Բարձրագույն կրթության առանձին ոլորտներ (որակի ապահովում, որակավորումների ազգային շրջանակ, ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգ, ուսանողների շարժունություն և այլն) կանոնակարգվում են մի շարք ենթաօրենսդրական նորմատիվ ակտերով ևս:

Հայաստանում ներկայումս գործում է 71 բարձրագույն ուսումնական հաստատություն. 27-ը պետական բուհեր են (որոնցից 7-ը միասին ունեն 14 մասնաճյուղ), 31-ը՝ ոչ պետական բուհեր, 5-ը՝ պետական մասնակցությամբ արտասահմանյան բուհեր, 5-ը՝ արտերկրի պետական բուհերի մասնաճյուղեր, 3-ը՝ արտերկրի ոչ պետական բուհերի մասնաճյուղեր: Բուհերի մոտ 80%-ը գտնվում է Երևանում:

Այժմ պետական և ոչ պետական բուհերում սովորողների ընդհանուր թիվը բարձրագույն կրթության բոլոր 3 աստիճաններում կազմում է շուրջ 100 հազար, որից վճարովի ուսուցման համակարգում սովորում է ուսանողների 85%-ը, իսկ անվճարում՝ 15%-ը: Ընդ որում, առաջին աստիճանում (բակալավր և դիպլոմավորված մասնագետ) սովորողների թիվը մոտ

84 հազար է, երկրորդ աստիճանում (մագիստրոս)՝ 14,8 հազար, իսկ երրորդ աստիճանում (ասպիրանտուրա և դոկտորանտուրա)՝ 1,2 հազար: Ուսանողների ընդհանուր համակազմի մոտ 67%-ը սովորում է առկա, իսկ 33%-ը՝ հեռակա ուսուցման համակարգում: Ներկայումս Հայաստանում բարձրագույն կրթությունն իրականացվում է 10 մասնագիտական ոլորտներում՝ 112 մասնագիտություններով: Պետական և ոչ պետական բուհերի դասախոսների ընդհանուր թիվը մոտ 12 հազար է, որի 85%-ն աշխատում է պետական բուհերում:

ԻՐԱՎԻՃԱԿԸ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

1. Որակավորումների համակարգ

Ներդրվել է որակավորումների եվրոպական շրջանակին համապատասխանող եռաստիճան համակարգ՝ հետևյալ որակավորումներով.

- առաջին մակարդակում՝ բակալավրի որակավորում 4 տարի ուսման տևողությամբ,
- երկրորդ մակարդակում՝ մագիստրոսի որակավորում 2 տարի ուսման տևողությամբ,
- երրորդ մակարդակում՝ գիտությունների թեկնածուի որակավորում՝ 3 տարի տևողությամբ:

Կրթության միջազգային դասակարգիչներին համապատասխան՝ մշակվել և 2014 թ. Կառավարության կողմից հաստատվել է ՀՀ բարձրագույն կրթության մասնագիտությունների և որակավորումների նոր ցանկը, որը հնարավորություն կտա բարձրացնելու ՀՀ-ում շնորհված որակավորումների միջազգային համադրելիության և ճանաչելիության աստիճանը:

Առկա հիմնախնդիրները.

– *Ցածր է բարձրագույն կրթության որակավորումների և կրթական ծրագրերի՝ աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխանության աստիճանը, գործատուները լիարժեք կերպով ներգրավված չեն կրթական ծրագրերի փորձաքննության և արդիականացման գործընթացներում: Այս և բազմաթիվ այլ խնդիրներ պայմանավորված են նրանով, որ դեռևս չեն արժանացել պետական անհրաժեշտ հոգածության: Կրթության զարգացման 2011-2015 թթ. պետական ծրագրով հռչակված ռազմավարական ուղղությունը՝ նպաստել բուհերի և գործատուների փոխգործակցությանը, սովորողներին փալ*

մասնագիտական ուղղորդում և լուծել զբաղվածության խնդիրը, հեռու է իրագործելի լինելուց:

- *Դեռևս բավարար մակարդակի վրա չեն շրջանավարտների զբաղվածության ցուցանիշները, ինչը, ի մասնավորի, բացատրվում է աշխատաշուկայի անկատարությամբ:*
- *Կրթական ծրագրերի ստեղծման մոտեցումները վերանայման կարիք ունեն՝ ելակետ ունենալով աշխատաշուկայի արդի պահանջները:*
- *Մագիստրոսական որակավորումները և կրթական ծրագրերը դեռևս լիարժեքորեն կայացած չեն:*

2. Որակի ապահովում

ՀՀ բարձրագույն կրթության որակը եվրոպական չափորոշիչներին համապատասխանեցնելու նպատակով ՀՀ Կառավարությունը 2011 թ. հաստատել է բուհերի և դրանց մասնագիտությունների հավատարմագրման կարգը և չափանիշները: Ըստ այդմ՝ որպես որակի արտաքին ապահովման հիմնական գործընթաց է սահմանվել պարտադիր ինստիտուցիոնալ և կամավոր ծրագրային հավատարմագրումը:

Հավատարմագրման գործընթացների կազմակերպումը և իրականացումը վերապահված են մասնագիտական կրթության Որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամին (ՈԱԱԿ): Ինստիտուցիոնալ կամ ծրագրային հավատարմագրում անցնելու համար ՀՀ բուհերը կարող են դիմել նաև բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ռեգիստրում գրանցված, ինչպես նաև Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ընկերակցության լիիրավ անդամ հանդիսացող միջազգային հավատարմագրող կազմակերպություններին:

Առկա հիմնախնդիրները.

- *Դեռևս կյանքի չի կոչվել կրթական ծրագրերի որակի ապահովման և ուսումնառության ու դասավանդման որակի բարելավման կարևորագույն մեխանիզմներից մեկը՝ ծրագրային հավատարմագրումը:*
- *Թույլ են ուսանողների, շրջանավարտների և հատկապես գործատուների հետ հետադարձ կապի մեխանիզմները, վերջիններս ներգրավված չեն բուհերի որակի ապահովման գործընթացներում***:**

3. Կառավարում և ինքնավարություն

Համաձայն Եվրոպական համալսարանական ընկերակցության (EUA) կազմած բուհական ինքնավարության վարկանշային աղյուսա-

կի՝ ՀՀ պետական բուհերը եվրոպական բուհերի շարքում համեմատաբար բարվոք դիրք են զբաղեցնում: Այսպես՝ կազմակերպական և ակադեմիական ինքնավարության առումով, մեր բուհերը «միջին ստորին» դիրք են գրավում, մինչդեռ կադրային և ֆինանսական ինքնավարության տեսանկյունից գտնվում են «միջին բարձր» մակարդակում: Այդքանով հանդերձ, բուհերի կառավարման խորհուրդներում ՀՀ Կառավարության և կրթության ու գիտության նախարարության շոշափելի ներգրավվածությունը (անդամների 50%-ը) հակադրվում է եվրոպական առաջատար բուհերում ընդունված այն իրողությանը, ըստ որի վերջիններս իրենք են ընտրում իրենց խորհուրդների արտաքին անդամներին:

Այն համակարգերը, որտեղ արտաքին անդամներն ընտրվել են բուհերի կողմից և ներգրավվել ղեկավար մարմինների աշխատանքներում, մի քանի տարվա ընթացքում արձանագրել են դրական փոփոխություններ: Այն երկրներում, որտեղ այս ընթացակարգն առավել զարգացած է, արտաքին անդամներն ընտրվում են հատուկ ռազմավարությամբ՝ հաճախ այդ նպատակով ստեղծված որոնման հանձնաժողովների կողմից: Ընտրվելուց հետո այս անդամները ներածական ընդհանուր դասընթաց են անցնում՝ հարմարվելով տվյալ ակադեմիական միջավայրի առանձնահատկություններին:

Բուհերի ինքնավարության ընդլայնման և կառավարման արդյունավետության մակարդակի բարձրացման նպատակով ՀՀ Կառավարությունը ձեռնարկել է պետական բուհերի կազմակերպական-իրավական ձևի փոփոխության գործընթաց: Մի շարք խոշոր պետական բուհեր պետական ոչ առևտրային կազմակերպություններից արդեն դարձել են հիմնադրամներ: Վերջիններս օժտված են ինքնուրույն ֆինանսական և տնտեսական գործունեություն ծավալելու ավելի լայն լիազորություններով:

Մարդկային ռեսուրսների կառավարման ինքնավարության առումով, ՀՀ բուհերն ընդգրկվում են բարձրագույն կրթական համակարգերի «բարձր» համախմբում: Վերջիններս կարող են մարդկանց ուղղակիորեն աշխատանքի ընդունել (բուհի աշխատողները քաղաքացիական ծառայողներ չեն) և, բացի այդ, ազատ են որոշելու նրանց աշխատավարձը: Այնուամենայնիվ, գործնականում, ընդհանուր ֆինանսավորման ցածր մակարդակը խոչընդոտում է արդյունավետ կադրային քաղաքականության իրականացումը, քանի որ բուհերը չեն կարող աշխատավարձն օգտագործել որպես գործիք՝ իրենց ինստիտուցիոնալ գրավչությունը մեծացնելու նպատակով: Փոքր են կարիե-

րայի զարգացման հնարավորությունները, հստակ չեն սահմանված առաջխաղացման ուղիները: Սա ևս սահմանափակում է բուհերի հնարավորությունները՝ իրենց կողմը գրավելու լավագույն աշխատողներին: Այս սահմանափակումների պատճառով ՀՀ բուհերը միջազգային ասպարեզում մրցունակ չեն, քանի որ, արտերկրի համալսարանների համեմատությամբ, ավելի թույլ դիրքեր են զբաղեցնում լավագույն մասնագետներին գրավելու առումով: Հակադրությունը առարկայորեն պատկերացնելու համար նշենք, որ, օրինակ՝ ընդամենը 1440 ուսանող ունեցող Բուդապեշտի Կենտրոնական եվրոպական համալսարանի բյուջեն կազմում է 880 մլն դոլար, մինչդեռ Հայաստանի ամենաշատ եկամուտներ ունեցող Երևանի պետական համալսարանի (ուսանողների թիվը՝ 20.000) բյուջեն չի գերազանցում 20 մլն դոլարը:

Հայկական բուհերն ակադեմիական հարցերում ենթակա են արտաքին շոշափելի վերահսկողության, որն արտահայտվում է Կառավարության՝ ակադեմիական հարցերի ողջ սպեկտրն ընդգրկող ազդեցությամբ: Կառավարությունը զգալի վերահսկողություն ունի նաև ընդունելության քննությունների նկատմամբ. հաստատում է քննությունների բովանդակությունը և կենտրոնացված կարգով վերահսկում դրանց անցկացման գործընթացը: Բուհերը բանակցությունների միջոցով համաձայնեցնում են նաև վճարովի ուսման տեղերի թիվը նախարարության հետ: Պետք է նշել սակայն, որ միջազգային համաձայնագրերի հիման վրա ստեղծված բուհերը, ինչպիսիք են Ամերիկյան, Ֆրանսիական կամ Ռուս-հայկական համալսարանները, չեն ենթարկվում այս սահմանափակումներին: Այդ առումով պետք է նկատել, որ Հայաստանում բուհական ընդունելության դաշտը միասնական չէ. առկա են օտարերկրյա բուհերին տրամադրվող շոշափելի արտոնություններ: Վերջիններս, օրինակ, հնարավորություն ունեն նախապատրաստական դասընթացների հիման վրա և տարվա ցանկացած ժամանակ ընդունելություն կազմակերպելու: Ավելի մեծ ազատություն է տրված մագիստրատուրայի ընդունելության հարցերում, բայց վերջինիս ուսանողների հաշվեկշիռը համակարգի ուսանողների ընդհանուր թվի մեջ բավական փոքր է:

Բուհերը կարող են բացել նոր կրթական ծրագրեր, որոնք, սակայն, պետք է ներառված լինեն Կառավարության կողմից հաստատված անվանացանկում: ԿԳՆ-ն միջամտում է նաև ուսանողների հեռացման, վերականգնման, տարբեր ծրագրերի և բուհերի միջև ուսանողների շարժունության, գիտական աստիճանների և կոչումների շնորհման հարցերին: Դասավանդման լեզվի հետ կապված՝ օրենքը

մատնանշում է, որ բուհերը պետք է հայերենով դասավանդեն ռեզիդենտ կամ տեղի ուսանողներին, բացառությամբ՝ միջազգային ուսանողների համար մշակված հատուկ ծրագրերի: Ֆրանսիական, Ամերիկյան և Ռուս-հայկական համալսարաններն ազատված են այս դրույթի կիրառումից: Այդ փաստը ոչ միայն սահմանափակում է ՀՀ բուհերի հնարավորությունը՝ հետամուտ լինելու իրենց միջազգայնացման ռազմավարություններին, այլ նաև խոչընդոտ է դառնում ուսանողների ընտրության հարցերում: Բուհերը սահմանափակումների են բախվում նաև կրթական ծրագրերի բովանդակության առումով, քանի որ պետությունը սահմանում է բակալավրի ծրագրի բովանդակության որոշ պարտադիր մոդուլներ:

Պետության ազդեցությունը ՀՀ բուհերի ինքնավարության վրա շատ մեծ է, հետևաբար՝ ակադեմիական ինքնավարության մակարդակը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ են ընդգրկուն բարեփոխումներ:

Առկա հիմնախնդիրները.

- *Բուհի ինքնավարության ընդլայնմանը նպաստող կազմակերպաիրավական ձև դեռևս սահմանված չէ ՀՀ բարձրագույն կրթության օրենսդրությունում:*
- *Բուհերում պետք է անցնել բիզնես ուղղվածության կառավարման մոդելի կիրառմանը՝ ակադեմիական ոլորտում պահպանելով կոլեգիալության սկզբունքները:*
- *Հարկավոր է լիակատար ազատականացնել բուհերի կողմից սեփական ակտիվների կառավարումը և ֆինանսական գործունեությունը՝ սեփականության իրավունքով ողջ գույքը հանձնելով վերջիններիս:*
- *Բուհերին տալ լիակատար ինքնուրույնություն ընդունելության կազմակերպման և դիմորդների ընտրության հարցերում:*
- *Նվազեցնել պետական մարմինների դերակատարությունը բուհերի կառավարման գործում՝ չեղարկելով այն դրույթը, համաձայն որի բուհի կառավարման խորհրդի անդամների 50%-ը Կառավարության և ԿԳՆ ներկայացուցիչներ պետք է լինեն:*

4. Ֆինանսավորում

Այժմ բուհերի պետական ֆինանսավորումը կատարվում է ըստ ուսանողների թվի՝ հաշվի առնելով ուսուցման աստիճանը (բակալավր/մագիստրոս կամ ասպիրանտուրա), ինչպես նաև բուհի ուղղվածությունը:

Բարձրագույն կրթության պետական ֆինանսավորումը բավական ցածր է ՏՀԶԿ միջինից և կազմում է ՀՆԱ ընդամենը 0,3%-ը և կրթության ընդհանուր ծախսերի 10-12%-ը՝ ՏՀԶԿ, համապատասխանաբար՝ 1,3% և 20% ցուցանիշների դիմաց: Վերջին հինգ տարում պետական բուհերի եկամուտների բաշխումն ըստ աղբյուրների հետևյալն է. մոտ 20%-ը ուսուցման համար պետական բյուջեից տրամադրվող ֆինանսավորումն է, 70%-ը ստացվում է ուսման վարձավճարներից, 5%-ը պետբյուջեից և միջազգային դրամաշնորհներից գիտահետազոտական գործունեության համար ստացվող եկամուտներն են, մնացած 5%-ը գոյանում է այլ աղբյուրներից:

ՀՀ բուհերը, ֆորմալ առումով, իրենց ֆինանսները տնօրինելու առնչությամբ ունեն ինքնավարության բարձր աստիճան, սակայն այդ ինքնավարությունը պետք է դիտարկել բուհերի ընդհանուր ֆինանսավորման շատ ցածր մակարդակի լույսի ներքո. պետությունն ապահովում է բուհերի ֆինանսավորման միայն 20%-ը: Այս համատեքստում, բուհերի կողմից իրենց ֆինանսներն ինքնուրույնաբար տնօրինելու նույնիսկ փոքր սահմանափակումները կարող են վնասակար ազդեցություն ունենալ: Պետական ֆինանսավորումը կրթության բնագավառին տրամադրվում է բլոկային հատկացումների միջոցով, որը պայմանավորված է ուսանողների թվով: Չկա տարբերակում ուսուցման ոլորտների միջև, սակայն տարբեր բուհեր ստանում են ծախսային տարբեր գործակիցներ: Բլոկային հատկացումներն ամբողջովին ուղղվում են կրթական գործընթացին, իսկ հետազոտական ողջ ֆինանսավորումը մրցակցային է: Հետազոտական աշխատանքների հիմնական ֆինանսավորման ցածր մակարդակը խանգարում է բուհերին՝ մշակելու ժամանակակից, զարգացած հետազոտական բաղադրիչ ունեցող բարձրագույն կրթական համակարգ:

Ինչ վերաբերում է ուսման վճարներին, ապա բուհերն ազատ են որոշելու դրանց չափերը: Կառավարությունը սահմանել է վարձավճարների վերին շեմ կրթության հասանելիության աստիճանը բարձրացնելու նպատակով: Հաշվի առնելով, որ բուհերի ֆինանսավորման մեծ մասը ստացվում է ուսման վճարներից, ցանկացած փոփոխություն (նվազեցում), այս առումով, պետք է զուգորդվի պետական ֆինանսավորման ավելացման հետ կապված, որպեսզի երաշխավորվի բուհերի ֆինանսական կայունությունը: Բուհերն ունեն որոշակի ազատություն իրենց կողմից տնօրինվող անշարժ գույքի ֆինանսական կառավարման հետ կապված, որը ձեռք են բերել սեփական միջոցներով: Այնուամենայնիվ, անշարժ գույքի մեծ մասը, սեփականության

իրավունքով, պատկանում է պետությանը և առանց Կառավարության թույլտվության չի կարող վաճառվել կամ տրվել վարձակալության: Ավելին, բուհերը ֆինանսական վերահսկողություն չունեն այդ անշարժ գույքի նկատմամբ, իսկ կապալով տրվող տարածքների վարձավճարն ուղղվում է պետական բյուջե:

Բուհերն իրավունք չունեն պահպանելու պետական ֆինանսավորումից ստացված տարեվերջյան ֆինանսական ավելցուկը: Եթե որևէ ծրագրի մասով բյուջետային ավելցուկ է գոյանում, ապա հաջորդ տարվա ֆինանսավորումը տվյալ ծրագրի համար կրճատվում է նույնքան գումարով: Սա համապատասխան շարժառիթներ չի ստեղծում ռեսուրսների ծախսային և նպատակային արդյունավետ կառավարման համար:

ՀՀ բարձրագույն կրթության ֆինանսավորման նոր ռազմավարության շրջանակներում 2011 թ. ներդրվել է բուհերի նորարարությունների խթանմանն ու զարգացմանը միտված ֆինանսավորման մրցակցային ծրագիր: Այդ նպատակով 2012 թ. ստեղծվել է Նորարարությունների մրցակցային հիմնադրամը:

Առկա հիմնախնդիրները.

- *Փոքր են բուհերի պետական ֆինանսավորման ծավալները, իսկ դրանց հատկացման մեխանիզմները վերանայման կարիք ունեն: Առաջարկվում է ներդնել բուհերի կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման բաղադրիչ:*
- *Առաջարկվում է փոխել բուհերին տրամադրվող պետական ֆինանսավորման ձևերը՝ ներդնելով ծախսերի կշռման ժամանակակից համակարգ ուսման տարբեր ոլորտների և արդյունքների տարբեր չափորոշիչների հիման վրա:*
- *Առաջարկվում է հետևողականորեն իրականացնել բուհերի խոշորացման (օպտիմալացման) պետական քաղաքականություն՝ ընդունելության ակնկալվող ծավալների կտրուկ նվազման հետևանքները մեղմելու և գործունեության արդյունավետությունը մեծացնելու նպատակով:*
- *Բուհերի եկամուտների աղբյուրների բազմազանեցումը խրախուսող օրենսդրական դաշտը դեռևս անկատար է: Բարձրագույն կրթության համակարգում մասնավոր ներդրումները խթանելու նպատակով պետք է սահմանել հարկային արտոնություններ:*

– *Բացակայում են ուսման վարձավճարների ձևավորման և տարեցտարի դրանց ինդեքսավորման հիմնավորված մեխանիզմները:*
– *Գնումների գործընթացում պետք է նվազեցվեն բյուրոկրատական սահմանափակումները:*
– *Անկատար է բուհերի հետազոտական գործունեությունը և կրթության հետ վերջինիս միասնացումը խթանող պետական ֆինանսավորման համակարգը: Հարկավոր է մեծացնել պետական ներդրումների ծավալները բարձրագույն կրթության ոլորտում, մասնավորապես՝ հետազոտական աշխատանքներում: Բուհերը կարիք ունեն կայուն հետազոտական բյուջեի:*

5. Սոցիալական ուղղվածություն

Բարձրագույն կրթության մատչելիությունն ապահովելու նպատակով ներկայումս թե՛ պետությունը, թե՛ բուհերն իրականացնում են ուսանողների ֆինանսական աջակցության տարբեր ծրագրեր: Ուսման բարձր առաջադիմություն ունեցող և սոցիալապես անապահով ուսանողներին տրվում է ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում: Բուհերը վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի առնվազն 10%-ին վարձավճարներից գոյացած եկամուտների առնվազն 7%-ի չափով տրամադրում են ուսման վարձի մասնակի փոխհատուցում՝ հիմք ընդունելով բարձր առաջադիմությունը և սոցիալական խումբը: Պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցման նպատակով աջակցություն է ստանում (սովորում է անվճար) ուսանողների ընդհանուր համակազմի մոտ 20%-ը:

Առկա հիմնախնդիրները.

– *Դեռևս փոքր են պետբյուջեից հատկացվող ուսանողական նպաստների ու կրթաթոշակների ծավալները, դրանց հասցեական տրամադրումը հստակեցման կարիք ունի:*
– *Առաջարկվում է անապահով ընտանիքների ուսանողներին տրամադրել սոցիալական աջակցության տարբեր փաթեթներ:*

ՄԱՆՈՒՇ ՄԻՆԱՍՅԱՆ
ԱրՊՀ ռեկտոր,
պ.գ.թ., դոցենտ

Արցախի Հանրապետության մեծարգո՛ նախագահ, հարգարժա՛ն նախարարներ, գործընկերնե՛ր

Ուրախ եմ, որ բարձրագույն կրթության արդի հիմնախնդիրներին ու հեռանկարներին նվիրված այս աշխատաժողովն անցկացվում է հենց ԱրՊՀ-ում: Առիթն օգտագործելով՝ ուզում եմ շնորհակալություն հայտնել Ձեզ, պարոն նախագահ, այս քննարկման գաղափարի հեղինակման, և Ձեզ, պարոն Աթոյան, կազմակերպչական ողջ աշխատանքների իրականացման համար:

Վստահ եմ, որ նմանաբնույթ աշխատաժողովները, փորձի փոխանակումն ու ոլորտի հիմնախնդիրների համատեղ վերլուծությունները կօգնեն կրթական համակարգում առկա հիմնահարցերի բացահայտմանն ու խոչընդոտների առավել արդյունավետ հաղթահարմանը:

Արցախում բարձրագույն կրթական ոլորտը, ինչպես նաև ակադեմիական հասարակությունը լուրջ մարտահրավերների և բարեփոխումների շեմին են կանգնած: Դրանք պայմանավորված են քաղաքական, ժողովրդագրական, տնտեսական, տեխնոլոգիական, սոցիալական և մշակութային մի շարք հանգամանքներով: Այս բարդ ժամանակաշրջանում, երբ ամեն գնով պետք է կայուն զարգացում և մրցակցություն ապահովել, առավել կարևորվում է բուհերի կառավարման ռազմավարության դերը:

Բոլոր ժամանակներում, ցանկացած հասարակությունում բարեփոխումներն ընթանում են դժվարություններով, երբեմն էլ՝ ցնցումներով:

Կրթության բնագավառում գույներն ավելի են խտանում ոլորտի ավանդապաշտության պատճառով: Սակայն մեկընդմիշտ պետք է ընդունել, որ ժամանակի մարտահրավերներին դիմակայելու, զարգացում ապահովելու համար առանց բարեփոխումների պարզապես հնարավոր չէ:

Նախ թույլ տվեք որոշ թվային տվյալներով նկարագրել ԱՀ կրթական համակարգը. հանրապետությունում գործում է 218 հանրակրթական դպրոց՝ 22653 աշակերտով, 6 միջին մասնագիտական հաստատություն՝ 1648 սովորողով, 5 բուհ՝ 4758 ուսանողով, 10000 բնակչի հաշվով ունենք ՄՄՀ 111 սովորող, բուհի 321 ուսանող: Մասնագիտությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեն տնտեսագիտությունը, բանասիրությունը, գյուղատնտեսությունը: Տվյալները վկայում են, որ սովորողների թիվը կայուն է ՄՄՀ-ում, մագիստրատուրայում, նվազման միտում ունի բակալավրիատում, կտրուկ նվազման միտում՝ ասպիրանտուրայում: Վերջինս հիմնականում պայմանավորված է անգլերենի քննության ձևի փոփոխությամբ և հանգեցրել է պետական բյուջեի միջոցների /կրթաթոշակի տեսքով/ տնտեսման. թեկնածուական թեզեր պաշտպանածների թվերը վկայում են, որ ասպիրանտուրան դիտվում էր որպես 3-ամյա կրթաթոշակի ստացման աղբյուր:

ԱՀ-ում 2015 թ. անցկացված մարդահամարի տվյալներով բարձրագույն կրթություն ունի բնակչության 29,7%-ը, այդ թվում՝ կանանց 31.3%-ը, տղամարդկանց 28.0%-ը, քաղաքաբնակների 37,4%-ը, գյուղաբնակների 19.4%-ը: 2005 թ. մարդահամարի արդյունքների համեմատությամբ, մենք ունենք բարձրագույն կրթությամբ անձանց տեսակարար կշռի կրկնապատկում: Այստեղից էլ բխում է բարձրագույն կրթության *մատչելիության խնդիրը,* ինչը հասարակական ընկալման այն կարծրատիպն է ձևավորել, համաձայն որի բարձրագույն կրթությունը պարտադիր է: Չհաղթահարելով առկա ուսուցման համակարգի ընդունելության դժվարությունները՝ դիմորդները բուհ են թափանցում հեռակա համակարգի միջոցով՝ լավագույն դեպքում, ոչ պետական բուհերի միջոցով՝ վատագույն դեպքում: Ակադեմիական շարժունակությունը ուսանողության շրջանակում թույլ է տալիս հետագայում տեղափոխվել այլ բուհ կամ ընտրել մասնագիտություն: Ստանալով բարձրագույն կրթության հավաստագիր՝ անձն այլևս իրեն չի պատկերացնում բարձր որակավորում պահանջող և գրասենյակային աշխատանքից բացի այլ աշխատանքում (արհեստ, ֆերմերային տնտեսություն և այլն): Սա խաթարում է առաջարկի և պահանջարկի հարա-

բերակցությունն աշխատաշուկայում: Խնդրի լուծումը, թերևս, գործատուի ճիշտ ձևակերպած պահանջներն են վարձու աշխատողի առնչությամբ, երբ կարևորվում է ոչ թե փաստաթուղթը, այլ մասնագիտական գիտելիքներն ու գործնական հմտությունները: Բայց այստեղ էլ բախվում ենք հայկական իրականությանը բնորոշ ծանոթ-բարեկամ կապերին կամ ձևական մրցույթներին: Ակադեմիական կրթությունն էլիտար բնույթ պետք է կրի, քանի որ զանգվածայնությունը ենթադրում է միջակություն, հետևաբար՝ միջակ համալսարանում անհատ ու իսկական քաղաքացի չես դաստիարակի:

- *Թեև քաղաքակիրթ աշխարհը գործում է* «կրթությունն առանց սահմանների» կարգախոսով, այնուամենայնիվ, ԱՀ բուհերը կղզիացած վիճակում են՝ պետության ճանաչված չլինելու պատճառով: Մենք, իհարկե, փորձում ենք մեր գործունեության մեջ մշտապես առաջնորդվել աշխարհի և հատկապես հայկական բուհերի լավագույն փորձով, սակայն, առանց այլ երկրների բուհերի հետ անմիջական ու մշտական շփումների, գործը դժվար է առաջ ընթանում: ԱրՊՀ-ն ունի ՀՀ և արտերկրի այլ բուհերի հետ համագործակցության 30-ից ավելի պայմանագրեր, սակայն, որպես կանոն, դրանք կամ չճանաչված, նորանկախ երկրներին են վերաբերում, կամ ֆինանսական ռեսուրսների բացակայության պատճառով չեն գործում: Իսկ եվրոպական և ամերիկյան բուհերի հետ գործակցելու ցանկացած փորձ ուղեկցվում է Ադրբեջանի հիստերիայով և հակակշիռ քայլերով: Հայաստանի բուհերը միջազգային համագործակցության մեջ Արցախն ընդգրկելու քայլեր չեն կատարում: Պետք է խոստովանենք, որ այստեղ մենք ևս լուրջ խնդիրներ (արհեստավարժ կադրերի պակաս, լեզվի չիմացություն) ունենք: Հայկական իրականությունից դուրս երբեմն մեր շրջանավարտի ավարտական փաստաթղթի ճանաչման խնդրին ենք բախվում: Չնայած 3 տարի առաջ ՀՀ և ԱՀ կրթական գերատեսչությունների ու բուհերի համագործակցության փաստաթղթերում նախատեսվում էր կրկնակի դիպլոմների շնորհման գործընթացի ներդրում, առ այսօր այդ ուղղությամբ աշխատանք չի արվել:

Ֆինանսավորման հետ կապված խնդիրներ: Թեև ԱՀ Կառավարությունը պետպատվերի համակարգից անցում է կատարել ուսանողական նպաստների համակարգի, այնուհանդերձ, ֆինանսավորման մեխանիզմը շարունակում է հիմնականում մուտքերի, այլ ոչ թե արդյունքների վրա հիմնված մնալ: Այլ կերպ ասած՝ ֆինանսավորման հիմքում ուսանողների քանակն է տարբեր կուրսերում, այլ ոչ թե հաջողությամբ ու անհրաժեշտ գիտելիքների պաշար ունեցող՝ բուհն ա-

վարտածների թիվը: Վերջին տարիներին նկատելի է ԱրՊՀ բյուջեի նախահաշվում մասնակցության մասնաբաժնի աճ 2016 թ. արդյունքներով դա կազմել է շուրջ 38%, ինչը պայմանավորված է մասամբ ուսանողների թվի նվազմամբ, մասամբ՝ աշխատավարձի ֆոնդի աճով: Կարևոր հիմնախնդիր է ԱրՊՀ բյուջեի նախահաշվի կառուցվածքը. շուրջ 90%-ը՝ աշխատավարձ, 3%-ը՝ էներգետիկ ծառայություններ, 3.1%-ը՝ նյութական ծախսեր: Եկամուտների կառուցվածքը ևս անբավարար է՝ 95,8 %-ը վարձավճարից մուտքերն են, 3.2%-ը՝ գործառնական այլ եկամուտները, 1%-ը՝ ոչ գործառնական ծախսերը, գիտահետազոտական աշխատանքից և նվիրատվությունից մուտքերը զրոյական են:

Ուսանող/աշխատակազմ ցածր գործակիցը: Արցախում ուսանող/դասախոս գործակիցը ընդամենը 7,0 է, մինչդեռ դասախոս/վարչական անձնակազմ գործակիցը 1 է: ՏՀԶԿ երկրներում ուսանող/դասախոս միջին ցուցանիշը 15 է: Այսպիսի անարդյունավետությունը գլխավորապես Խորհրդային Միության ժառանգությունն է, երբ աշխատանքի էին ընդունում ավելի մեծ թվով վարչական աշխատողներ, քան անհրաժեշտ էր, ըստ որում, տարիներով ձևավորված ավանդույթով ոչ թե գործունակ, այլ ժամանցի կամ սոցիալական որևէ խումբ ներկայացնող քաղաքացիների: Սրան նպաստում է նաև մուտքի հետ կապված հստակ պահանջների, մրցույթի, հետագայում ատեստավորման պահանջի բացակայությունը:

Բուհերի կառավարման հետ կապված խնդիրներ.

– Բուհերի մեծ քանակը:

Արցախի բուհերում ընդգրկված ուսանողների միջին թիվը 952 է, ինչը նշանակում է, որ բուհերի մեծ մասն ի վիճակի չէ ապահովելու տնտեսական գործունեության արդյունավետ արդյունք, քանի որ հաստատությունները շատ փոքր են: Սա նաև նշանակում է, որ ուսանողների ընտրության հնարավորությունները չափազանց սահմանափակ են, քանի որ բուհերի մեծ մասն ի զորու չէ իր ուսանողներին առաջարկելու դասընթացների ամբողջական ծրագիր: Կարևոր է, որ ֆինանսական ռազմավարությունն անդրադառնա անարդյունավետության այս աղբյուրին ևս:

– ***Դասավանդման ու գիտահետազոտական աշխատանքների ավանդական տարանջատումը:***

Արցախը շարունակում է կիրառել խորհրդային մոդելը, ըստ որի տարբեր եղանակներով տարանջատվում են դասավանդման ու գիտահետազոտական աշխատանքները, ընդ որում՝ գիտահետազոտա-

կան աշխատանքների զգալի մասն իրականացվում է բուհերից անկախ ինստիտուտներում: Բացի այդ, համալսարանների դասախոսական կազմը չունի կամ գրեթե չունի գիտահետազոտական աշխատանքով զբաղվելու պարտավորություններ: Բարձրագույն կրթության ոլորտում գիտահետազոտական աշխատանքի միջազգային փորձը ցույց է տալիս, որ նման տարանջատումը բացասական ազդեցություն է ունենում բարձրագույն կրթության որակի վրա: Ինչպես և ինստիտուցիոնալ մասնատվածության դեպքում, դասավանդման ու գիտահետազոտական աշխատանքի տարանջատման հիմնախնդիրը պարտադիր պետք է իր լուծումը ստանա ֆինանսավորման վերափոխությունների ռազմավարության շրջանակներում:

– ***Բուհերի կողմից ուսման վարձերի սահմանման ու փարեվերջի դրությամբ հավելուրդի նկատմամբ կառավարման անարդյունավետ հսկողությունը:***

Պետական բուհերին տրված ինքնավարությունը սկզբունքորեն բարձր աստիճանի է, սակայն գործունեության ոչ բոլոր ոլորտներում: Ֆինանսավորման տեսանկյունից օրենքը յուրաքանչյուր պետական բուհին անկախություն է ապահովում՝ «իր հայեցողությամբ սահմանել բոլոր կատեգորիաների աշխատողների հաստիքացուցակը, իրականացնել աշխատակազմի, այդ թվում՝ գիտական ու մանկավարժական անձնակազմի ընտրություն ու բաշխում, թափուր հաստիքների համալրման կանոնները, ինչպես նաև ամբիոնների ու ֆակուլտետների ղեկավարների պաշտոնները»: Օրենքը նաև թույլ է տալիս բուհերին մրցակցային հիմունքներով աշխատանքի ընդունել ակադեմիական անձնակազմ՝ հինգ տարի ժամկետով, որոշել աշխատակազմի վարձատրության չափերը, որը պետք է նշանակալի ճկունություն ապահովի՝ պահանջարկով պայմանավորված զբաղվածության համակարգ գործադրելու առումով: Իրականությունը որոշակիորեն այլ է:

– ***Բոլոնիայի գործընթացին լիակատար ինտեգրման բացակայությունը:***

Հստակ է, որ որոշ առաջընթաց է արձանագրվել դիպլոմների ու որակավորման համակարգերը Բոլոնիայի գործընթացին համապատասխանեցնելու ճանապարհին, սակայն դա հիմնականում սահմանափակվում է տեխնիկական ասպեկտներով: Մինչ այժմ ձեռնարկված միջոցառումները դեռևս բավարար չեն Բոլոնիայի գործընթացի «ոգին»՝ «ուսանողամետ, սովորողին հարմար մոտեցումները» իրապես գործադրելու համար: Դիպլոմները բնութագրվում են ծրագրի բովանդակությամբ և/կամ դիպլոմ ստանալու համար անհրաժեշտ

ժամանակահատվածով, այլ ոչ թե կրթության արդյունքներով: Շարունակում են գերիշխել դուրս մնալու և դասավանդման հնացած մեթոդները, իսկ մշտական գնահատումը պարզապես հավելվել է տարվա վերջին անցկացվող ավանդական դժվարին քննությունների համակարգին, այլ ոչ թե փոխարինել դրանց: Հանրային քննարկումների բացակայությունը, բարեփոխումների նպատակների մասին պատկերացում չունենալը և ուսանողների ու դասախոսների մասնակցության պակասը հանգեցնում են բարձրագույն կրթության ոլորտում փոփոխությունների հարցում ջանադրության բացակայության, ինչպես նաև հուսալքություն են առաջացնում էապես որևէ բան փոխվելու հավատի բացակայության առումով:

Որակի ապահովման գործընթացներն ակտիվացնելու անհրաժեշտությունը: Մասնագիտական կրթության որակի ապահովման բաղադրիչներից են համապատասխանությունը, չափորոշիչները և չափանիշները, կարիքները և պահանջմունքները: Խոսելով «կրթության որակ» հասկացության մասին՝ նշենք, որ այն առավել ակտիվորեն է գործադրվում կրթական գործընթացի մուտքային և ելքային արդյունքների գնահատման ժամանակ՝ դիմորդի և շրջանավարտի գնահատման դեպքում:

Կրթական մոդելը հիմնված է տեսական, եթե չասենք՝ վերացական, ուսուցման վրա: Ուսումնական ծրագրերում շատ քիչ տեղ է հատկացվում գործնական պարապմունքներին: Մասնագիտական փորձ չունեցող դասախոսները, որպես կանոն, գործնական պարապմունքները արդյունավետ չեն վարում:

Գոյություն չունի համակարգային մոտեցում ստեղծագործական մտածողություն սերմանելու և զարգացնելու նկատմամբ: Գերակշռող և լայն տարածում ունեցող մոդելն այն է, որ դասավանդումն իրականացվում է «անառարկելի ու դոգմատիկ» (*ex-cathedra*) դիրքերից, իսկ ուսանողներից պահանջվում է վերարտադրել այն, ինչ լսել են դասախոսներից:

Բարձրագույն կրթության դիպլոմ կարելի է ստանալ առանց մեծ ջանքերի. երբեմն ոչ թե կաշառք, այլ պարզապես սովորական ուսման վարձ վճարելը լրիվ բավական է՝ հաշվի առնելով այն փաստը, որ բարձրագույն ուսումնական հաստատությունները գոյատևում են վարձավճարներից գոյացած միջոցներով, ուստի, որպես կանոն, կրթական համակարգից դուրս չեն թողնում ուսանողներին: Հեռակա ուսուցման համակարգում կրթության որակը շարունակում է մնալ էականորեն ցածր մակարդակի վրա: Վերջինս և բազային կրթության

փոփոխությամբ մագիստրատուրան շարունակում են դիտվել որպես բուհերի ֆինանսական հոսքերի աղբյուր. մագիստրանտը հեռու է հետազոտողի կարգավիճակ ունենալուց:

Ուսման հանդեպ հետաքրքրություն ցուցաբերող սովորողները ստիպված են լրացուցիչ միջոցներ և ռեսուրսներ ներդնել՝ երբեմն միջնակարգ կրթության վերջին տարիներից սկսած:

Էլեկտրոնային ռեսուրսների կամ առցանց կրթական հնարավորությունների օգտագործումը: Արցախում դրանց կիրառումը դասավանդման և սովորելու նպատակներով սահմանափակ բնույթ է կրում: Անհրաժեշտ ենթակառուցվածքները թերզարգացած են կամ ընդհանրապես չկան:

- Բարձրագույն կրթության համակարգն ավելի բաց և հասանելի դարձնելուն, ինչպես նաև դասավանդման և սովորելու մեթոդների բարելավմանն ու բարձրագույն ուսումնական հաստատություններում գիտահետազոտական գործունեության ներդրմանն ուղղված ջանքերը հնարավոր և արդյունավետ չեն լինի՝ առանց պատշաճ գրադարանային համակարգի զարգացման, որի միջոցով, ի թիվս այլ համակարգերի գործադրման, պետք է ապահովվի էլեկտրոնային ռեսուրսներից օգտվելու հնարավորությունը, ինչպես նաև խրախուսվի ուսուցման առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործումը:

Ներկայումս Արցախում գործող՝ պետության կողմից ուսանողների ֆինանսական աջակցության համակարգը ներառում է հետևյալ ծրագրերը՝

1. ըստ մասնագիտությունների՝ առաջադիմության վրա հիմնված ուսանողական նպաստների տրամադրում պետական բուհերի ուսանողներին, այս խմբի՝ շրջաններում բնակվող ուսանողներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցման համար՝ 5500 դրամ,
2. բարձր առաջադիմություն, հասարակական ակտիվություն և պատշաճ վարքագիծ ունեցող ուսանողներին կրթաթոշակների տրամադրում՝ ամսական մոտ 5000-8500 դրամի չափով, գործում է նաև նախագահական կրթաթոշակի ինստիտուտը. լավագույն 10 ուսանողին՝ ամսական 30 հազար դրամի չափով,
3. սոցիալապես խոցելի և ուսանողների առանձին խմբերին անվճար ուսում ստանալու արտոնության տրամադրում,

4. օրենսդրությամբ սահմանված կարգով՝ բուհերի կողմից ուսման վճարների զեղչերի տրամադրում,
5. սպաների ուսանող երեխաների ուսման վճարի փոխհատուցում:

Գործող համակարգի կարևոր հիմնախնդիրներից մեկն այն է, որ ուսանողների ֆինանսական աջակցության պետական ծրագրերը, բացառությամբ վերը նշված 3-րդ և 4-րդ կետերի, հաշվի չեն առնում ուսանողների կարիքավորության աստիճանը և հիմնված են միայն առաջադիմության վրա: Արդյունքում՝ ուսանողների ֆինանսական աջակցության պետական ծրագրերից հիմնականում օգտվում է հասարակության առավել ապահովված հատվածը: Արցախում բացակայում է ուսանողների վարկավորման համակարգը: Սպաների ուսանող երեխաների ուսման վճարների փոխհատուցումը կատարվում է առանց ակադեմիական առաջադիմության հաշվառման, այն դեպքում, երբ, ըստ գործող օրենսդրության, անգամ զոհվածի երեխայի կամ միակողմանի ծնողազուրկի զեղչը կատարվում է դրա հաշվառմամբ: Ըստ այդմ՝ մեր դիտարկումներով, այդ ուսանողների ակադեմիական առաջադիմությունը մեկ կիսամյակում նվազել է 15-35 տոկոսով, իսկ ընդունելության ժամանակ դիմորդն իրեն «նեղություն չի տալիս» ստանալու բարձր միավոր: Այստեղ այլ խնդիրներ էլ կան:

Արդիական է նաև ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության և բուհերի կողմից ուսման վարձերի գնագոյացման միասնական մեթոդաբանության մշակումը, որը պարտադիր կլինի բոլոր այն բուհերի համար, որոնք ակնկալում են ստանալ բյուջետային ֆինանսավորում ինչպես անուղղակի եղանակով (կրթաթոշակ, ուսանողական նպաստներ, ուսանողների ֆինանսական օգնություն), այնպես էլ ապագայում ուղղակի եղանակով (ըստ կատարողականի ֆինանսավորում, զարգացման ծրագրերի ֆինանսավորում): Այսօր պետության կողմից բուհերի 1 ուսանողի հաշվով տրվող գումարի որևէ հիմնավորում չկա: Ցանկալի է օրենսդրորեն սահմանել նաև բուհի, ֆակուլտետի ուսանողների, ամբիոնի ծանրաբեռնվածության նվազագույն թվերը:

Արցախում ուսման վճարները, մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ հարաբերակցության առումով, համեմատաբար բարձր են. 2016 թ. ՀՆԱ 1 շնչի հաշվով՝ 1577,3 հազար դրամ, ուսման վճարի միջին չափը՝ 365 հազար դրամ, սակայն մասնավոր աջակցության աղբյուրները բավական համեստ են: Բարձրագույն կրթությանը մասնավոր հատվածի աջակցության աստիճանը ցածր է հիմնականում այն պատ-

ճառով, որ վերջինիս համար բարձրագույն կրթության համակարգում գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու կամ կրթության ոլորտում ներդրումներ կատարելու խթանները քիչ են: Անհրաժեշտ է նախաձեռնել համագործակցություն բուհերի և գործատուների միջև՝ վերջիններիս կարիքներին և պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման նպատակով: Մասնավոր հատվածից ավելի մեծ չափով ֆինանսական աջակցություն ներգրավելու ձևերից մեկը հարկային արտոնությունների համակարգի օգտագործումն է:

Վերջին տարիներին, թերևս, նվազել է դասախոսի ընդհանուր հեղինակության աստիճանը, դրա հետ մեկտեղ՝ այդ մասնագիտության վարկանիշը: Այս հանգամանքը տարհամոզիչ և խոչընդոտող դեր է ունենում բարձրագույն ուսումնական հաստատությունում դասախոս լինելու ցանկության առումով: Բացի դրանից, ոչ պակաս հետ պահող գործոն է նաև մասնագիտության իրավական կարգավիճակը: Պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամներն աշխատանքի են ընդունվում կարճաժամկետ՝ 1–5 տարի ժամկետով՝ պայմանագրերի հիման վրա, վարչական ղեկավարներին մտահոգություն առաջացնող աստիճանի վերահսկողական լիազորություններ ընձեռելով այն հարցերում, թե ով և ինչպես պետք է աշխատանքի ընդունվի: Բացի դրանից, ԱրՊՀ դոցենտը ստանում է կառավարման համակարգի գլխավոր մասնագետին հավասար աշխատավարձ, ինչն անհամադրելի է նրա անցած ճանապարհի հետ: Ավելին, գրեթե չեն գնահատվում պրոֆեսորադասախոսական կազմի այն անդամները, ովքեր ավելի ակտիվ են ու ավելի մեծ հաջողությունների են հասնում թե՛ տեղում, թե՛ միջազգային ասպարեզում, գիտահետազոտական նախագծերում կամ այլ նախաձեռնություններում:

ԱՐՍԵՆ ԼՈՔՅԱՆ
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր, հ.գ.դ.

Արցախի Հանրապետության մեծարգո՛ նախագահ, կրթության և գիտության հարգարժա՛ն նախարար, հարգելի՛ հյուրեր

Նախորդ ելույթներում մենք լսեցինք բարձրագույն կրթությանը վերաբերող բազմաթիվ խնդիրների մասին: Ես ուզում եմ շեշտադրել լրացուցիչ և շարունակական կրթության հիմնախնդիրները, քանի որ դրանք պակաս կարևոր չեն:

Եթե ողջ կրթական գործընթացը դիտարկենք որպես մի հարատև շրջան, ապա բարձրագույն կրթություն ստանալուց հետո հիմնականում շատ քչերն են կարողանում լրացուցիչ կրթություն ստանալ: Աշխարհի ժամանակակից զարգացած պետություններն ունեն որոշակի սկզբունքներ լրացուցիչ և շարունակական կրթությունը զարգացնելու համար, ճկուն համակարգեր, որոնք հնարավորություն են տալիս նոր ծնված մասնագիտությունների պարագայում բարձրագույն և ոչ բարձրագույն կրթություն ունեցող մարդկանց հարմարվելու աշխատաշուկայի պահանջներին: Ցավոք, մեր երկրում այդ համակարգերը ճկուն չեն գործում: Ես ուզում եմ ներկայացնել ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ուսումնասիրությունները, քանի որ մեր հաստատությունը ՀՀ-ում պետական շարունակական կրթություն իրականացնող ամենախոշոր կառույցներից մեկն է և պետական ծառայության համակարգի աշխատակիցների համար է գործունեությունը ծավալում:

Խնդիրները բազմաթիվ են. առաջինը ուզում եմ առանձնացնել միասնական համակարգի բացակայությունը: Չնայած կրթության և գիտության նախարարության ջանքերով 2015 թ. մշակվեցին և Կառավարության որոշմամբ հաստատվեցին հետբուհական շարունակական կրթության հայեցակարգերը, սակայն շատ կառույցներ, որոնք իրականացնում են շարունակական կրթության գործընթաց, չեն կատարում համապատասխան պահանջները, այն է՝ ինչպիսի փաստաթուղթ է տրվում, ովքեր են իրականացնում շարունակական կրթությունը, արդյոք բավարար մասնագիտական մակարդակով է իրականացվում շարունակական կրթությունը: Փաստորեն, չի գործում որևէ միասնական ռեեստր, որը կգրանցի ու կվերահսկի լրացուցիչ շարունակական կրթություն իրականացնող կառույցներին:

Երկրորդ խնդիրը. եթե մենք դիտարկենք հարատև կրթությունը, պետք է պատկերացնենք, որ այն կազմված է 2 բաղադրիչից՝ ֆորմալ և ինֆորմալ /շարունակական կրթություն/:

Մի ողջունելի բան կա. կառույցները սկսել են հետևել սահմանված կարգին, և հույս կա, որ շուտով կունենանք միասնական ռեեստր:

Չենք կարող չխոսել հեռավար կրթության խնդիրների մասին: Եթե մենք առաջընթաց զարգացման տեսակետից դիտարկենք միասնական համակարգերը, կհամոզվենք, որ հեռավար կրթությունը ներթափանցում է լրացուցիչ կրթության համակարգ. շատերը վերապատրաստվում են առանց աշխատանքից կտրվելու կամ առանց տանից դուրս գալու: Ժամանակակից մեթոդներն օգտագործելիս մտավախություն կա, որ պատշաճ մակարդակով չի իրականացվի հեռավար կրթությունը: Գիտենք, որ շատ բարձրագույն ուսումնական հաստատություններ արդեն կատարում են փորձեր հեռավար կրթության իրականացման ուղղությամբ:

ԳԱԳԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ռեկտոր, տեխն.գ.դ., պրոֆեսոր

Հարգելի՛ նախագահ պարոն Բակո Սահակյան,
հարգարժա՛ն նախարարներ,
հարգելի՛ գործընկերներ

Մեր գործընկերները բավական մանրամասն ներկայացրին կրթական ոլորտի խնդիրները, ես, մասնավորապես, կանդրադառնամ տնտեսական կառույցի հետ կապված կառավարման հարցին: Հատկանշական էր պարոն Մկրտչյանի ասածն այն մասին, որ հումանիտար ոլորտն այսօր պահանջված է ուսանողների կողմից: Կարևոր է նաև ֆինանսական աղբյուրների զարգացումը. մեր կառույցների զարգացումը կախված է առավելապես ուսանողների մուտքագրած գումարներից:

Առաջանում է մի հարց ևս. ինչպե՞ս կարգավորել գույքի պահպանման, ամրապնդման և զարգացման խնդիրները, երբ գույքը պատկանում է անշարժ գույքի պետական կոմիտեին: Իհարկե, այս հարցում մեծ է ֆոնդերի օգնությունն ու օժանդակությունը: Բուհն ընդարձակվելու կարիք ունի, և եթե մենք չզարգանանք, ապա մեր ոլորտը ևս կհայտնվի բիզնեսի շարքերում:

Վերջերս մենք դիմեցինք Կառավարությանը՝ բուհին գիտահետազոտական կենտրոն հատկացնելու խնդրանքով. շնորհակալ ենք Կառավարությանը և ԿԳՆ-ին՝ աջակցության համար:

ԱՐՇԱԼՈՒՅՍ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ
ՀԱԱՀ ռեկտոր, տեխն.գ.դ., պրոֆեսոր

Արցախի Հանրապետության մեծարգո՛ նախագահ, հարգելի՛ նախարարներ, գործընկերնե՛ր

Լիովին համաձայն եմ իմ գործընկերների ելույթներում արված առաջարկություններին և դիտողություններին:

Ես դրանց չեմ անդրադառնա, պարզապես կներկայացնեմ ագրարային, գյուղատնտեսական կրթության մի քանի առանձնահատուկ հարցեր: Արցախում 2009 թվականից գործում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի մասնաճյուղը: Ե՛վ Արցախում, և՛ ՀՀ-ում գյուղատնտեսությունը առաջանցիկ է, և հատկանշական է, որ 2 հանրապետությունների ՀՆԱ 25-30%-ը ագրոպարենային ճյուղերն ու ոլորտներն են ապահովում, աշխատուժի 40-45%-ը զբաղված է գյուղատնտեսության ագրոպարենային ոլորտում: Դա զարգացած երկրների համար այնքան էլ լավ արդյունք չէ, սակայն մեզ համար բավական բարձր ցուցանիշ է:

Ագրարային մասնագիտությունը այսօր հրապուրիչ չէ երիտասարդների շրջանում. նրանք գերադասում են «մաքուր» աշխատանք, թեև գյուղատնտեսության ոլորտի մասնագիտությունները պահանջարկ ունեն:

Մենք այս հարցը քննարկել ենք պարոն նախարարի հետ, և համամիտ եմ նրա հետ. կարծում եմ, որ պետք է ձևավորել պետպատվեր, սակայն նպատակային՝ տրամադրելով նպաստ կրթաթոշակի տեսքով. ձևակերպել որպես վարկ այն պայմանով, որ ուսումն ավարտելուց հետո 5 տարի աշխատելով տվյալ գյուղական

համայնքում, կմարվի վարկի գումարը, հակառակ դեպքում՝ պետք է վճարել:

Երկրորդը՝ ագրարային կրթությունը, լինելով զուտ կիրառական, պահանջում է մեծ նյութատեխնիկական բազա: Մեր ուսումնական հաստատությունը 87 տարվա պատմություն ունի, ունենք 3 փորձագիտական տնտեսություններ՝ Կոտայքի մարզում, Արմավիրի մարզում, այնուամենայնիվ, առկա է նյութատեխնիկական բազայի կատարելագործման խնդիր: Արդեն 3 տարի է՝ գործում է կաթի վերամշակման արտադրամասը, սեպտեմբերից Ոսկեհատում կգործարկվեն գինու արտադրամասը, պահածոների 3 արտադրամաս: Մեր ցանկությունն է, որ ագրարային համալսարանն ունենա բոլոր մասնագիտություններով լաբորատորիաներ, շուտով համալսարանում կստեղծվի ուսումնական, գիտական և արտադրական կենտրոն:

Արցախի պետական համալսարանի հետ մեր համագործակցությունը սկսվել է դեռևս 1990 թվականից, իսկ մեր մասնաճյուղը, ինչպես արդեն նշեցի, ստեղծվել է 2009 թվականին:

Արցախը պետք է ունենա մեկ հզոր համալսարան տարբեր ոլորտի իր ինստիտուտներով՝ ապահովված նյութատեխնիկական բազայով: Հենց նյութատեխնիկական բազայի ապահովումը պետք է դրվի հայաստանյան բուհերի վրա. մենք պետք է մեր աջակցությունը ցուցաբերենք Արցախին:

Հարկ եմ համարում նշել, որ ՀԱԱՀ-ն համագործակցում է տարբեր արտասահմանյան բուհերի հետ. այսօր իրականացվում են կրկնակի կրթական ծրագրեր 3 համալսարանների հետ համատեղ: Վերջերս Բեռլինում կայացած քննարկումներում նշվել է, որ ԱՊՀ տարածքում Հայաստանի ազգային ագրարային համալսարանը պատրաստում է բարձրորակ մասնագետներ: Արցախի պետական համալսարանի ուսանողներին ևս կարող ենք մասնակից դարձնել տարբեր միջազգային ծրագրերի:

Վերջում ցանկանում եմ ընդգծել, որ մենք պետք է ձգտենք առկա ռեսուրսների սահմաններում պատրաստել որակյալ կադրեր:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԲՈՒՀԵՐԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Պետությունը բարձրագույն կրթության համակարգը դիտարկում է որպես պետական կառավարման գերակա օբյեկտ, ընդ որում, կապակցելով բնակչության, տնտեսության և, ընդհանուր առմամբ, պետության շահերը, ընդունելով կրթական ոլորտի տարբեր ուղղություններում պետության գործունեությանը նպաստող օրենքներ և նորմատիվային իրավական ակտեր: Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներն ամրագրված են «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքում.

- մարդու և քաղաքացու՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու իրավունքի ապահովումը և պաշտպանությունը.
- բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մատչելիությունը.
- կրթական գործընթացի անընդհատությունը, հաջորդայնությունը և շարունակականությունը.
- մրցույթայնությունը, թափանցիկությունը և հրապարակայնությունը.
- եվրոպական և օտարերկրյա այլ պետություններում Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հետբուհական կրթության որակավորման աստիճանների համեմատելիությունը և դիպլոմների ճանաչելիության ապահովումը.
- ուսանողների միջազգային շարժունությանը նպաստելը.
- բարձրագույն ուսումնական հաստատությունների ակադեմիական ազատությունները և ինքնավարությունը խթանելն ու զարգացնելը.
- հայազգի օտարերկրյա քաղաքացիների (սփյուռքի համար), ինչպես նաև հայագիտության զարգացման նպատակով մասնագիտական պատրաստումը և որակավորման բարձրացումը:

Պետության, հասարակության, քաղաքացիների համար անչափ կարևոր է կրթության միջոցով իրենց ավանդական գործառույթների արդյունավետ իրականացումը. սոցիալացում, անհատի ձևավորում, քաղաքացիական պատասխանատվության դաստիարակում:

ԱՐՄԵՆ ԹԱՄԱԶՅԱՆ
Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր

ԲՈՒՀԵՐԻ ՀԱՐԿՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

1. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում 2014 թ. մայիսի 19-ին կատարված փոփոխության և լրացումների համաձայն՝ նույն օրենքի 6-րդ հոդվածը լրացվել է 4.1–4.4 մասերով, ըստ որոնց՝ բարձրագույն ուսումնական հաստատությունները վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի առնվազն տասը տոկոսին՝ ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն յոթ տոկոսի չափով, սեփական միջոցների հաշվին իրականացնում են ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում՝ օրենքով սահմանված կարգավիճակ ունեցող ուսանողներին: Միաժամանակ, 2014 թ. մայիսի 19-ին կատարված փոփոխությամբ, «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրվել է նոր խմբագրությամբ, համաձայն որի բարձրագույն ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում անվճար ուսուցման համակարգ ընդունված ուսանողների թվի տասը տոկոսի չափով, իրենց միջոցների հաշվին, ըստ առաջադիմության փոխհատուցում են վճարովի ուսուցման համակարգի ուսանողների ուսման վարձը՝ համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարության հաստատած՝ մասնագիտություններին հատկացված տեղերի քանակի:

Չնայած նշված փոփոխությունների իրականացմանը, որոնք, համապատասխանաբար, ուժի մեջ են մտել 2014 թ. սեպտեմբերի 1-ից և 2015 թ. հունվարի 1-ից և, ըստ էության, բոլոր բարձրագույն ուսումնական հաստատությունների համար կատարման պարտադիր նորմեր են /ունեն իմպերատիվ բնույթ/, այդուհանդերձ, առանձին հարկատեսակների մասով հարկային հարաբերությունները կարգավորող օրենսդրական ակտերում շարունակում են գործել վերը նշված հարցերի կարգավորման նպատակով նախկինում ընդունված նորմերը, որոնք, փաստորեն, միայն մասամբ են կարգավորում բուհերի կողմից կատարվող մասնակի կամ լրիվ փոխհատուցման գումարների չհարկման հարցերը: Այսպես՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 25-րդ կետի համաձայն, նվազեցվող եկամուտներ են համարվում ՀՀ Կառավարության կողմից բարձրագույն ուսումնական հաստատությանը հատկացված վճարովի չափաքանակի շրջանակում սովորող ուսանողական համակազմի 10 տոկոսի ուսման տարեկան վարձի փոխհատուցման գումարները, իսկ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով նշված հարցերի առնչությամբ որևէ կարգավորում տրված չէ, և միայն «Ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգի 5.2 կետի «իը» ենթակետով է սահմանվում բարձրագույն ուսումնական հաստատության կողմից՝ այդ հաստատությանը հատկացված վճարովի չափաքանակի շրջանակում սովորող ուսանողական համակազմի 10%-ին փոխհատուցվող ուսման տարեկան վարձի՝ որպես ծախս /ինչն ինքնին անհասկանալի է/ նվազեցման դրույթը: Նշվածից ակնհայտ է դառնում բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերի նշված դրույթների և դրանց վերաբերող՝ հարկային օրենսդրության համապատասխան դրույթների միջև առկա հակասությունը, ինչի հետևանքով բարձրագույն ուսումնական հաստատությունները հավելյալ հարկային պարտավորություններ են կրում այն հաշվեգրված եկամուտների մասով, որոնք, տրամադրվող փոխհատուցման /այսպես կոչված՝ զեղչերի/ արդյունքում, բուհերն ուղղակի չեն ստանում: Նշված հիմնահարցերը իրենց լուծումը չեն գտել նաև 04.10.2016 թ. ընդունված և 2018 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնող ՀՀ հարկային օրենսգրքի համապատասխան դրույթներում: Այսպես՝ օրենսգրքի 121-րդ հոդվածի (ծախսերի առանձին տեսակների հաշվառման առանձնահատկությունները) 8-րդ մասի 2-րդ կետը շարադրվել է հետևյալ կերպ. «2) բարձրագույն ուսումնական հաստատության ուսանողական համակազմի մինչև 10 տոկոսին ծառայության մատուցման

հետ կապված ծախսերը՝ անկախ այդ ծառայությունների դիմաց ուսանողների կողմից հատուցում կատարվելու հանգամանքից», իսկ հոդված 147-ի (նվազեցվող եկամուտները (նվազեցումները)) 1-ին մասի 24-րդ կետն ունի հետևյալ շարադրանքը. «24) բարձրագույն ուսումնական հաստատության ուսանողական համակազմի մինչև տասը տոկոսի՝ օրենսդրությամբ սահմանված դեպքերում ուսման վարձի փոխհատուցման գումարները»: Այսպիսով՝ հարկային օրենսգրքում վերը նշված հիմնահարցերը կրկին իրենց ամբողջական լուծումը չեն ստացել, և դրանց կարգավորման նպատակով առաջարկվում է համապատասխան հոդվածներում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

Բաժին 6, գլուխ 22, «Եկամուտ չհամարվող տարրերը» հոդված 108-ի 1-ին մասում ավելացնել նոր՝ 19-րդ կետը՝ հետևյալ բովանդակությամբ. «Բարձրագույն ուսումնական հաստատությունների վճարովի ուսուցման համակարգում սովորող ուսանողներին, օրենքի համաձայն, հաստատության սեփական միջոցների հաշվին տրվող ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման գումարները»:

Բաժին 6, գլուխ 22, «Ծախսերի առանձին տեսակների հաշվառման առանձնահատկությունները» հոդված 121-ի 8-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Բարձրագույն ուսումնական հաստատության ուսանողներին կրթական ծառայությունների մատուցման հետ կապված բոլոր անհրաժեշտ ծախսերը՝ անկախ օրենքով սահմանված դեպքերում և կարգով այդ ծառայությունների դիմաց ուսանողների կողմից հատուցում չկատարելու հանգամանքից»:

Բաժին 7, գլուխ 27, «Նվազեցվող եկամուտները /նվազեցումները/» հոդված 147-ի 1-ին մասի 24-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Բարձրագույն ուսումնական հաստատությունների վճարովի ուսուցման համակարգում սովորող ուսանողներին, օրենքի համաձայն, հաստատության սեփական միջոցների հաշվին տրվող ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման գումարները»:

2. Բոլոր պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները, ըստ էության, ոչ առևտրային կազմակերպություններ են (ՊՈԱԿ կամ հիմնադրամ), և, չնայած այն հանգամանքին, որ վերջիններս շահույթի բաշխում չեն իրականացնում, շահութահարկով հարկման առումով դրանք հավասարեցվել են առևտրային կազմակերպություններ հանդիսացող մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատություններին: Պետական բուհերում «հարկվող շահույթ» հասկա-

ցությունը, ըստ էության, առաջանում է միայն այն դեպքում, երբ ֆինանսական տարվա ընթացքում բուհերը կատարում են կապիտալ բնույթի ծախսեր, որոնց մի մասն է միայն հաշվեգրվում որպես ծախս (օրենքով սահմանված կարգով հաշվարկվող ամորտիզացիոն մասհանումների գումարի չափով): Արդյունքում՝ նույնիսկ այն դեպքերում, երբ պետական բուհերի դրամական միջոցների հոսքը բացասական է (բուհը ֆինանսական տարվա ընթացքում ստանում է ավելի քիչ դրամական ներհոսք, քան կազմում է կանխիկ դրամով արտահոսքը), բուհի համար կարող է վերը նշված պատճառով առաջանալ հարկվող շահույթ, և շահութահարկի հաշվարկումն ու վճարումը կարող են էլ ավելի վատթարացնել պետական բուհերի ֆինանսական վիճակը: Կարծում ենք՝ պետք է ձեռնարկել քայլեր շահութահարկի հաշվարկումից ու վճարումից պետական բուհերին ազատելու ուղղությամբ:

ՊԱՐՈՒՅՐ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ
ՀՊՏՀ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր, պ.գ.թ., դոցենտ

ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Ա. Բարձրագույն կրթության իրավական կարգավորում

1. Անհրաժեշտ է ձևավորել բարձրագույն կրթության սահմանված տեսլականին ու հստակեցված առաքելությանը համահունչ և Բոլոնիայի գործընթացի պահանջներին ու տերմինաբանությանը համապատասխան իրավական դաշտ (հստակ առանձնացնելով Կառավարության և բուհերի դերերը)՝ ներառյալ բուհերի այնպիսի կազմակերպաիրավական վիճակի սահմանումը, որը, մի կողմից՝ կերաշխավորի լայն ինքնավարություն, մյուս կողմից՝ կպարտադրի ապահովել գործունեության թափանցիկություն ու հաշվետվողականություն, այսինքն՝ կհավասարակշռի լիազորություններն ու պարտականությունները:

2. Հայտնի է, որ իրավաբանական անձանց կանոնադրությունները հաստատում է արդարադատության նախարարությունը, իսկ բուհերինը՝ կրթության և գիտության նախարարությունը, չնայած բուհը նույնպես իրավաբանական անձ է: Կարծում ենք՝ բացատրությունը կարող է լինել որևէ կերպ բուհերի ինքնավարության սահմանափակումը:

3. Այսօր բարձրագույն կրթության ոլորտը կարգավորվում է մի շարք օրենքներով, որոնց միջև առկա են բազմաթիվ հակասություններ: Մինչև «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որի կիրարկումը, կարծում

ենք, հնարավորություն կտա ամբողջովին վերացնելու ոլորտում առկա իրավական խառնաշփոթը, հարկավոր է հստակեցնել բարձրագույն կրթության առաքելությունը՝ միջազգայնացման և որակի ապահովման շեշտադրումներով: Բուհերի հիմնական առաքելությունը բարձրորակ և աշխատաշուկայում մրցունակ մասնագետների պատրաստումն է, իսկ մնացած բոլոր գործառույթները պետք է ծառայեն դրան:

Բ. Բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգ

4. Կրթության՝ մասնավորապես բարձրագույն կրթության պետական ֆինանսավորումը Հայաստանում, ըստ միջազգային չափանիշների, շատ ցածր մակարդակի վրա է ոչ միայն տարածաշրջանի, այլև ամբողջ աշխարհի մասշտաբով: Պետական բուհերը պետական բյուջեից ֆինանսավորվում են միայն պետական պատվերով ուսուցման տեղերի և գիտության պետական կոմիտեից՝ շահած դրամաշնորհային թեմաների ֆինանսավորման չափով: Գրեթե ֆինանսավորում չկա մասնավոր հատվածից (հատկապես հումանիտար ուղղվածությամբ բուհերին): Բուհերի ընդհանուր բյուջեների 70-90 տոկոսը ձևավորվում է ուսման վարձավճարների հաշվին: Դրան զուգահեռ, տարբեր օրենքներով բուհերի վրա դրվում են այնպիսի գործառույթներ՝ հատկապես սոցիալական բնույթի, որ պետական սուղ ֆինանսավորման պայմաններում երբեմն դրանց կենսագործունեության պայմաններն են վտանգվում: Խոսքը վերաբերում է ուսանողների համակազմի 10 և սեփական միջոցների 7 տոկոսներին: Նույնքան անհիմն է նաև բյուջեի 2 տոկոսի փոխանցումը ՀԵՀ-ին: Բուհերի կողմից ուսանողների ուսման վարձի զեղչումը կարող էր շատ ավելի մեծ գումար կազմել, եթե այդ միջոցները մնային վերջինների տրամադրության տակ:

5. Կարծում ենք՝ պետության կողմից պետական բուհերի ֆինանսավորումը ճիշտ կլինի կատարել պետական կրթաթոշակների ու որոշակի ծրագրերի ապահովման նպատակով՝ տարբեր պատրվակներով չմիջամտելով բուհի սեփական միջոցների օրինական ծախսմանը:

6. Բուհերի ֆինանսական միջոցների օգտագործումը կարող է շատ ավելի արդյունավետ լինել, եթե «Գնումների մասին» ՀՀ օրենքի կարգավորման դաշտում գործելու պարագայում նրանց նկատմամբ որոշակի բացառություններ կատարվեն (սեփական միջոցներով գնումներն իրականացվեն Համաշխարհային բանկի կամ ԵՄ միջազգային դրամաշնորհների միջոցների ծախսման ընթացակարգերով):

Գ. Կրթության որակ

7. Բարձրագույն կրթության որակն ապահովելու նկատառումներով ՀՀ Կառավարության կողմից սահմանվել են բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշները, սակայն որևէ չափանիշի գնահատման համար մինչ այժմ չկան սահմանված ցուցիչներ (ցուցանիշներ), հաշվարկման մեթոդաբանություն, մեծության ընդունելի միջակայք, որով հնարավոր կլիներ գնահատել այս կամ այն չափանիշի բավարարման աստիճանը, ինչը բուհերի հավատարմագրման գործընթացում մեծացնում է սուբյեկտիվ գործոնների դերը: Նույնը վերաբերում է նաև կրթական ծրագրերի հավատարմագրմանը: Բացի այդ, հավատարմագրման արդյունավետությունը մինչ այժմ որևէ կերպ չի գնահատվել:

8. Բարձրագույն մասնագիտական կրթության որակի ապահովման գործում շատ կարևոր է սովորողների ակադեմիական շարժունության գաղափարի լիարժեք կիրառումը: ՀՀ Կառավարության 2011 թվականի օգոստոսի 25-ի թիվ 1240-Ն որոշմամբ հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգի» դրույթները վերաբերում են ինչպես ներքին, այնպես էլ միջազգային շարժունությանը: Ինչպես հայտնի է, ներքին շարժունությունը, որպես այդպիսին, ՀՀ-ում դեռևս չի իրականացվում: Միջազգային շարժունության համար էլ (որն առավելապես իրականացվում է ԵՄ «Էրասմուս+» ծրագրի շրջանակներում) որոշակի խոչընդոտներ են ստեղծվում առարկայական տարբերությունների հանձնման պահանջի պատճառով, ինչը հակասում է Բոլոնիայի գործընթացի տրամաբանությանն ու գաղափարախոսությանը, նվազեցնում փոխանակման ծրագրերին ուսանողների մասնակցության շահագրգռվածությունն ու գրավչությունը, ինչպես նաև հարուցում է գործընկեր բուհերի արդարացի դժգոհությունը: Կարծում ենք՝ նշված իրավիճակից դուրս գալու ելք կարող է լինել կրթական ծրագրերի ու ուսումնական պլանների համապատասխանեցումը ԵՄ երկրների կրթական ծրագրերին և ուսումնական պլաններին, ինչպես նաև ոչ թե առարկաներն ու դրանց անվանումները տարբերություններ համարելը, այլ վերջնարդյունքները (կրթական ծրագրերի մշակման եվրոպական մեթոդաբանությամբ առաջնորդվելու և բենչմարքինգի արդյունքները հաշվի առնելու դեպքում նույն մասնագիտության պարագայում դրանք չեն կարող շոշափելիորեն տարբերվել): Շարժունության խթանման երկրորդ քայլը կարող է լինել շրջանավարտների դիպլոմների ներդիրներում գործընկեր բուհերում

ուսումնասիրված դասընթացների, կրեդիտների և գնահատականների արտացոլումը:

9. Հայաստանի գիտության և տնտեսության բուռն զարգացման տարիներին (1970-1980-ական թ.), երբ ՀԽՍՀ բնակչության թիվը մոտ 4 մլն էր, աշակերտների թիվը՝ 740 հազար, կրթության բոլոր ձևերում ուսանողների թիվն ընդամենը 57 հազար էր, այսինքն՝ դպրոցների և տեխնիկումների շրջանավարտների միայն 15-16%-ն էր բուհ ընդունվում: Կար լավագույններին ընտրելու հնարավորություն: Այժմ «Հեշտ ընդունվել, դժվար ավարտել» կարգախոսի գործադրման հետևանքով ՀՀ-ում ուսանողների թիվը գերազանցում է 80 հազարը: Այդ կարգախոսը ոչ մի կերպ արդարացված չէ, քանի որ բուհերին զրկում է լավագույններին ընտրելու հնարավորությունից: Նախ՝ ընդունելության գործող համակարգը (բազմաթիվ բուհեր և մասնագիտություններ հայտագրելը) չի նպաստում նախասիրություններին համապատասխան մասնագիտական կրթություն ստանալուն: Երկրորդ՝ բուհերում ուսումնական գործընթացը կրեդիտային համակարգով կազմակերպելու գաղափարախոսության հետ ոչ մի առնչություն չունի «ակադեմիական պարտք» հասկացությունը, առավել ևս՝ մինչև ավարտական կուրս /12 կրեդիտ/ («Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 4-րդ և 16-րդ կետերի սկզբունքային հակասությունը): Դրան ավելացնենք, որ բուհերը որակյալ կրթություն ստանալու ձգտում չունեցող ուսանողներից ազատվելու թե՛ դրդապատճառ, թե՛ ընթացակարգային ինքնավարություն չունեն:

10. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելուն նախորդող և զորացրվելուց հետո առաջին կիսամյակում ուսանողների գնահատականները գրեթե 100 %-ով նշանակվում եմ առանց նրանց գիտելիքները ստուգելու, ինչի հետևանքով այդ ուսանողները 10-15 առարկաներից գիտելիքներ չեն ունենում: Դրանից խուսափելու միջոց կարող է դառնալ ուսանողների զորակոչի ժամկետների փոփոխությունը, այսինքն՝ ուսանողների զորակոչն սկսել ոչ թե հունվարից (հունիսից), այլ փետրվարից (հուլիսից), ինչը զորակոչվող ուսանողին հնարավորություն կտա ավարտելու կիսամյակը, իսկ զորացրվողին՝ լիարժեքորեն մասնակցելու կիսամյակային դասընթացներին:

ՎԻՏՅԱ ՅԱՐԱՄԻՇՅԱՆ
ԱրՊՀ ուսանողների, շրջանավարտների և հասարակության հետ տարվող աշխատանքների գծով պրոռեկտոր, հ.գ.թ., դոցենտ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ. 21-ՐԴ ԴԱՐ

Մարդիկ և հասարակությունը, առհասարակ, երևույթները գնահատում են ձևավորված կարծրատիպերի միջոցով, ուստի միշտ չէ, որ այդ գնահատականները համարժեք են լինում, ավելին՝ դրանք գրեթե երբեք համարժեք չեն լինում: Անհամարժեք է լինում նաև կրթական համակարգին տրված գնահատականը, քանի որ գնահատում են այսօրը, մինչդեռ դրա արդյունավետության մասին կարելի է դատել միայն տարիների հեռավորությունից, երբ սերունդները ինքնադրսևորվելու հնարավորություն կունենան:

Մենք ականատես եղանք, թե ինչպես 21-րդ դարը ներխուժեց ու իր հետ բերեց նոր տեմպ ու արագություն, խելահեղ ընթացքով սկսեց չհանդուրժել նրանց, ովքեր դանդաղում են ու դուրս մղեց այն ոգեղենը, որով մարդիկ ապրում էին նախկինում: Դարն այլևս ցանկություն չունի հաշվի նստելու թույլերի, նրանց մանր հոգսերի հետ: Համաշխարհայնացումը փոխեց ամեն ինչ, այդ թվում՝ հանրային ընկալումների համակարգը: Սրվեցին այն հակասությունները, որոնք ուրվագծվել էին 20-րդ դարի վերջին: Այժմ դժվար է հասկանալ, թե ինչպիսի՞ն պետք է լինի 21-րդ դարի բուհական մասնագետը, ի՞նչ պետք է ուսուցանվի բուհում, որպեսզի գիտելիքը չհնանա, պահպանի իր մրցունակությունը, վերջիվերջո՝ ի՞նչ ծավալի գիտելիք պետք է հաղորդել մասնագետին, ինչպե՞ս կառուցել «բուհ-հասարակություն» հարաբերությու-

նը, որպեսզի չվնասվի ամենակարևոր արժեքը՝ մարդը:

Ասում ենք՝ «21-րդ դարի հրամայականը ինտելեկտի վրա հիմնված հասարակությունն է»: Նույնիսկ հատուկ տերմին ենք շրջանառել՝ «գիտելիքահենք տնտեսություն»: Բոլորը միակարծիք են, որ, անկախ ամեն ինչից, բուհը պետք է շարունակի պատրաստել որակյալ մասնագետներ: Գուցե այդպես է՝ պրագմատիզմի և ուտիլիտարիզմի տեսակետից, սակայն մենք կփորձենք խնդրին մոտենալ որպես քաղաքացի՝ ազգային և էթնոհոգեբանական առումներով, տեսանկյուն, որը, սովորաբար, արդիական է դառնում, երբ դրա մասին սերունդները հանիրավի մոռանում են:

Բարեփոխումների եվրոհամակարգը հիմնված է հայտնի սկզբունքների վրա.

- պետությունը հիմնվում է ուժեղ համալսարանների վրա,
- հասարակությունը հիմնվում է գիտելիքի վրա,
- նրանց միասնացման առաքելությունը ստանձնում է բուհը,
- կրթությունը դառնում է շարունակական,
- կրթական համակարգը պատրաստում է որակյալ կադրեր,
- բուհը վերածվում է գիտության օջախի,
- բուհը կապվում է արտադրությանը,
- տեղեկատվությունը հասանելի է դառնում բոլորին:

Կարծեք թե ամեն ինչ հստակ է, սակայն դա այդպես է թվում միայն առաջին հայացքից: Իրականում դժվար չէ նկատել, որ որպես գլխավոր նպատակ է ընտրված նյութական արդյունքը, իսկ մարդը, որն այդ արժեքների ստեղծողն է, ցած է բերվել հեղինակային պատվանդանից:

Կարծում ենք՝ այս համայնապատկերում բարեփոխումներին ուղեկցող երևույթները՝ մարդկային գործոնի կարևորության տեսակետից, վերաիմաստավորման կարիք ունեն: Անհրաժեշտություն է առաջացել ուսումնասիրելու սոցիալական ու հոգեբանական գործընթացները, դրանց ազդեցությունը հանրային ընկալումների ու հոգեվիճակների վրա ինչպես խմբային, այնպես էլ անհատական մակարդակներում, այսինքն՝ ծնողների, ուսուցիչների, աշակերտների, ուսանողների վրա:

Մենք նախկինում ևս փորձել ենք ակադեմիական շրջանակների ուշադրությունը հրավիրել բարեփոխումների սոցիալ-հոգեբանական ասպեկտների վրա և ուշադրություն դարձնել մի քանի, մեր կարծիքով, էական գործոնների[1]:

[1] Վ.Բ.Յարամիշյան, Զինվորական ծառայությանը նորակոչիկների սոցիալ-հոգեբանական հարմարման դժվարությունները և դրանց հաղթահարման ուղիները, հոգեբ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, 2009 թ., ԵՊՄՀ գրադարան:

Նախ՝ պետական ու ռազմական անվտանգության տեսակետից, արական սեռի աշակերտին և ուսանողին պետք է դիտարկել որպես պոտենցիալ զինակոչիկ, ծառայած ուսանողին՝ որպես զինապարտ: Կախված այն բանից, թե հայրենասիրական պարտքի նկատմամբ ինչպիսի վերաբերմունք կունենա նոր սերնդի առաջատար ուժը՝ ուսանողությունը, պայմանավորված է լինելու նաև ծնողների, հարազատների, հասարակության ընդհանրական վերաբերմունքը: Ցավոք, մեր ուսումնական ծրագրերն ու պլաններն այս հարցի վերաբերյալ տևական ժամանակ լռություն են պահպանել, որովհետև ներմուծվել են դրսից՝ այնտեղից, որտեղ հայը, Հայաստանը արդիական չեն եղել, իսկ հերոսականության այն բազմաթիվ դրվագները, որոնց ականատես եղանք անցած տարվա ապրիլին, պայմանավորում եմ եվրոմոդելի ոչ լիարժեք ներդրման փաստով:

Երկրորդ՝ բարեփոխումներն ընթանում են որոշակի ընթացակարգով, ինչը, միանշանակ, պետք է դրական գնահատել: Մյուս կողմից՝ այդ դեղատոմսային միանշանակությունը կաշկանդում է ստեղծագործական միտքը, արգելակում է նորարարությունն ու նվազեցնում որոնողական աշխատանքի շարժառիթները: Դեղատոմսերն ընդունելու՝ վերադասի իմպերատիվ պահանջը կաշկանդում է մտածող մարդկանց, դատապարտվածության զգացումներ առաջացնում: Նման իրավիճակում մարդն ակամայից սկսում է մտածել. «Եթե առանց մեզ ամեն ինչ որոշված է, էլ ի՞նչ իմաստ ունի նոր հեծանիվ հորինելը»:

Երրորդ՝ յուրաքանչյուր նորը ենթադրում է հնի փլուզում և նորի արմատավորում: Երևույթն այստեղ ոչ միայն ինստիտուցիոնալ կառույցներին է վերաբերում, այլև մարդկանց հարաբերություններին և հանրային ընկալումներին: Նոր համակարգի ներդրումը ենթադրում է նաև համարժեք վերաբերմունքի ձևավորում: Կարծում ենք՝ *բարեփոխումների նույնիսկ հաջող ընթացքը դեռևս հիմք չի տալիս եզրակացնելու, թե դրանց անհրաժեշտությունը մարդիկ հասկացել են, յուրացրել, ընկալել և ընդունել:*

Չորրորդ՝ «Ուսուցման նոր համակարգը փաստացի անցում է կատարում ***ուսանողամետ համակարգին***, որտեղ գործընթացի կենտրոնում ուսանողն է՝ իր անհատական կրթական կարիքներով»[1]: Շատ ճիշտ է: Սակայն՝ ասված է, դեռևս չի նշանակում՝ կատարված է, որովհետև մենք ականատես ենք լինում մտածողության իներտության ու կարծրացած վերաբերմունքի ահռելի դիմադրության:

[1] ԵՊՀ պաշտոնական կայքէջ՝ www.ysu.am/faculties/uploads/1020.pdf

Արդի փուլում գերակա խնդիր եմ համարում այնպիսի կրթական ծառայության մատուցումը, որի արդյունքում ուսանողը ոչ այնքան գիտելիքի պաշար է հավաքում, որքան հարմարվողական ընդունակություն է ձեռք բերում: ***Երիտասարդ մասնագետի համար առաջնահերթ հատկանիշ պետք է համարել, փոփոխվող պայմաններին արագ հարմարվելու, մասնագիտական իրավասություններն ու կարողություններն անհատապես ճիշտ ուղղորդելու ունակությունը:***

Միայն այս դեպքում, տեսնելով իր հաջողված զավակներին, հասարակությունը բարձր կգնահատի մեր ջանքերն ու կլցվի հարգանքով: Ցավում եմ, որ դեռևս կարելի է հանդիպել դասախոսների, ովքեր ջանադրորեն քննադատում են ուսանողներին՝ ապաշնորհ լինելու և սովորել չցանկանալու համար: Յուրաքանչյուրին պետք է ծանոթ լինեն «սերունդների պայքար», «բումերանգի էֆեկտ» հասկացությունները...

Բուհի վերաբերյալ հանրային ոչ շահեկան ընկալումների հիմք է դառնում նաև բուհական ուսուցման մեթոդաբանության, մեղմ ասած, ոչ կատարյալ վիճակը: Դասախոսներից ոմանք չեն տիրապետում մեթոդական պարզագույն հնարքներին անգամ և չեն հրաժարվում դասախոսությունը բառ առ բառ թելադրելու անարդյունավետ մեթոդից: Այսպիսի միջավայրում առաջընթացի չափորոշիչ է դառնում ոչ թե մասնագետ պատրաստելը, այլ հոդված գրելը, թեև այսօրվա հանդեսներում կարելի է տպագրել ցանկացած անհեթեթություն և հետո ներկայանալ որպես հեղինակ, վաստակ ունեցող, նույնիսկ դոցենտ ու պրոֆեսոր: Պետք է վստահորեն թույլ տալ, որ ուսանողը փորձառությունների ժամանակ աշխատելու և բուհի համար գումար վաստակելու հնարավորություն ունենա, հակառակ դեպքում նա ինչպե՞ս է գումար վաստակելու բուհն ավարտելուց հետո:

Բուհական համակարգի որակական առաջընթացին խանգարում է նաև մասնավոր բուհերի մեծ քանակը: Նախկինում ով ասես՝ ձեռք էր զարկում բուհական «բիզնեսին», այժմ իրավիճակը որոշակիորեն շտկվել է, սակայն, հասարակության դժգոհությունը դեռևս մնացել է: Անհրաժեշտ է հետևողականորեն հասնել այն բանին, որ բուհ կոչվելու իրավունք ունենան միայն եզակի հաստատություններ, որոնք կհաստատեն այդ իրավունքը ոչ թե պետականորեն հավատարմագրված լինելու անհասկանալի չափորոշչով, այլ աշխատանքի մեծ արդյունավետությամբ: Այդ դեպքում, գուցե, բարձրագույն կրթության վերաբերյալ հասարակական ընկալումները համարժեք լինեն օբյեկտիվության չափանիշներին:

ՍՈՍ ԽԱՉԻԿՅԱՆ
ՀՊՏՀ եղեգնաձորի մասնաճյուղի փնօրեն, պ.գ.թ., դոցենտ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հանրային կառավարման համակարգում այսօր տեղի ունեցող գործընթացները ցույց են տալիս, որ որոշակի տարածքում գտնվող տնտեսական սուբյեկտները փոխհարաբերություններ են ձևավորում հիմնականում միմյանց միջև: Այդ հարաբերությունների հիմքում ոչ միայն տնտեսական կամ աշխարհագրական, այլև մարդկային և սոցիալական գործոններն են: Այսինքն՝ տնտեսական հարաբերությունների հիմքում, տնտեսական գործոններից բացի, կարևոր նշանակություն ունեն մարդկանցով պայմանավորված փոխհարաբերությունները, որոնցից է նաև սոցիալական կապիտալը: Հետևաբար՝ սոցիալական կապիտալը կարող է դիտարկվել որպես մարզերի կամ որոշակի տարածքի զարգացման գործոն, եթե այդ տարածքի մարդկային ռեսուրսների կառավարումն ուղղորդվի դեպի որոշակի ծրագրերի իրականացում: Այդպիսի ծրագրեր կարող են լինել հետազոտական աշխատանքների իրականացումը, տեխնոլոգիական լուծումների ապահովումը, կրթական ծրագրերի մշակումը և այլն:

Աշխարհի շատ երկրներում տարածքային զարգացման հայեցակարգում սահմանված է դրույթ, համաձայն որի տարածքներում աղքատության նվազեցման նպատակով կիրառվում են ոչ թե սպառման մակարդակի բարձրացման կամ եկամուտների աճի, այլ Միավորված ազգերի կազմակերպության որդեգրած մարդկային

զարգացման սկզբունքները, որոնցից են նաև կրթական որոշակի մակարդակի ապահովումը և սոցիալական կապիտալի հզորացումը: Հետևաբար՝ մարդկային ռեսուրսը կարող է դառնալ տարածքային զարգացման քաղաքականության կարևոր բաղադրիչ:

Այս համատեքստում կարևոր դերակատարություն կարող են ունենալ խոշոր կենտրոններից հեռու գործող բուհերը: Վերջիններիս միջոցով կարելի է ապահովել հանրային և մասնավոր հատվածների համագործակցությունը, որը կնպաստի տարածքներում առկա մեկ այլ հիմնախնդրի լուծմանը ևս՝ տեղական ժողովրդավարության տարածմանը: Տարածքային զարգացման քաղաքականության մեջ տեղական ժողովրդավարության մակարդակի բարձրացման դրույթի ամրագրումը հիմք դառնա համապատասխան մեխանիզմների և ընթացակարգերի մշակման համար: Բուհերի՝ որպես գիտակրթական ծառայություններ մատուցողի, միաժամանակ նաև հասարակական պատասխանատվություն կրող կառույցի դերակատարությունը պետք է բավական բարձր լինի: Այսինքն՝ բուհերը պետք է կապակցությունների տարբեր համակարգերի միջոցով փոխգործակցության մեջ գտնվեն տվյալ տարածքի հանրային, մասնավոր և պետական ոլորտները ներկայացնող սուբյեկտների հետ՝ ապահովելով հետազոտական, կրթական ու տեխնոլոգիական ներգրավվածություն:

Տնտեսական հարաբերությունների այսօրվա պայմաններում տարածքային տնտեսությունների համար մրցակցային առավել նպաստավոր հնարավորություններ կարող է ապահովել մարդկային կապիտալը, որը բնութագրվում է արժեհամակարգային այնպիսի գործոններով, ինչպիսիք են՝ գիտելիքը, կրթությունը, վստահությունը և միջանձնային հարաբերությունները: Պետք է նշել, որ այս գործոնները սոցիալական կապիտալի կարևոր բաղադրիչներ են, և տարածքային տնտեսությունների զարգացման հնարավորությունների դիտարկումը սոցիալական կապիտալի միջոցով, նշանակում է ներդնել ձեռնարկատիրական հարաբերությունների նոր՝ մարդկային գործոնով պայմանավորված մոտեցումներ, որոնք կարող են բնորոշ լինել տվյալ տարածքին: Եթե այդ տարածքում կան զարգացած հասարակական կազմակերպություններ, հետազոտական կենտրոններ, ակտիվ և նախաձեռնող համայնքներ, ապա դրանց մարդկային ներուժը, որ տվյալ տարածքի սոցիալական կապիտալն է, մրցակցային առավելություն կձևավորի ձեռնարկատիրական նոր հարաբերություններում: Սակայն հարկ է հստակ քաղաքականության միջոցով ուղղորդել այդ ներուժը դեպի որոշակի ծրագրերի իրականացում:

Միջազգային փորձի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բոլոր երկրներում էլ խոշոր քաղաքները զարգանում են անհամեմատ ավելի արագ, քան այլ տարածքներ: Հատկանշական է նաև այն, որ դրանք չեն զարգանում ի հաշիվ այլ տարածքների աղքատացման, ընդհակառակը, համապատասխան քաղաքականության դեպքում խոշոր քաղաքների զարգացումը կարող է նպաստել այլ տարածքների զարգացմանը ևս: Այս պարագայում քաղաքականություն մշակելիս պետք է կողմնորոշվել, թե տարածքների զարգացման որ սկզբունքին տալ առաջնահերթություն՝ հավասարությա՞ն, թե՞ արդյունավետության:

Եթե տարածքային զարգացման քաղաքականության մեջ ամրագրվում է հավասարության սկզբունքը, որը, ի դեպ, կիրառվում է մեր հանրապետությունում, ապա դա կարող է նշանակել որևէ տարածքի զարգացում այլ տարածքի հաշվին, օրինակ՝ համահարթեցման միջոցով, քանի որ տարածքների ռեսուրսային ներուժը տարբեր է: Իսկ տարածքային զարգացման քաղաքականության՝ ըստ արդյունավետության սկզբունքի մշակումը ենթադրում է տվյալ տարածքի տնտեսական գործոնների կարևորումը, որը կիրառվում է, օրինակ՝ Լեհաստանում, Բրազիլիայում և այլ երկրներում: Այսինքն՝ հավասարության սկզբունքի ամրագրման դեպքում տարածքային քաղաքականությունն իրականացվում է առավելապես սոցիալական, իսկ արդյունավետության սկզբունքի դեպքում՝ տնտեսական ուղղվածությամբ: Տարածքային զարգացման ինչպես սոցիալական, այնպես էլ տնտեսական ուղղությունների մշակման հիմքում պետք է լինեն հետազոտություններ և տեխնոլոգիական լուծումներ՝ բուհերի ներուժի օգտագործմամբ:

Պետք է նկատել, որ տարածքային զարգացման քաղաքականության մեջ արդյունավետության սկզբունքի ամրագրումը բավարար չէ, և անհրաժեշտ է որևէ տարածքի տնտեսական նպատակահարմարությունը համադրել այլ տարածքների զարգացման հետ: Այդ գաղափարը հնարավոր է իրականություն դարձնել, եթե տարածքային զարգացման քաղաքականության մեջ տարբեր տարածքների և միևնույն տարածքի տարբեր սուբյեկտների միջև փոխհարաբերություններում ամրագրվի կապակցությունների ձևավորման սկզբունքը, որը լայնորեն կիրառվում է Եվրոպական միության երկրներում: Այս պարագայում զարգացման ծրագրերի մշակումը պետք է իրականացնել այնպես, որ առավել զարգացած տարածքները կապակցված լինեն թույլ զարգացած տարածքների հետ, ինչպես նաև միևնույն տարածքի տարբեր սուբյեկտներ՝ կրթական հաստատություններ, պետական ու

մասնավոր կառույցներ և այլն, միմյանց հետ ունենան տնտեսական, հաղորդակցության, տեխնոլոգիական, հասարակական և այլ բնույթի փոխհարաբերությունների համակարգեր:

Իսկ ինչպես կարելի է ստեղծել այդպիսի կապակցություններ: Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների ժամանակակից փուլում դա կարող է դրսևորվել ցանցային կառավարման սկզբունքների ներդրմամբ՝ գիտելիքի փոխանցման, նորարարությունների մշակման, հետազոտությունների իրականացման և այլ ոլորտներում: Ակնհայտ է, որ նշված բոլոր բնագավառներում կարևորվում է բուհերի դերակատարումը, որոնց մասնակցությամբ կարող են ստեղծվել գիտակրթական քլաստերներ՝ կապակցությունների միջոցով ներառելով տվյալ տարածքի սոցիալական կապիտալի վրա հիմնված տարբեր դերակատարների:

Այսինքն՝ գիտակրթական քլաստերները պետք է դիտարկել որպես տարածքային զարգացման հիմնական գործոններ: Ավելին, դրանք էական նշանակություն կունենան միջազգայնորեն չճանաչված և հակամարտության գոտում գտնվող տարածքների զարգացման գործում: Չլինելով միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտներ, այնուամենայնիվ, տվյալ տարածքներում կարող են ստեղծվել բացառապես սոցիալական կապիտալի վրա հիմնված կառույցներ, ինչպիսիք են հասարակական կազմակերպությունները, հետազոտական կենտրոնները, համայնքային միությունները և այլն, որոնք կարող են ցանցային կառավարման սկզբունքների ներդրմամբ և տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաների կիրառմամբ ապահովել բազմաշերտ հարաբերություններ այլ երկրներում գործող նմանատիպ կառույցների հետ: Պետք է նշել, որ շատ երկրներում մասնավոր ու հասարակական այդպիսի կառույցները մեծ ազդեցություն ունեն իրենց երկրների պետական քաղաքականության վրա, և դրանց հետ սոցիալական կապիտալի վրա հիմնված հարաբերությունների ու կապակցությունների ստեղծումը կդառնա տնտեսական զարգացման ու անվտանգության ապահովման կարևոր ռեսուրս:

-

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿ

Համընդհանրացման և գիտելիքահենք տնտեսության համատեքստում բարձրագույն կրթության որակը, ռազմավարական առումով, կարևոր է ազգային տնտեսության զարգացման և մրցունակության ապահովման համար: Ելնելով դրանից՝ ներկայումս, ավելի քան երբևէ, բազմաթիվ երկրներ մեծածավալ ներդրումներ են անում բարձրագույն կրթության որակի ապահովման նկատառումով: ՀՀ-ն անմասն չի մնում նշված գործընթացից: Շահառուներին աջակցելու նպատակով Հայաստանի Հանրապետությունում ստեղծվել են որակի ապահովման մարմիններ, որոնք կանոնավոր կերպով գնահատում են բարձրագույն կրթության հաստատությունների և ծրագրերի որակն ու համապատասխանությունը: Միաժամանակ, հայրենական բուհերը մշակել են որակի ապահովման իրենց համակարգերը՝ ինչպես վերահսկողության մարմինների պահանջների բավարարման, այնպես էլ ներքին կառավարման մակարդակի բարձրացման առումներով: Ինչպե՞ս կարելի է լուծել կրթության որակի բարելավման և շրջանավարտներին աշխատանքի տեղավորելու հիմնախնդիրները:

Այսօր մեր երկրում առաջացել է բարձրագույն կրթությամբ անորակ աշխատուժի հսկայական զանգված, ինչը կարող է բացատրվել նրանով, որ վերջին երկու տասնամյակում ավելացել է այն բուհերի թիվը, որոնք բնութագրվում են կրթական ծառայությունների մատուցման որակի ցածր մակարդակով՝ թողարկելով տնտեսության ժամանակակից պահանջներին չհամապատասխանող մասնագետներ:

ВАЛЕРИЙ АВАНЕСЯН
проректор по науке и международному сотрудничеству АрГУ, д.ист.н., профессор

ВОЗМОЖНОСТИ РАЗВИТИЯ ИССЛЕДОВАТЕЛЬСКОГО ПОТЕНЦИАЛА В АРГУ

Свое выступление я хотел бы начать с эпиграммы *«Тот, кто не рискует двигаться вперед, остается в прошлом»*. История в этом плане является наглядным доказательством. Когда началась первая промышленная революция в Великобритании во второй половине XVIII в., резко возросла производительность труда и это государство начало претендовать на ведущее место в мире по экономическим показателям, а Франция, Пруссия, США, чтобы не отстать, пошли по пути внедрения в производство новых технологий, результатов научных исследований и, самое главное, пристальное внимание начали уделять образованию вообще и высшему, в частности. Во всем этом преуспели США, став державой номер один в конце XIXв., и сохраняя это первенство по настоящее время. В конце XX – начале XXI вв. в мире началась четвертая промышленная (технологическая) революция и продолжается до сих пор. Это современный вызов для государств, в том числе и университетов, и, чтобы не отстать, каждый университет, исходя из своего научного потенциала, финансовых возможностей, реагирует на этот вызов.

Должен сразу отметить, что вуз без науки, как и преподаватель вуза, не занимающийся научно-исследовательской работой – это нонсенс и несовместимо ни со статусом вуза, ни со статусом вузовского преподавателя. Научно-исследо-

вательская работа в вузах имеет определенные особенности, состоящие в сочетании учебно-воспитательного процесса и научно-исследовательской деятельности, в которой, совместно участвуют научно-педагогические работники и студенты.

Научно-исследовательская работа в нашем вузе преследует четыре основные цели:

а) использование творческого потенциала вуза для решения важнейших проблем в системе высшей школы;

б) повышение квалификации преподавательского состава;

в) повышение качества подготовки выпускаемых специалистов и магистрантов, что обеспечивается за счет совершенствования учебного процесса и активного участия студентов в научной деятельности.

г) подготовка и разработка новых учебных курсов и соответствующих учебно-методических материалов.

Научно-исследовательская работа в нашем вузе осуществляется в направлениях, соответствующих профилю подготовки специалистов. В вузе научная деятельность возглавляется проректором по научной работе. Для управления НИР в вузе создана в определенной степени научная среда и соответствующая нормативная база, хотя она нуждается в корректировке. Каждая кафедра ведет исследовательские работы в соответствии с профилем подготовки специалистов за счет бюджетных средств университета, но они катастрофически малы, потому что 90% бюджета уходит на заработную плату.

Одним из важных направлений деятельности вузовской науки являются исследования по проблемам высшей школы. Они направлены на подготовку новых учебных пособий, разработку специальных курсов, внедрение проблемных методов обучения.

Участие в исследовательской работе является важнейшим фактором в вопросе повышения квалификации преподавателей вуза. За счет исследований повышается их эрудиция, расширяется кругозор, растет педагогическое мастерство. Преподаватель, который не ведет активную исследовательскую работу, не может успешно осуществить творческую подготовку студентов. Особенность студенческой научной работы состоит в том, что ее главной задачей является не решение важных научных проблем, а приобщение студентов к самостоятельной работе, углубление их знаний, творческих способностей к решению поставленных задач. Развитие у студентов творческих способностей невозможно

лишь с помощью традиционных видов учебных занятий. Это умение приходит к нему в процессе коллективной исследовательской деятельности, при выполнении творческой работы, в ходе постановки и проведения эксперимента, при публичном обсуждении результатов исследований.

Еще одно направление учебно-исследовательской работы на младших курсах – участие в олимпиадах (кафедра армянского языка и методики ее преподавания). Это способствует выработке у студентов навыков теоретических исследований и творческого подхода к решению общеобразовательных проблем.

Широкое распространение получила такая форма привлечения студентов к самостоятельной работе, как подготовка рефератов, докладов и выступлений. Особенно полезна подготовка обзорных докладов по материалам, опубликованным в современных научных изданиях по профилю специальности. Результаты исследований студенты докладывают на научных семинарах, ежегодных конференциях Арцахского госуниверситета (в 2016-2017уч. году были проведены две студенческие научные конференции с публикацией двух сборников статей) и конференции в других вузах Армении (Ереванский госуниверситет, Педагогический университет им. Х.Абовяна, Российско-Армянский (славянский) университет, Государственный экономический университет).

Широкое участие студентов в исследованиях благотворно сказывается на качестве учебного процесса. У студентов повышается ответственность за результаты учебы, улучшается теоретическая и практическая подготовка.

Опыт показывает, что студенты, прошедшие школу НИРС, становятся не только квалифицированными специалистами, но и хорошими руководителями и организаторами производства.

Таким образом, в Арцахском госуниверситете проводятся научные исследования с участием преподавателей (издаются “Ученые записки” по двум направлениям: естественные и социальные науки, “Арменоведческие исследования”) и студентов.

Но сделано недостаточно. И чтобы активизировать научно-исследовательскую работу в Арцахском госуниверситете нам хотелось бы предложить некоторые действия, но реализацию этих шагов необходимо произвести в ближайшем будущем.

1. На тех кафедрах, где имеется научный потенциал, создать научно-исследовательские центры, привлекая не только преподавателей,

но и магистрантов, аспирантов, создавая постепенно научную инфраструктуру. Необходимо четко определить изучаемую проблему, согласуя его с соответствующими кафедрами, исследовательскими центрами вузов Армении. Это в свою очередь подтолкнет, на наш взгляд, и другие кафедры к исследованию современных проблем в данной области.

2. Необходимо заострить внимание на самостоятельной работе, как преподавателя, так и студентов, тем более, что это является составной частью Болонского процесса. Сложность проблемы заключается в необходимости оптимизации сочетания времени на лекционные занятия и на выполнение самостоятельной работы по различным дисциплинам, поэтому трехкратное превышение времени на самостоятельную работу студентов по сравнению с лекционной формой занятий считается в среднем (1×3) наиболее эффективным для улучшения качества подготовки специалистов.

3. Подключить преподавателей Арцахского госуниверситета, наиболее квалифицированных, к научным исследованиям ведущих вузов Армении. Такой подход не может быть массовым, но он станет стимулом к научной работе. Ведь не секрет, что ученые Армении имеют больше контактов со своими зарубежными коллегами и такое взаимопроникновение помогает изучать передовые опыты.

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի փնօրեն, պ.գ.թ., դոցենտ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՎՐԱ

Բոլոնիայի կրթական տարածքում բարձրագույն կրթության որակի գնահատման առանցքային չափորոշիչներից են կրթության գործընթացում արտաքին շահառուների ներգրավվածության աստիճանն ու կրթական ծրագրի շրջանավարտին ընձեռվող հետագա աշխատանքի ու ինքնաիրացման հնարավորությունները: Եվրոպական միության երկրներում, ինչպես նաև այլ զարգացած տնտեսություններում մասնագիտական ուսումնական հաստատություն–աշխատաշուկա կապի ձևավորումն ու զարգացումն ունեն բավական երկար ընթացք: Այս երկրներում այդ համագործակցությունը, ինչպես նաև բուհերի կրթական ծրագրերի մշակման, հաճախ նաև մատուցման գործընթացներում գործատուների և կրթական ծրագրի այլ՝ արտաքին շահառուների ներգրավվածությունը գրեթե ամբողջությամբ կանոնակարգված են: Յուրաքանչյուր ուսումնառող կրթության որակավորումների որոշակի մակարդակի կրթական ծրագրի մասնակցելիս հաստատապես գիտի՝ ինչ գործառույթներ է իրականացնելու հետագայում, ինչ հաստիքների հավակնելու հնարավորություն է ընձեռելու իր ստացած որակավորումը: Աշխատաշուկայի հետ սերտ կապերի շնորհիվ զարգացած կրթական համակարգ ունեցող երկրներում կրթության որակավորումների շրջանակի միևնույն մակարդակում և բարձրագույն կրթության միևնույն մասնագիտության

ոլորտում իրականացվում են տարբեր բնույթի, տևողության ու մասնագիտացման կրթական ծրագրեր: Օրինակ՝ այս երկրներում կրթության 6-րդ մակարդակում իրականացվում են բակալավրի որակավորում, մասնագետի որակավորման ազգային դիպլոմ, նեղ՝ ավելի գործնական գործառույթներ կատարող մասնագետի կարճ պարբերաշրջանի դիպլոմ շնորհող, միևնույն մասնագիտության նեղ մասնագիտացումներով որակավորում շնորհող կրթական ծրագրեր և այլն: Սա պայմանավորված է նրանով, որ աշխատաշուկայում անհատը, առանց համապատասխան որակավորման, պարզապես չի կարող աշխատանք գտնել՝ անկախ այն հանգամանքից՝ արհեստավոր է, ինժեներ, բժիշկ, տնտեսագետ, իրավաբան, թե այլ բնագավառի մասնագետ: Ընդ որում, նման սկզբունքներով կրթական ծրագրերի մշակումն ու մատուցումը հաճախ ֆինանսավորվում են հենց խոշոր գործատուների միջոցներով ու պատվերով: Մասնավորապես՝ արտերկրի բուհերի բյուջեներում, այսպես կոչված, էնդամենտի և արտաքին հատվածի պատվերներից ստացվող մուտքերի մասնաբաժինը տատանվում է 50-75%-ի սահմաններում, ինչը բուհերին հնարավորություն է տալիս համեմատաբար անկախ լինելու, իրենց կրթական գործունեությունն ու իրագործվող կրթական ծրագրերն առավելագույնս հարմարեցնելու աշխատաշուկայի պահանջներին և, հետազոտական–փորձագիտական աշխատանքների արդյունքները կրթական ծրագրում ներմուծելով, ապահովել դրա առավել գործնական ուղղվածությունը:

Ցավոք, ԱՊՀ կրթական տարածքում նման մոդելի կիրառումը դեռևս կապված է բազմաթիվ խնդիրների հետ: Մասնավորապես՝ տնտեսության, մասնավոր հատվածի և բուհական գիտության միջև թույլ կապերի պատճառով բուհերը չեն կարողանում հստակ կիրառական ուսումնասիրություններ կատարել՝ զարգացնելով սեփական հետազոտական ներուժը կամ, հետազոտությունների արդյունքներն օգտագործելով կրթական գործընթացում, ուսումնառողների շրջանում զարգացնել կիրառական իմացություններն ու վերլուծական հմտությունները: Մյուս կողմից՝ թույլ կապերն առնվազն չեն կարող նպաստել կրթական ծրագրի մշակման ընթացքում մասնավոր հատվածի ներգրավվածության ընդլայնմանն ու աշխատաշուկայի պահանջներին առավելագույնս համապատասխանող կրթական վերջնարդյունքների թիրախավորմանը: Արդյունքում՝ բուհերը մշակում են կրթական ծրագրեր, որոնք ձևով, բովանդակությամբ կտրված են իրականությունից, չեն համապատասխանում գործատուների պահանջներին, իսկ

հայցված կրթական տեղերը մի քանի անգամ գերազանցում են աշխատաշուկայի՝ հնարավոր կադրերին կլանելու ունակությունը:

Ճիշտ է, տարբեր հիմնարար փաստաթղթերով ՀՀ Կառավարությունը բուհերին պարբերաբար առաջադրում է աշխատաշուկայի պահանջներին համապատասխանող կրթական ծրագրեր կազմելու և աշխատաշուկայում մրցունակ կադրեր թողարկելու պահանջ, սակայն հետևողականություն այս հարցում չի դրսևորվում: Ընդ որում, դա, կարելի է ասել, վերաբերում է բարձրագույն կրթության բոլոր շահառուներին և այս ոլորտում ներգրավված սուբյեկտներին, քանի որ ամենաառանցքային երկու շահառուներից դիմորդը մասնագիտությունը սովորաբար չի ընտրում դրա՝ հետագայում ընձեռած հնարավորություններից ելնելով, իսկ աշխատաշուկան իր զարգացման ներկայիս մակարդակով ու կառուցվածքով դեռևս ունակ չէ հասցեական պահանջներ սահմանելու կրթական ծրագրի բովանդակության ու որակի նկատմամբ:

Մասնավորապես՝ ավագ դպրոցների ավարտական դասարանների աշակերտների և հայաստանյան առաջատար բուհերի առաջին կուրսեցիների շրջանում մեր բուհի իրականացրած սոցիոլոգիական հարցումների արդյունքները վկայում են, որ մասնագիտության ու բուհի ընտրությունը մեզանում ռացիոնալ որոշումների դաշտում չէ: Փաստորեն, 30% դեպքերում մասնագիտության և բուհի ընտրությունը պայմանավորված է դրանց վարկանիշով, մոտ 20% դեպքերում տվյալ բուհն ընտրվում է այստեղ. սովորող ընկերների կամ ծնողների խորհրդով, 15-ական % դեպքերում բուհն ընտրվում է՝ հաշվի առնելով ապագայում ակնկալվող վարձատրության չափը և աշխատանք գտնելու դյուրինությունը: Սովորաբար, մասնագիտություն և բուհ ընտրելիս դիմորդների 2-3%-ն է համապատասխան տեղեկատվություն որոնում դրանց վերաբերյալ, ինչը չափազանց ցածր ցուցանիշ է: Ակնհայտորեն, կրթական ծրագրի դիմորդների ընդամենը 1/3-ին են հետաքրքրում ընտրած մասնագիտության՝ հետագայում ընձեռած հնարավորությունները: Մնացյալի ընտրությունը, կարելի է ասել, կարծրատիպային–բրենդային է, որն, ի դեպ, չի ձևավորվել օբյեկտիվ պատճառներով, այլ տվյալ մասնագիտությունների ու բուհերի նկատմամբ նախկինում առկա վերաբերմունքի արդյունք է: Կարծում ենք՝ այսպիսի պատկերի ձևավորման հիմնական պատճառներն են մասնագիտական կողմնորոշման ինստիտուտի բացակայությունը, մեր հասարակության կողմից տարբեր մասնագիտությունների արժևորման կարծրատիպային ընկալումները, ինչպես նաև տնտեսության ներկայիս կառուցվածքը:

Աշխատաշուկայում շուրջ 3 տարի շարունակ մեր պարբերական դիտարկումների արդյունքները փաստում են, որ գործատուները բարձրագույն մասնագիտական կրթության նկատմամբ հստակ աստիճանական պահանջներ հիմնականում չեն ներկայացնում: Նման դեպքում մասնավոր հատվածում բարձրագույն կրթության առկայություն ենթադրող հաստիքներում կարող են աշխատել ինչպես մասնագիտական կրթություն ունեցող, այնպես էլ չունեցող կամ ընդհանրապես բարձրագույն կրթություն չունեցող անձինք: Իսկ պետական հատվածում, թեև բարձրագույն կրթության պահանջը պահպանվում է, սակայն այստեղ էլ միևնույն հաստիքին հավասարապես կարող են հավակնել համապատասխան մասնագիտական կրթություն ունեցող կամ չունեցող, ինչպես նաև ուսումնառության ընթացքում լավ կամ վատ առաջադիմություն ցուցաբերած անձինք: Օրինակ՝ տնտեսագիտության, մենեջմենթի բնագավառներում ներկայումս առկա հաստիքների շուրջ 35%-ի պարագայում բարձրագույն կրթության պահանջ ընդհանրապես չի առաջադրվում, իսկ բարձրագույն կրթություն պահանջող հաստիքների միայն 50%-ի դեպքում է մասնագիտական կրթության հստակ պահանջ դրվում: Շուրջ 10%-ի դեպքում գործատուները պահանջում են հարակից մասնագիտության կրթության առկայություն, իսկ 40%-ի պարագայում՝ պարզապես բարձրագույն կրթություն:

Ակնհայտ է, որ աշխատաշուկա–կրթական ծրագիր իրական կապերի բացակայությունը, ինչպես նաև գործատուների շրջանում կրթության որակի ու ակնկալվող վերջնարդյունքների նկատմամբ հստակ պահանջների բացակայությունը հանգեցրել են նրան, որ կրթական ծրագրերը սովորաբար կառուցվեն ոչ թե աշխատաշուկա իրական ելք ապահովելու նկատառումով, այլ բուհերի ամբիոնային ներուժին համապատասխան: Հենց սա է պատճառը, որ բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերը կառուցվածքով ու բովանդակությամբ հիմնականում չեն համապատասխանում շուկայի պահանջներին, լի են կրկնաբանություններով, ինչը բացասաբար է անդրադառնում կրթական գործընթացի վրա: Խնդիրն ավելի է սրվում մասնագիտական ոլորտների բնութագրիչների բացակայության պատճառով, ինչի պայմաններում միևնույն մասնագիտությունը տարբեր բուհերում թողարկվում է բովանդակությամբ, կառուցվածքով, մուտքային պահանջներով և գիտելիքի ստուգման սկզբունքներով միմյանց հակասող մասնագիտական կրթական ծրագրերով, որոնք հաճախ հակասում են նաև եվրոպական կրթական տարածքի

պահանջներին: Սա մի կողմից՝ խոչընդոտում է ուսումնառողների միջազգային և ներքին, անգամ միևնույն բուհի տարբեր ծրագրերի միջև շարժունությանը, մյուս կողմից՝ հնարավորություն չի ընձեռում ձևավորելու մասնագիտությունների հստակ մասնագիտացումներ, որոնց համապատասխանությունն էլ կդառնար կրթական ծրագրի շրջանավարտին որակավորման շնորհման նախապայման:

Աշխատաշուկա–կրթական ծրագիր կապի բացակայությունն է պատճառը, որ բուհերը որևէ կերպ չեն իրականացնում հայցվող կրթական տեղերի և աշխատաշուկայում իրենց շրջանավարտների կլանման ունակության տնտեսական հաշվարկներ: Այս առումով նշենք, որ, օրինակ՝ տնտեսագիտություն և կառավարում մասնագիտությունների բնագավառում բուհերի կողմից հայցված ընդհանուր կրթական տեղերի և աշխատաշուկայի կլանման ունակության համամասնությունը 2013–2016 թվականներին միջինում խախտված է եղել շուրջ 3.5–4 անգամ, իսկ բուհ ընդունվածների և աշխատաշուկայի կլանման ունակության համամասնությունը՝ շուրջ 1.5–1.8 անգամ: Մասնավորապես՝ աշխատաշուկայում տարեկան շուրջ 800–900 թափուր աշխատատեղերի պարագայում բուհերը միջինում հայցել են 3300 կրթական տեղ, իսկ բուհ ընդունվել է միջինում 1500–1600 ուսանող: Ակնհայտ է, որ երբ խախտվում է մասնագիտությունների համար հատկացվող կրթական տեղերի և աշխատաշուկայի միջև կապը, ուսանողը հաճախ գիտակցելով, որ չի կարողանալու աշխատանք գտնել տվյալ մասնագիտությամբ, ուսումնառության ընթացքում ամբողջովին ներդրվելու շահադրդվածություն չի ունենում: Մյուս կողմից՝ բուհերը, որոնք հայցում և ստանում են կրթական տեղեր՝ հստակ գիտակցելով, որ իրենց շրջանավարտները չեն ունենալու արագ ինքնաիրացման հնարավորություններ, անխուսափելիորեն կասկածի տակ են դնում իրենց հեղինակությունն ու ձեռք բերում բացասական վարկանիշ: Բացի այդ, վերջիններս հաճախ իրենց զրկում են մատուցվող ծառայությունների դիմաց այնպիսի գին սահմանելու հնարավորությունից, որը ոչ միայն կծածկեր ծառայության մատուցման ընթացիկ ծախսերը, այլև թույլ կտար զարգացնել իրենց ինստիտուցիոնալ կարողությունները: Մասնավորապես՝ 2016 թվականի դրությամբ տնտեսագիտություն և կառավարում մասնագիտությունների ոլորտում կրթական ծրագիր իրականացնող 42 բուհ հայցել և ստացել է 3367 կրթական տեղ: Կրթական ծառայությունը մատուցվել է 175–650 հազար դրամ տարեկան վարձավճարով: Հատկացված տեղերից թափուր են մնացել 1858-ը կամ շուրջ 55%-ը: Նշված 42 բուհերից 23-ում

ընդհանրապես ուսանող չի ընդունվել, 2-ում ընդունվել է 1-2 ուսանող: Այս բուհերին բաժին է ընկել թափուր մնացած տեղերի շուրջ 57%-ը: Մեկ այլ բուհում, որին բաժին է ընկել թափուր մնացած տեղերի 17%-ը, նախարարությունից ստացված կրթական տեղերի շուրջ 79%-ը թափուր է մնացել: Ընդամենը 5 բուհի է հաջողվել համալրել ստացված կրթական տեղերի 65–75%-ը, ընդամենը երկու բուհի՝ 97–100%-ը: Ակնհայտ է, որ շուկան ինչ-որ կերպ, թեկուզ իռացիոնալ վարքագծի դրսևորմամբ, կարգավորում է գործընթացը, սակայն այս տարի բուհերի հայցած և ստացած տեղերի պատկերը հուշում է, որ մեզանում որևէ կերպ պատասխան արձագանք չի ձևավորվում, որը համարժեք կլինի ստեղծված իրավիճակին:

Ընդ որում, բուհերի համալրման վատ ցուցանիշները վերջին տարիներին իրենց բացասական անդրադարձն են ունենում նաև դրանց ֆինանսական հնարավորությունների ու, բնականաբար, ինստիտուցիոնալ կարողությունների հետագա զարգացման հեռանկարի վրա: Ներկայումս հայաստանյան բուհերի ճնշող մեծամասնությունում մեկ ամբողջ դրույքով աշխատանքի վարձատրությունը զգալիորեն զիջում է միջին աշխատավարձի մեծությանը, որը, ի դեպ, հաճախ կիսվում է երկու-երեք դասախոսների միջև: Բնական է, որ աշխատանքի վարձատրության խնդիր ունեցող բուհը գրականության համալրման, կրթական գործընթացում նոր՝ առաջադիմական տեխնոլոգիական միջոցների ներդրման, բուհական հետազոտական ներուժի զարգացման միջոցներ չի ունենա:

Առկա իրավիճակի շտկմանը կարող են նպաստել.

1. Պարբերաբար աշխատաշուկայի համալիր հետազոտությունների իրականացումն ու տարեկան զեկույցների հրապարակումը կամ ոլորտը կարգավորողի կողմից, կամ վերջինիս պատվիրակմամբ՝ մասնագիտացված կենտրոնների կողմից:
2. Մասնագիտությունների մասնագիտացումների (պրոֆիլ) ձևավորումը և դրանց հստակ բնութագրիչների սահմանումը:
3. Շահառուների մեծ խմբի ներգրավմամբ ոլորտային որակավորումների համակարգի մշակումը և ներմուծումը, բարձրագույն կրթության մասնագիտությունների համար աշխատաշուկային համապատասխանող ընդհանրական ու մասնագիտական իմացության նկատմամբ պահանջների սահմանումը:
4. Աշխատանքի ընդունման պարագայում որակավորման շրջանակին համապատասխանող մասնագիտական կրթության պարտադիր պահանջի սահմանումը:

5. Բուհերի արդար և թափանցիկ վարկանշման համակարգի ներդրումը:
6. Ծրագրային հավատարմագրման ընթացքում կրթական ծրագրի՝ ոլորտային բնութագրիչին համապատասխանության պարտադիր գնահատումը:
7. Բուհ–աշխատաշուկա կապի և կրթական գործընթացում արտաքին շահառուների մասնակցությունը հավաստող իրական փաստերի առկայության պահանջի սահմանումը բուհերի հավատարմագրման գործընթացում:
8. Մասնագիտական կողմնորոշման ինստիտուտի ներդրումը:

ԱՂԱՎՆԻ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՊՏՀ ուսումնական բաժնի պետ, փ.գ.թ.

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԲՈՒՀԵՐՈՒՄ

Ակադեմիական շարժունությունը կրթության որակի երաշխավորման գրավականներից է, որն ապահովում է միջբուհական արդյունավետ փոխգործակցություն, ուսանողների համար ստեղծում մեկ կիսամյակ այլ բուհում ուսումնառելու և միջմշակութային հաղորդակցության որոշակի փորձառություն ձեռք բերելու հնարավորություն: Ակադեմիական շարժունության հիմնախնդիրների արդիականությունը պայմանավորված է Բոլոնիայի գործընթացին Հայաստանի Հանրապետության անդամակցությամբ, քանի որ ուսանողների շարժունությունը եվրոպական բարձրագույն կրթության անկյունաքարերից և միասնական կրթական տարածքի ձևավորման երաշխիքներից է:

Հայաստանի Հանրապետությունում ակադեմիական շարժունության իրավահարաբերությունները կարգավորվում են Կառավարության 2011 թ. օգոստոսի 25-ի N1240-Ն որոշմամբ հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության» կարգով, որի համաձայն՝ շարժունության իրականացման եղանակներից է գործընկեր ուսումնական հաստատություններ, ինչպես նաև, սովորողի անհատական նախաձեռնությամբ, նրանց ուղարկելը՝

1) կրկնակի աստիճանաշնորհման կրթական ծրագրերի (երկու ավարտական փաստաթուղթ) շրջանակներում ուսանելու,

2) համատեղ աստիճանաշնորհման կրթական ծրագրերով (մեկ վկայականով) ուսանելու,
3) միջբուհական համագործակցության, այդ թվում՝ ակադեմիական փոխանակման ծրագրերի շրջանակներում ուսանելու,
4) վերապատրաստում (այդ թվում՝ լեզվական) անցնելու,
5) ուսումնական (հետազոտական, արտադրական) փորձառություն անցնելու:

Սովորողների ակադեմիական շարժունության բնագավառում առավել գոհացուցիչ է միջազգային շարժունության վիճակը, որը հիմնականում իրականացվում է Եվրոպական միության «Էրասմուս+» ծրագրի շրջանակներում: Միջազգային փոխանակման ծրագրերին ուսանողների մասնակցությունը մի կողմից՝ ընձեռում է մեկ կիսամյակ գործընկեր բուհում ուսումնառելու, մասնագիտական գիտելիքները և օտար լեզուների իմացությունը կատարելագործելու հնարավորություն, օտար միջավայրում ինքնուրույնաբար գործելու անգնահատելի փորձառություն, մյուս կողմից՝ ինստիտուցիոնալ առումով, նպաստում միջբուհական արդյունավետ և առարկայական համագործակցությանը, գործընկերային կապերի զարգացմանը, կրթական ծրագրերի կատարելագործման հիմքերի ստեղծմանը և այլն:

«Էրասմուս+» ծրագրի շրջանակներում հայաստանյան բուհերն ակտիվորեն համագործակցում են Իտալիայի, Բուլղարիայի, Իսպանիայի, Լեհաստանի, Գերմանիայի, Հունաստանի, Ֆրանսիայի, Պորտուգալիայի, Բելգիայի, Էստոնիայի, Հունգարիայի, Ռումինիայի, Ավստրիայի, Կիպրոսի, Չեխիայի, Խորվաթիայի, Լատվիայի, Լիտվայի, Թուրքիայի, Միացյալ Թագավորության, Ֆինլանդիայի, Նիդեռլանդների, Նորվեգիայի և Շվեդիայի հետ: Վերջին երկու տարիներին Հայաստանից ծրագրային երկրներ և ծրագրային երկրներից դեպի Հայաստան շարժունության ընդհանուր թիվը գրեթե կրկնապատկվել է. 2015 թ. Հայաստանին հատկացվել էր 367 տեղ, իսկ 2016-ին այդ թիվը հասել է 646-ի[1]:

ՀՊՏՀ, ինչպես նաև հայաստանյան այլ բուհերի այն ուսանողները, ովքեր մասնակցել են միջազգային փոխանակման ծրագրերին, հարկադրված են եղել հանձնել առարկայական տարբերություններ, ինչը ոչ միայն խոչընդոտներ է ստեղծում ուսանողների համար, նվազեցնում փոխանակման ծրագրերին մասնակցելու շահագրգռվածությունը, այլև հակասում Բոլոնիայի գործընթացի տրամաբանությանը և գաղափարախոսությանը: Բացի այդ, նման փորձառությունը հարու-

[1] https://erasmusplus.am/statistics/?lang=hy

ցում է նաև գործընկեր բուհերի հիմնավոր դժգոհությունը, որոնք առարկայական տարբերությունների հանձնման պահանջը դիտարկում են որպես եվրոպական կրթական տարածքին միասնացման, ուսանողների միջազգային շարժունության յուրօրինակ խոչընդոտ: Առարկայական տարբերությունները հանձնելու պահանջից հնարավոր կլինի խուսափել ուսանողների դիպլոմների ներդիրի մեջ գործընկեր բուհում անցած դասընթացների, կրեդիտների և գնահատականների փոխանցման հնարավորության դեպքում:

Ակադեմիական շարժունության զարգացմանը կարող է նպաստել վերոնշյալ կարգի՝ առարկայական տարբերությունների հանձնման պահանջի մեղմացումը, քանի որ այստեղ առկա է իրավական նորմերի որոշակի կոլիզիա (բախում). հիշյալ փաստաթղթում հստակորեն ամրագրված է, որ «Շարժունության արդյունքում կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքները չպետք է գերազանցեն համապատասխան որակավորում ստանալու համար անհրաժեշտ ընդհանուր ուսումնական ծանրաբեռնվածության բակալավրի կրթական ծրագրի 25 տոկոսը, մագիստրոսի կրթական ծրագրի 50 տոկոսը և հետազոտողի կրթական ծրագրի 30 տոկոսը», մինչդեռ սովորողի, ուղարկող և ընդունող ուսումնական հաստատությունների միջև կնքվող եռակողմ կրթական համաձայնագրում ամրագրված է ECTS կրեդիտների փոխճանաչման, ուսանողների համար հավելյալ քննությունների բացառման պահանջը, որը դիտարկվում է որպես շարժունության իրականացման նախապայման:

Եթե միջազգային շարժունության առումով հայաստանյան բուհերն արձանագրել են որոշակի հաջողություններ, ապա մի փոքր այլ է վիճակը ներբուհական ուսանողական շարժունության պարագայում, ինչը զգալիորեն խոչընդոտում է կրեդիտային համակարգի լիարժեք կայացմանը: Ակնհայտ է՝ քանի դեռ բուհերի առջև դրված չէ ներքին շարժունության զարգացման պահանջ, իրատեսական չէ ներբուհական ակտիվ շարժունության ակնկալումը: Բացի այդ, ուսանողների շրջանում չեն անցկացվում հայաստանյան այլ բուհերում որոշակի դասընթացներ ուսումնասիրելու նրանց շահագրգռվածությունը և պատրաստակամությունը բացահայտող հարցումներ: Ներբուհական շարժունությանը որոշակիորեն խոչընդոտում է կրթական ծրագրերի անհամադրելիությունը: Նախկինում կրթական ծրագրերի մշակման հիմքում դրված չի եղել համանման կրթական ծրագրերի բենչմարքինգի, չափանմուշային վերլուծության պահանջ, ինչի հետևանքով շոշափելի տարբերություններ են արձանագրվել թե՛ հայաստանյան բու-

հերի, թե՛ եվրոպական գործընկեր բուհերի կրթական ծրագրերում: Ներկայումս ինստիտուցիոնալ հավատարմագրման ձևաչափի, չափանիշների հաստատումից հետո խիստ կարևորվում է բենչմարքինգի իրականացումը, ինչը կնպաստի եվրոպական առաջատար համալսարանների կրթական ծրագրերի մշակման փորձի ուսումնասիրմանը և հայաստանյան բուհական համակարգում դրանց ներդրմանը:

«Բարձրագույն կրթության մասին» նոր օրենքի ընդունումից հետո ակնկալվում է ենթաօրենսդրական ակտերի, այդ թվում՝ վերոհիշյալ կարգի փոփոխություն, ինչը թույլ կտա վերանայել ակադեմիական շարժունության մոտեցումները և խրախուսել միջբուհական սերտ համագործակցությունը թե՛ հայաստանյան ներբուհական, թե՛ միջազգային շարժունության հարթակներում՝ նպաստելով միջբուհական համագործակցության մակարդակի և բուհերի կրթական ծրագրերի մրցունակության մակարդակի բարձրացմանը, համալսարանական բազաները միավորող ուսումնագիտական հարթակի ձևավորմանը և այլն:

ԳԱՅԱՆԵ ՄԵՐԴԻՆՅԱՆ
ՀՊՏՀ ուսումնական բաժնի ուսումնամեթոդական ծառայության ղեկավար, պ.գ.թ.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Կրթական համակարգում տեղի ունեցող համաշխարհային զարգացումներից, բնականաբար, չի կարող անմասն մնալ Հայաստանի Հանրապետությունը: Եվրոպայում դեռևս քսան տարի առաջ կրթության ոլորտում դիտարկված բարեփոխումների անհրաժեշտությունը պայմանավորված էր եվրոպական մշակութային, սոցիալական, քաղաքական և տնտեսական բնագավառների վրա ազդեցության բարձր աստիճանով: Բարձրագույն կրթության բարեփոխումների սկիզբը Եվրոպայում դրվեց 1997 թ. Լիսաբոնի կոնվենցիայով: Լիսաբոնի կոնվենցիայի տասնմեկ բաժիններում սահմանված էին կրթական բարեփոխումների ուղղությունները՝ որակավորումների գնահատում, որակավորումների փոխճանաչում, ուսումնառության տևողության ճանաչում, բարձրագույն կրթական հաստատությունների և կրթական ծրագրերի գնահատում, որակավորումների ճանաչմանը վերաբերող տեղեկատվության հավաքագրում ու փոխանցում: Լիսաբոնի կոնվենցիային հաջորդած հանդիպումներում հստակեցվեցին և ավելի կատարելագործվեցին բարձրագույն կրթության բարեփոխումների տեսլականը, նպատակներն ու իրականացման գործընթացը, ինչպես նաև բարեփոխումների ուղղությունները, որոնց թվում էին եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) ստեղծումը, բարձրագույն կրթության որակավորումների փոխճանաչումը, թափանցիկությունը, բարձրագույն կրթության սոցիալական

ուղղությունը, շարունակական կրթությունը, ծառայողունակությունը և համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին, ուսանողակենտրոն մոտեցումը, կրթության, հետազոտության և նորամուծությունների միջև կապի ապահովումը, իսկ վերջին բարեփոխումներում առաջնությունը տրվում է դեպի վերջնարդյունքները կողմնորոշված կրթական ծրագրերի մշակմանը և շրջանավարտների ծառայողունակության մակարդակի բարձրացմանը:

Այսպիսով՝ 1997 թվականից մինչև օրս եվրոպական բարձրագույն կրթության տարածքում իրականացվում են կրթական բարեփոխումներ, որոնց նպատակը եվրոպական բարձրագույն կրթության մրցունակության բարձրացումն է: Հայաստանի Հանրապետությունը նույնպես մասնակցում է Բոլոնիայի գործընթացին, որին միացել է 2005 թ. Բերգենում և, բնականաբար, չի կարող անմասն մնալ իրականացվող բարեփոխումներից:

Գործընթացի սկզբունքներին համապատասխան՝ ՀՀ կրթական համակարգում առաջին հերթին անհրաժեշտ է իրականացնել մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝

1. բուհերում նոր կրթական ծրագրերի կազմում, որոնց հիմքում կլինեն ուսումնառության վերջնարդյունքները,
2. կրթական ծրագրերի չափելիության և համադրելիության ապահովում ԵԲԿՏ այլ բուհերի կրթական ծրագրերի հետ,
3. դասախոսակենտրոն ուսումնառությունից անցում ուսանողակենտրոն մոտեցման, դրա սկզբունքների ներդրման,
4. կրթական ծրագրերում դասավանդում-ուսումնառություն-գնահատում կապի ապահովում,
5. շարժունությունը խթանելու նպատակով կրթական մոդուլների և վերջնարդյունքների համադրելիության ապահովում և այլն:

Մասնագիտական կրթական ծրագրերի բարեփոխումների առանցքը կրթական հարացույցի փոփոխությունն է. որպես հիմք ընդունելով վերջնարդյունքները՝ դասախոսակենտրոն ուսումնառությունից անցում կատարել ուսանողակենտրոն մոտեցման:

Ուսումնառության վերջնարդյունքն ընդգրկում է այն ամենը, ինչն ուսանողը պետք է իմանա, հասկանա և/կամ կարողանա անել ուսումնառության ավարտին:

Քանի որ մասնագիտական կրթական ծրագրերի բարեփոխման անբաժանելի տարրը ուսումնառության ձևն է, ներկայացնենք, թե ինչ փոփոխություններ են ակնկալվում ուսանողակենտրոն մոտեցմանն անցումից:

Աղյուսակ 1[1]

ԴԱՍԱԽՈՍԱԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

Դասախոսակենտրոն մոտեցում	Ուսանողակենտրոն մոտեցում
Դասախոսը գիտելիքը փոխանցում է ուսանողներին:	Ուսանողները գիտելիքը ձևավորում են տեղեկատվություն ստանալու և համադրելու միջոցով՝ ամբողջացնելով դա քննադատական մտածելակերպի, խնդիրների լուծման և այլ հմտությունների միջոցով:
Ուսանողները տեղեկատվություն են ստանում պասիվ կերպով:	Ուսանողները ակտիվ մասնակցում են դասին:
Գիտելիքի ձեռքբերում, որը երբեմն դուրս է հնարավոր կիրառման համատեքստից:	Շեշտը դրվում է այն գիտելիքի վրա, որը հնարավորություն է տալիս լուծելու իրական կյանքում հանդիպող խնդիրները:
Դասավանդումն ու գնահատումն առանձնացվում են:	Դասավանդումն ու գնահատումը միահյուսված են՝ փոխկապակցված:
Գնահատումը հանգեցնում է սթրեսի, ուսանողները սովորում են «քննության համար»:	Առկա է հարգանքի, խրախուսման մթնոլորտ, ուսանողները սովորում են գիտելիք և հմտություններ ձեռք բերելու համար:
Գնահատումն օգտագործվում է ուսումնառությունը վերահսկելու նպատակով:	Գնահատումն օգտագործվում է ուսումնառությունն «ախտորոշելու» և խրախուսելու նպատակով:
Գնահատման ժամանակ շեշտը դրվում է ճիշտ պատասխանների վրա:	Գնահատման ժամանակ շեշտը դրվում է հարցեր առաջադրելու և սխալներն ուղղելու միջոցով սովորելու վրա:
Ուսումնառությունը գնահատվում է անուղղակիորեն՝ օբյեկտիվորեն գնահատվող թեստերի միջոցով:	Ուսումնառությունը գնահատվում է ուղղակիորեն՝ զեկույցների, նախագծերի և այլ միջոցներով:
Կենտրոնացված է մեկ առարկայի վրա:	Տարբեր առարկաների սահմաններում հետազոտությունների հնարավորություն է ստեղծվում:
Միջավայրը մրցակցային է և անհատականացված:	Միջավայրը համագործակցային է:
Որպես ուսումնառողներ են դիտարկվում միայն ուսանողները:	Ուսանողները և դասախոսները սովորում են միասին:

Ուսանողակենտրոն մոտեցումը ենթադրում է ուսանողների շահերի գերակայություն ուսումնական գործընթացի այլ մասնակիցների՝ դասախոսների և վարչական անձնակազմի շահերի նկատմամբ: Ուսանողակենտրոն մոտեցման դեպքում դասընթացի պլանավորման, դասավանդման և գնահատման կենտրոնում ուսանողների կարիքներն ու հմտություններն են: Ուսանողակենտրոն և դասախոսակենտրոն մոտեցումների հիմնական տարբերությունը ուսանողների մասնակցության մեջ է. առաջինի դեպքում ուսանողները ակտիվ մաս-

[1] http://www.assessment.uconn.edu/docs/TeacherCenteredVsLearnerCenteredParadigms.pdf

նակցում են դասին, իսկ երկրորդի դեպքում պասիվ են: Աղյուսակ 1-ում ներկայացված են այս երկու մոտեցումների տարբերությունները:

Տարբեր են նաև դասախոսակենտրոն և ուսանողակենտրոն մոտեցումների նպատակները: Առաջինի պարագայում նպատակը ամբողջ դասընթացը ուսանողներին ներկայացնելն է, իսկ երկրորդի դեպքում՝ սովորեցնել ուսանողներին սովորել, այսինքն՝ սովորեցնել, թե ինչպես օգտագործել դասընթացի ժամանակ ձեռք բերված գիտելիքը, օրինակ՝ համալիր խնդիրներ լուծելիս, զարգացնել կարողությունները, հմտությունները և այլն:

Փաստորեն, ուսանողակենտրոն մոտեցումը հնարավորություն է տալիս ուսանողներին ակտիվորեն մասնակցելու ուսումնական գործընթացին՝ ցուցաբերելով ինքնուրույնություն: Եթե դասախոսակենտրոն մոտեցման դեպքում ուսանողների խնդիրը պասիվ կերպով լսելն ու տեղեկատվությունը մտապահելն է, ապա ուսանողակենտրոն մոտեցման պարագայում ուսանողներն ուսումնասիրում են բազմաթիվ աղբյուրներ, կատարում հետազոտություններ, որի արդյունքում էլ ձեռք են բերում համապատասխան գիտելիք և հմտություն: Ուսանողակենտրոն մոտեցման հիմնական առավելություններն են՝

- մեծացնում է ուսանողների շահամիտումը,
- զարգացնում է վերլուծական ունակությունները,
- նվազեցնում է ապակառուցողական վարքագծի դրսևորումները,
- նպաստում է հաղորդակցման հմտությունների զարգացմանը,
- խթանում է հետազոտություններն ու ակտիվ ուսուցումը,
- խրախուսում է գնահատման այլընտրանքային մեթոդների կիրառումը:

Ուսանողակենտրոն մոտեցումը ենթադրում է կողմնորոշում դեպի վերջնարդյունքները, ինչպես նաև դասավանդման, ուսումնառության և գնահատման փոխկապվածություն: Կրթական հարացույցի փոփոխությունը դասախոսակենտրոնից ուսանողակենտրոնի, առաջացնում է ուսումնական գործընթացի կազմակերպման և վարչարարական մի շարք փոփոխությունների անհրաժեշտություն, այդ թվում՝ կրթական ծրագրերի կազմման տրամաբանության փոփոխություն և համապատասխանեցում Բոլոնիայի գործընթացի ուղղություններին:

Կրթական ծրագիրը, դրա մակարդակները և բովանդակությունը մշակելիս պետք է որպես հիմք ընդունել ազգային օրենսդրությունը, որակավորումների շրջանակները՝ ազգային և ոլորտների/ենթաոլորտների, պետք է հաշվի առնվեն տվյալ բուհի տեսլականը և առաքելությունը, մասնագիտական կողմնորոշվածությունն ու առանձնահատկությունները, ինչպես նաև կատարվեն հետազոտություններ,

որոնցում ներառված լինեն բոլոր շահառուները, որպեսզի հիմնավորվի ծրագրի անհրաժեշտությունը, արդիականությունը և զարգացման հեռանկարները: Այստեղ դեռևս հիմնախնդրային է որակավորումների ոլորտների բնութագրերի բացակայությունը, ինչը բարդացնում է տվյալ ոլորտի մասնագիտական կրթական ծրագրի մշակումը:

Ներկայում, բացի որակավորումների ոլորտային ազգային շրջանակի բացակայությունից, կան նաև այլ հիմնախնդիրներ և նախապայմաններ, որոնք առաջացնում են կրթական ծրագրերի բարեփոխման անհրաժեշտություն: Ստորև ներկայացնենք այն հիմնական խնդիրները, որոնք պահանջում են մասնագիտական կրթական ծրագրերի բարեփոխումներ, և որոշ առաջարկներ՝ որպես դրանց լուծման տարբերակներ.

Աղյուսակ 2

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

N	Խնդիրներ	Լուծման ուղիներ
1.	Մասնագիտությունների ցանկի փոփոխում (խոշորացում). ՀՀ Կառավարության 23.10.2014 թ. թիվ 1191-Ն որոշումը «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկը հաստատելու մասին»	Աշխատաշուկայի պահանջների հիմնավոր վերլուծություն և մասնագիտացումների ներառում կրթական ծրագրերում
2.	ԵԲԿՏ-ում գործող նորմերին և պահանջներին համապատասխանության ապահովում	Կրթական շուկայի խոր վերլուծություն և բենչմարքինգ
3.	Դիմադրություն փոփոխություններին	Փոփոխությունների անհրաժեշտության հիմնավորում և աստիճանական իրականացում

Այսպիսով՝ մասնագիտական կրթական ծրագրերի բարեփոխման հեռանկարներն ուսումնառության վերջնարդյունքների հիման վրա կազմված կրթական ծրագրերն են և ուսանողակենտրոն մոտեցման դրույթները: Մասնագիտական կրթական ծրագրերի բարեփոխման գործընթացը հրատապ և գերակա է բոլոր բարձրագույն ուսումնական հաստատություններում, ինչը բացատրվում է վերոնշյալ հանգամանքներով և խնդիրներով: Կրթական ծրագրերի բարեփոխման առաջնահերթությունը պայմանավորված է նաև մրցունակ մասնագիտություններ և բարձրորակ բարձրագույն կրթություն ունենալու պահանջով:

ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, պ.գ.թ., դոցենտ

ԲՈՒՀԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Բուհերի գիտահետազոտական գործունեությունը նպատակաուղղված է գիտության՝ որպես համալսարանի գործունեության կարևորագույն և գերակա բաղադրիչներից մեկի հետագա զարգացմանը, գիտական գործունեության հասարակական վարկի բարձրացմանն ու բազմատեսակացմանը:

Բարձրագույն համալսարանական կրթության ժամանակակից մոդելների վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում գիտահետազոտական գործունեության ինստիտուցիոնալ կարողությունների հետագա զարգացման անհրաժեշտությունն ու հրատապությունը կրթական ծառայությունների բացառիկ սուր մրցակցության պայմաններում, որը ենթադրում է.

- կրթական և գիտական գործընթացների միասնացում,
- գիտահետազոտական գործունեության կառավարման արդյունավետ ժամանակակից մեթոդների ներդրում,
- հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների արդյունավետության մակարդակի բարձրացում՝ որպես որակյալ բարձրագույն կրթության ապահովման հիմք և նոր գիտելիքների ձեռքբերման սկզբնաղբյուր,
- գիտահետազոտական գործունեության բնագավառում նորաստեղծական ներուժի հզորացում:

Համալսարանի գիտության զարգացման առաքելությունը գիտահետազոտական գործունեության հետագա խորացման, գիտաուսումնական խմբերի և գիտական լաբորատորիաների ստեղծման, արդյունավետ գործարկման արդյունքում գիտական դպրոցների ձևավորման համար անհրաժեշտ նախադրյալների ապահովումն ու համալսարանական գիտական ներուժի զարգացումն է՝ կրթության, գիտության և նորաստեղծական գործունեության արդյունավետ միասնացման պայմաններում: Մասնավորապես՝

- գիտակրթական և նորամուծական-տեխնոլոգիական հատույթում քլաստերային համակարգի ստեղծումը, ինչը կնպաստի գիտահետազոտական գործունեություն ծավալելու ունակ բարձրորակ կադրերի ձևավորմանը, գիտական և գիտահետազոտական աշխատանքների համակարգմանը, գիտակրթական նորագույն տեխնոլոգիաների կատարելագործմանը,
- գիտակրթական նորաստեղծական պլատֆորմի ձևավորումը՝ որպես համալսարանի գիտաուսումնական գործունեության բաղկացուցիչ մաս, ինչը կապահովի բարձրորակ մասնագետների պատրաստման ամբողջական պարբերաշրջանը և նորարարական գաղափարների արագ վերարտադրումը (գեներացում):

Համալսարանի գիտության զարգացման տեսլականը պետք է խարսխվի ապագայում հանրապետության միակ տնտեսագիտական մասնագիտացված հզորագույն նորաստեղծական կառույցի վերածման վրա՝ տարատեսակ գիտական հետազոտությունների իրականացման համար անհրաժեշտ որակյալ անձնակազմի, կորպորատիվ կառավարման արդյունավետ համակարգի առկայությամբ և միջազգային հեղինակություն վայելող գիտական և գիտահետազոտական գործունեությամբ: Միաժամանակ, համալսարանի գիտության զարգացումը պետք է նպատակաուղղված լինի հետևյալ արդյունքների ապահովմանը.

- համընդհանուր միասնականացված միջազգային գիտակրթական հատույթում մրցունակ և դինամիկ զարգացող պետական համալսարան՝ համաշխարհային գիտական և գիտահետազոտական միտումներին համապատասխան և ունակ՝ արագորեն արձագանքելու արտաքին միջավայրի ներկայացրած պահանջներին,
- գիտահետազոտական ինտենսիվ գործունեություն ծավալող համալսարան՝ կրթական և գիտական գործունեության միասնական արդյունավետ համակարգով,

- նորաստեղծական համալսարան՝ նորարարական գաղափարների, գիտական նախագծերի և նորամուծական գիտահետազոտական աշխատանքների ինտենսիվության բարձր աստիճանով,
- գիտակենտրոն համալսարան՝ գիտական մտքի և փորձագիտական հանրույթի ջանքերի համախմբմամբ արդյունավետ և միջազգային չափանիշներին համապատասխան գիտահետազոտական գործունեություն իրականացնելու ունակությամբ,
- հեղինակավոր համալսարան՝ օժտված մրցունակության բարձր վարկանիշով, ժամանակակից գիտակրթական նորագույն տեխնոլոգիաների արդյունավետ կիրառմամբ և հայաստանյան ուղեղային կենտրոնների համագործակցության մշակույթի ձևավորմամբ,
- միասնական համակարգված համալսարան՝ համատեղ կրթական, գիտական և նորաստեղծական գործունեության արդյունավետ կազմակերպման ունակությամբ:

Համաձայն ՀՀ գիտական, գիտատեխնիկական և նորաստեղծական քաղաքականության՝ ՀՊՏՀ գիտական գործունեության գերակա ուղղություններն են. տնտեսական և սոցիալական, տարածական, տեխնոլոգիական զարգացումը, տնտեսական անվտանգությունը, բնօգտագործումը և էկոլոգիական անվտանգությունը, սոցիալ-հոգեբանական, ժողովրդագրական անվտանգությունը:

Սահմանված նպատակներին հասնելու համար պետք է լուծել հետևյալ հիմնական խնդիրները.

- մասնագետների պատրաստման որակի բարձրացում՝ հետազոտություններում դասախոսների և բակալավրիատի 1-ին կուրսից սկսած ուսանողների ներգրավմամբ,
- երիտասարդական գիտական կազմակերպությունների ստեղծում և աջակցություն,
- նոր գիտելիքի ստեղծում և նորաստեղծական մտավոր միջավայրի ձևավորում,
- երկրի զարգացման գերակայություններին և համաշխարհային զարգացման միտումներին համահունչ ուղղություններով հետազոտությունների ձեռնարկում,
- դասախոսների նշանակալի մասի մասնակցության ապահովում գիտահետազոտական և նորաստեղծական գործունեությանը,
- գիտահետազոտական և նորաստեղծական հիմնական հմտություններով ուսանողների մեծ մասի օժտում,

- հետազոտությունների միջազգայնացում,
- արտասահմանյան հետազոտական կենտրոններում փորձառություն անցնող համալսարանի դասախոսների թվի ավելացում,
- արտասահմանյան առաջատար ամսագրերում գիտական հետազոտությունների արդյունքների հրապարակումների թվի ավելացում,
- երկրի գիտատեխնիկական և սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսումների մշակում,
- գիտական հետազոտություններում երիտասարդ մասնագետների ներգրավման աշխատանքի ակտիվացում,
- հետազոտությունների՝ ուսումնական գործընթացներին միասնացում,
- համալսարանի գիտական դպրոցների ձևավորում, դրանց նյութական հենքի ամրապնդում,
- ստեղծագործական կապերի ամրապնդում, համագործակցություն ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի, հայրենական և արտասահմանյան գիտական կենտրոնների հետ, վերջինների մասնագետների ներգրավում համատեղ հետազոտություններում,
- գիտական հետազոտությունների զարգացման համար բոլոր մակարդակների բյուջեներից, հիմնադրամներից, ընկերություններից և մասնավոր ներդրողներից միջոցների ներգրավման ակտիվացում, համալսարանի եկամտի առնվազն 3%-ի չափով հատկացումների ապահովում,
- գիտական հետազոտությունների մշտադիտարկման և արդյունքների գնահատման համակարգի ստեղծում,
- համալսարանի նորաստեղծական ենթակառուցվածքի զարգացում (բիզնես ինկուբատորներ, հետազոտական կենտրոններ) և դրա միասնացում ՀՀ տնտեսական և կրթական տարածությանը:

Չնայած գիտահետազոտական գործունեության բնագավառում ՀՀ բուհերի որոշակի ձեռքբերումներին, այդուհանդերձ, առկա են մի շարք խնդիրներ, մասնավորապես՝

- գիտական հետազոտությունների մեթոդաբանության ոչ բավարար մակարդակը,
- ուսանողական գիտական ընկերությունների նիստերին ուսանողների մասնակցության ցածր աստիճանն ու շահադրդման ժամանակակից համակարգերի բացակայությունը,

- մագիստրոսների, հայցորդների և ասպիրանտների գիտահետազոտական գործունեության արդյունավետության ոչ բավարար մակարդակը,
- գիտակրթական գործընթացի ռեսուրսային ապահովվածության ոչ բավարար մակարդակը,
- կրթական գործունեության բնագավառում գիտական բաղադրիչի փոքր տեսակարար կշիռը,
- գիտական և նորաստեղծական ենթակառուցվածքների գործունեության արդյունավետության ցածր մակարդակը,
- համատեղ միջազգային գիտահետազոտական ծրագրերի իրականացման փոքր ծավալները,
- SCOPUS, WEB OF SCIENCE և այլ միջազգային գիտական հրապարակումների շտեմարաններում ներկայացված հոդվածների փոքր թիվը,
- միջազգային գիտաժողովներում և նստաշրջաններում համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցության ցածր աստիճանը,
- համալսարանական գիտական դպրոցների ձևավորման դանդաղ ընթացքը,
- մտավոր սեփականության առևտրայնացման ցածր աստիճանը,
- պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական և նորաստեղծական գործունեության խթանման համակարգի բացակայությունը,
- երկրում մինչբուհական (միջնակարգ) կրթության որակի անկումը,
- գիտահետազոտական գործունեության նյութատեխնիկական բազայի զարգացման մրցակցային միջավայրի սահմանափակ հնարավորությունները,
- գիտության կառավարման ավանդական, հնացած համակարգի առկայությունը,
- գիտական հետազոտությունների շուկայի պահանջարկի և համալսարանի գիտահետազոտական ծառայությունների առաջարկի անհամապատասխանությունը,
- ՀՀ կրթության և գիտության նախարարության, ԲՈՀ-ի և այլ իրավասու մարմինների կողմից գիտական գործունեության օրենսդրական և նորմատիվային փոփոխությունների արագ տեմպերը,
- տեղական և արտասահմանյան մրցակից բուհերի կողմից վարվող գիտահետազոտական ակտիվ քաղաքականությունը,

- արտաքին միջավայրի փոփոխության ինտենսիվ շարժընթացը (սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական իրավիճակները և այլն),
- նյութատեխնիկական, տեղեկատվական, գրադարանային և այլ ռեսուրսների պարբերական թանկացումները գնաճային երևույթների ազդեցության ներքո,
- բուհերի գիտահետազոտական գործունեության արդյունավետության մշտադիտարկման չափանիշների և ընթացակարգերի հաճախակի փոփոխություններն ու ավելորդ փաստաթղթաշրջանառությունը,
- գիտահետազոտական ծառայությունների մշտադիտարկման արդյունավետ համակարգի բացակայությունը:

ԳԵՈՐԳԻ ՍԱՀԱԿՅԱՆ
ԱրՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, ֆիզմաթ գ.թ., դոցենտ

Արցախի պետական համալսարանը, ինչպես նաև այլ համալսարաններ մշակել են կրթության որակի ապահովման և բարելավման քաղաքականություն: Իհարկե, կրթության որակի բարձրացման հիմնահարցերը բավական շատ են: Դրանցից են ժամանակակից շենքային պայմանները, ՏՏ համապատասխան միջոցներով ապահովումը, լավագույն մասնագետների հրավիրումը, ամբիոնների համալրումը երիտասարդ կադրերով և այլն, որոնց լուծումը կախված է ֆինանսական միջոցներից:

Ուզում եմ ներկայացնել կրթության որակի բարձրացման այն հիմնահարցերը, որոնք առկա են մեր համալսարանում:

Արցախի պետական համալսարանի հիմնական մասնագիտությունները մանկավարժական են: Ակնհայտ է, որ արհեստավարժ մանկավարժների պատրաստումը և դասավանդման որակի բարձրացումն այս ոլորտում, ամբողջ հասարակության խնդիրն է: Այսօր երիտասարդությունը շատ ռացիոնալ է մտածում մասնագիտություն ընտրելիս. հաշվի է առնում հասարակության մեծամասնության վերաբերմունքը, աշխատանք գտնելու հնարավորությունը, սպասվող աշխատավարձը և այլն: Եվ, այս առումով, շատ կարևոր է, որ մանկավարժի մասնագիտությունը դառնա ավելի հեղինակավոր, ունենա բարձր վարկանիշ: Միայն այդ դեպքում մենք կունենանք բավարար թվով

դիմորդներ՝ հատկապես բնագիտական մասնագիտությունների ուղղությամբ, իսկ ապագայում՝ բարձր որակավորում ունեցող դասախոսներ:

Կրթության որակի բարձրացման մյուս կարևոր խնդիրն այնպիսի մասնագիտական կրթական ծրագրերի առկայությունն է, որոնք կբավարարեն համապատասխան մասնագետների պատրաստման արդի պահանջները: Դրանց մշակման համար անհրաժեշտ է ընդգրկել մասնագետների ավելի լայն շրջանակ. բացի բուհի դասախոսներից, ներառել նաև փորձառու ուսուցիչների, մանկավարժների:

Հաջորդ կարևոր խնդիրներից են պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստումը և որակավորման բարձրացումը, ինչպես նաև ամբիոնների կազմի համալրումը երիտասարդ մասնագետներով, որի համար անհրաժեշտ է մշակել հայեցակարգ:

Դասավանդումը արվեստ է, այլ ոչ թե արհեստ: Մշտապես ստեղծագործել, փորձել, կատարելագործել և կատարելագործվել. սա է դասախոսական աշխատանքի միակ ուղին:

Կրթության որակի բարելավման հիմնահարցերից է այսօր կիրառվող դրույքային մոտեցումը, որը, ինչպես ցույց է տալիս փորձը, չի արդարացնում իրեն: Դասախոսները վարձատրվում են ըստ գիտական աստիճանների և գիտական կոչումների: Օրինակ՝ ասիստենտը և դասախոսը, ըստ դրույքաչափի, 1 ուսումնական տարվա ընթացքում պարապում են ավելի շատ ժամեր, քան դոցենտը կամ պրոֆեսորը: Մեր կարծիքով՝ անկախ գիտական աստիճանից և կոչումից, դասախոսների դրույքաչափերը պետք է սահմանել միակերպ:

Ի տարբերություն մեծ համալսարանների, որտեղ մեծաքանակ խմբերի հաշվին դասախոսը ապահովված է դրույքաչափին համապատասխան ժամաքանակով, մենք, յուրաքանչյուր մասնագիտությամբ միայն մեկ խումբ ունենալով, չենք կարողանում դա ապահովել: Մեր դասախոսները ստիպված են դասավանդել 7–12 առարկա, և, բնականաբար, չի ապահովվում դասավանդման անհրաժեշտ որակը: Ուստի մենք պետք է հնարավորություն ունենանք դասախոսի ծանրաբեռնվածության մեջ ընդգրկելու միայն իր մասնագիտացմանը վերաբերող առարկաներ, որպեսզի նա լիովին տիրապետի դասավանդվող առարկաներին և ընթացքում խորանա այդ ուղղությամբ, իսկ դրույքաչափը չլրացնող ժամերը համալրել համապատասխան քանակի գիտամեթոդական ժամերով:

Չի արդարացնում իրեն նաև այսօր գործող ուսումնառության հեռակա համակարգը: Ուսանողների մեծամասնությունը չի հաճախում

դասաժամերին, քանի որ աշխատում է, իսկ նրանց չեն ազատում ուսումնառության համար: Այդ առումով, չնայած դա կպահանջի ֆինանսական ծախսեր, բայց, կարծում ենք՝ արժե անցնել հեռավար ուսումնառության համակարգին: Կրթության որակն ապահովելու համար հարկ է ստեղծել ճանաչված լավագույն դասախոսների առարկայական տեսադասախոսությունների բազա:

Վերջում նշենք, որ մեզ համար շատ կարևոր է համագործակցությունը ՀՀ համալսարանների հետ: Առիթից օգտվելով՝ ուզում եմ շնորհակալություն հայտնել ԵՊՀ, ՀՊՏՀ, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ղեկավարությանը այն աշխատանքների համար, որոնք իրականացվում են համագործակցության շրջանակներում:

-

ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳ

Մարդու կամ, ավելի լայն առումով, հասարակության՝ մարդկային գոյության իմաստի վերաբերյալ պատկերացումից է կախված կրթության՝ որպես կյանքի իմաստի սեփական ըմբռնումն ապագա սերունդներին փոխանցելու գործուն միջոցներից մեկի գնահատումը:

Խոսելով կրթության մասին՝ անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ երեք մոտեցումները.

- կրթությունը որպես պետական արժեք,
- կրթությունը որպես հասարակական արժեք,
- կրթությունը որպես անձնական արժեք:

Առաջին երկուսն արտացոլում են մշակութային այդ երևույթի խմբային նշանակությունը, ինչը հայրենական կրթության համար առաջնային էր խորհրդային ժամանակաշրջանում: Վերջին տարիներին կրթությունն ավելի հաճախ գնահատվում է որպես մարդու անձնական արժեք՝ դրսևորվելով կրթության որակի և մակարդակի նկատմամբ նրա շահադրդվածությամբ: Ընդ որում, գոյություն ունի սերտ կապ կրթության նկատմամբ մարդու վերաբերմունքի և կրթության՝ որպես մարդու ամբողջ կյանքի հարաշարժ գործընթացի ընկալման միջև:

ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՀՊՏՀ գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, փ.գ.դ., պրոֆեսոր

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՐԺԵՔ

Պետության մեջ որքան շատ մարդիկ են սովորում բարձրագույն դպրոցում, այնքան բարձր է պետության զարգացման մակարդակը:
Սենատոր Շորտ (ԱՄՆ)

Ներածություն

Ժամանակակից կրթությունը մարդկային գործունեության ամենաընդգրկուն ոլորտն է, և վերջին երկու-երեք տասնամյակում դրա սոցիալական դերը նշանակալիորեն բարձրացել է, որովհետև կրթության ուղղվածությունից և արդյունավետությունից են մեծապես կախված մարդկության զարգացման հեռանկարները: Կրթությունը (մասնավորապես՝ բարձրագույն մասնագիտական) սոցիալական և տնտեսական առաջընթացի հիմնական գործոնն է: Դա պայմանավորված է նրանով, որ ժամանակակից հասարակության գլխավոր արժեքը և հիմնական կապիտալը մարդն է, որն ունակ է որոնելու և յուրացնելու նոր գիտելիքներ և ընդունելու ոչ միօրինակ որոշումներ:

Կախված այն բանից, թե ինչ արժեքներ կձևավորվեն ժամանակակից երիտասարդ սերնդի մեջ, մեծապես պայմանավորված է հայ հասարակության հետագա զարգացումը, Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տեղն ու դերը տարածաշրջանում:

1. Բարձրագույն կրթության օգտակարության վերաբերյալ տարածված դիրքորոշումները և պատկերացումները

Ըստ գծապատկեր 1-ի՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների թիվը վերջին երկու տասնամյակում նշանակալիորեն ավելացել է: Այսպես՝ 10 հազ. բնակչի հաշվով, 2016 թ., 1995 թ. համեմատությամբ, ուսանողների թիվն աճել է 2.6 անգամ, իսկ նրանց բացարձակ թիվը՝ 2 անգամ: Գագաթնակետը եղել է 2008 թվականին. համապատասխանաբար՝ 3.4 անգամ և 2.9 անգամ: 2009 - 2016 թթ. նկատվում է կայուն նվազման միտում, ինչը հիմնականում պայմանավորված է ժողովրդագրական վիճակով, ինչպես նաև արժեհամակարգային գործոններով:



Գծապատկեր 1. ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների թվի դինամիկան[1]

Ինչո՞ւ է աճում բարձրագույն կրթության պահանջարկը: Որո՞նք են այն շարժառիթները, որ մղում են երիտասարդներին (և ոչ միայն)՝ ստանալու համալսարանական կրթություն: Ի՞նչ առավելություններ է տալիս բարձրագույնը կրթությունը համալսարանի շրջանավարտին: Ի՞նչ արժեք ունի բարձրագույն կրթությունը երկրի տնտեսության և հասարակության համար՝ ընդհանուր առմամբ:

Գոյություն ունեն տարբեր կարծիքներ բարձրագույն կրթության հիմնախնդիրների վերաբերյալ: Այդ կարծիքների բազմազանության մեջ կարելի է առանձնացնել երկուսը: Մեկը պայմանականորեն կարելի է անվանել *ավանդական*, որի պարագայում կրթությունը դիտարկվում է անհատի համար դրա արժեքի տեսանկյունից: Խոսքը

[1] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2001 (1996-1998) -2016:

վերաբերում է որոշակի կատարելատիպի հիման վրա արժանապատվության աստիճանների տարբերակմանը: Անհատի արժանավորությունը պայմանավորված է նրա զարգացածությամբ, եզակի կարողությունների բացահայտմամբ, իսկ կրթությունը արժեքավոր է այնքանով, որքանով նպաստում է անհատի զարգացմանը: Մյուս դիրքորոշումը, դարձյալ պայմանականորեն, կարելի է անվանել *ժամանակակից*: Կրթությունը դիտարկում են նաև օգտակարության տեսանկյունից: Կրթության օգտակարությունը որոշվում է նրանով, թե կրթված մարդը որքանով է ավելի պիտանի հասարակության մյուս անդամներին, քան չկրթվածը, և հասարակությունը, որտեղ գերիշխում են կրթված մարդիկ, որքանով է ավելի բարեկեցիկ ապրում, քան չկրթված մարդկանց հասարակությունը: Կրթությունն օգտակար է մարդուն, որովհետև բարձրացնում է նրա արժեքը, արժեքը ոչ թե ինքնազարգացման իմաստով, այլ, այսպես կոչված, ապրանքի արժեքը, որի նկատմամբ գոյություն ունի պահանջարկ:

Այդ դիրքորոշումների հակադրությունը ոչ միշտ է նկատելի: Դա, թվում է, ոչ միտումնավոր, քողարկվում է հետևյալ դատողությամբ. իրապես պահանջված մասնագետը պետք է համալսարանական լավ կրթություն ստացած լինի, այլ ոչ թե ինչ-որ կերպ ձեռք բերի ինչ-որ հմտություն: Նպաստելով անհատի զարգացմանը՝ մենք ներդրում ենք անում ոչ միայն հասարակության կառուցվածքում, այլև այն ոլորտների արդյունավետ գործունեության նպատակով, որոնց համար պատրաստում ենք մասնագետին: Այլ խոսքով՝ արժեքն այդ տեսանկյունից հակադիր չէ օգտակարությանը, այն ներկայացնում է օգտակարության բարձրագույն որակը:

Բարձրագույն կրթության նշանակության մասին կատարված հարցումները որոշակի պատկերացում են տալիս դրա նկատմամբ պահանջարկի մեծացման, ինչպես նաև երիտասարդների համապատասխան շարժառիթների վերաբերյալ: Գծապատկեր 1-ում և 2-ում ներկայացված են հարցերի պատասխանները:

Հարց 1. *Ներկայումս կարևո՞ր է բարձրագույն կրթությունը:*

Հարցվածների 87%-ը կարևորում է բարձրագույն կրթությունը, և միայն 9%-ն է, որ չի կարևորում:



Գծապատկեր 2. Բարձրագույն կրթության կարևորության մասին

Հարց 2. *Այսօր ո՞րն է բարձրագույն կրթություն ստանալու հիմնական նպատակը:*



Գծապատկեր 3. Բարձրագույն կրթություն ստանալու շարժառիթների մասին

Ինչպես երևում է գծապատկեր 2-ից, հարցվածների 72%-ի համար բարձրագույն կրթություն ստանալու գլխավոր շարժառիթը լավ աշխատանք (ինչը մեծ մասամբ նշանակում է բարձր վարձատրվող) գործելն է: Ըստ կարևորության՝ երկրորդը «պահանջված մասնագետ դառնալն է», իսկ երրորդը՝ «հաջողության հասնելը և կարիերան» (33%): Նշանակալի են նաև «հետաքրքիր ստեղծագործական աշխատանք գտնելու» (17%), «բարեկիրթ մարդ դառնալու» և «շրջապատող մարդկանց հարգանքին արժանանալու» շարժառիթները:

Այսպիսով՝ վերոնշյալ ոչ խոր ուսումնասիրությունը որոշակի պատկերացում է տալիս այն մասին, թե ներկայումս բարձրագույն կրթությունն ինչ տեղ է զբաղեցնում մարդկանց արժեհամակարգում: Այդուհանդերձ, ուսումնասիրությունն առնչվում է բարձրագույն կրթությանը՝ որպես անհատական արժեքին:

2. Բարձրագույն կրթությունն արժեքների երեք շերտերում

Կրթությունը ժամանակակից հասարակական զարգացման հիմնարար արժեքներից է: Դա նշանակալիորեն կապված է յուրաքանչյուր մարդու կենսագործունեության մեջ բուն կրթության և կրթվածության աստիճանի բարձրացման հետ: Շատ կարևոր է մարդու պատշաճ վերաբերմունքն իր կրթության մակարդակի և որակի նկատմամբ: Կրթության շնորհիվ կարելի է ոչ միայն պահպանել հասարակության արժեքները պատշաճ մակարդակում, այլև հարստացնել և զարգացնել դրանք: Խոսելով կրթության արժեքների մասին՝ անհրաժեշտ է դիտարկել արժեքների երեք շերտ. կրթությունը որպես պետական արժեք, հասարակական արժեք, անհատի արժեք: Բարձրագույն կրթության արժեքն առավելապես աշխարհայացքի փոփոխության մեջ է:

Բարձրագույն կրթությունը որպես պետական արժեք: Տեխնոլոգիայի ազգային կլանող կարողության վրա էական ազդեցություն է ունենում տնտեսության մեջ բարձրագույն կրթությամբ զբաղվածների թիվը: Բարձրագույն կրթության մեջ կատարված ներդրումներն ուղղակիորեն անդրադառնում են գիտելիքի կլանող կարողությանը նպաստող մարդկային կապիտալի կուտակման վրա: Ըստ վերլուծաբանների՝ 14 և ավելի տարիների կրթական ցենզ ունեցող աշխատողներն ապահովում են ԱՄՆ-ի ՀՆԱ կեսից ավելին, Ռուսաստանում զբաղվածների 25%-ը կազմող բարձրագույն կրթությամբ աշխատողներին բաժին է հասել ՀՆԱ 56%-ը:

Բարձրագույն կրթությունը որպես հասարակական արժեք: Կրթությունը ոչ միայն մշակութային երևույթ է, այլև հասարակության սոցիալական ենթակառուցվածքներից է: Կրթության բովանդակությունն արտացոլում է հասարակության վիճակը, պայմանավորում մի կարգավիճակից մյուսին անցումը: Ներկայումս XX դարի արդյունաբերական հասարակությունից անցում է կատարվում XXI դարի հետարդյունաբերական, տեղեկատվական կամ գիտելիքի հասարակություն: Գիտելիքահենք հասարակության ձևավորման համար, որը գիտելիքահենք տնտեսության միջավայրն է, բարձրագույն կրթությամբ տնտեսապես ակտիվ բնակչությունը պետք է կազմի շուրջ 60%:

Կրթության զարգացումը պայմանավորված է հասարակության գործունեության բոլոր գործոններով և պայմաններով. տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային և այլն:

Բարձրագույն կրթությունը որպես անհատական արժեք: Բարձրագույն կրթությունը երիտասարդներին օգնում է դառնալ ան-

հատականություն, այսինքն՝ հասարակության լիարժեք անդամ, որն ունի որոշակի սոցիալական կարգավիճակ: Դա բուհում ուսումնառելը որոշարկում է որպես երկրորդական սոցիալացման գործընթաց: Առաջնային սոցիալական հաստատություններում, այսինքն՝ ընտանիքում, դպրոցում ստացած սոցիալական գիտելիքները և փորձը սոսկ հիմք են, առանց որոնց անհնարին է երկրորդային սոցիալացումը, որն ուղղված է անհատի անձնական որակների կայացմանն ու բարձր սոցիալական կարգավիճակի ձեռքբերմանը:

Պետության, հասարակության, ընտանիքի ու դպրոցի գլխավոր խնդիրը վերոնշյալ արժեքների երեք շերտերի ներդաշնակության ապահովումն է, ինչը հնարավորություն կընձեռի պատրաստելու երկրի կայուն զարգացման համար անհրաժեշտ, իրական արժեքներով առաջնորդվող բարձրագույն որակավորմամբ մասնագետներ:

ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՊՏՀ փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի վարիչ, փ.գ.դ., պրոֆեսոր

ԳԻՏԵԼԻՔԸ ՈՐՊԵՍ ԱՐԺԵՔ

Քառասունհինգ տարի է, ինչ զբաղվում եմ դասախոսական աշխատանքով: Այդ տարիների ընթացքում կարողություններիս սահմաններում ուսանողներին հաղորդել եմ գիտելիքներ, որոնք ունեցել են արժեքային բնույթ: Ուսանողներն, իրենց հերթին, յուրացրել են այդ գիտելիքները և նույնպես ընդունել որպես արժեք, որովհետև գիտելիքով են պայմանավորել իրենց ապագան՝ առաջընթացը հասարակական աստիճանակարգում, իմաստնությունը, համեմատաբար հանգիստ ու ապահով կյանքը և այլն:

Տեսության մեջ գիտելիքի՝ որպես արժեքի ըմբռնման սկզբնավորողը Սոկրատեսն է: Քննադատելով սոփեստների ծայրահեղ հարաբերապաշտությունը (ռելյատիվիզմ)՝ ըստ որի կայուն և անփոփոխ գիտելիքներ, բարոյական արժեքներ, պետության օրենքներ գոյություն չունեն, ամեն ինչ հարաբերական է ու անցողիկ, Սոկրատեսը կարծում էր, որ նման քարոզչությունը ծնում է ցինիզմ և անհարգալից վերաբերմունք ճշմարտության, բարոյականության, նախնիների ստեղծած ավանդույթների և օրենքների նկատմամբ: Մինչդեռ, եթե մարդն իմանա, թե ինչ են բարին, արդարը, ապա կգործի մարդավայել, կլինի առաքինի ու երջանիկ: Ճշմարիտ գիտելիքը բարոյական կատարելության աղբյուր է, բարիք, որին հետևող մարդը ձեռք կբերի հոգու անխռով վիճակ:

Գիտելիքը բարձրագույն առաքինություն է, բարիք, իսկ տգիտությունը՝ չարիք: Առաքինությունները մարդը ձեռք է բերում ճանաչողության և ինքնաճանաչողության միջոցով, համոզված էր Սոկրատեսը:

«Գիտելիքը բարիք է» կարգախոսը Եվրոպայում պահպանվեց մինչև XVII դարը, երբ անգլիացի փիլիսոփա Ֆրենսիս Բեկոնը հռչակեց «Գիտելիքը ուժ է» կարգախոսը:

Վաղ միջնադարի հայ նշանավոր փիլիսոփա Դավիթ Անհաղթը, հետևելով Արիստոտելին, փիլիսոփայական գիտելիքի մեջ առանձնացրեց տեսական և գործնական բաժիններ (ըստ Արիստոտելի՝ երրորդը գեղարվեստականն էր):

Գործնական գիտելիքն է (բարոյագիտություն, տնտեսագիտություն, քաղաքագիտություն), ըստ Անհաղթի, մարդուն և հասարակությանը ազատում արատներից և առաքինության ուղին ցույց տալիս, օգնում հասնել բարուն և գեղեցիկին, ընտրել բարին, մերժել չարը և ապրել առաքինի կյանքով, որովհետև առաքինությունը երջանկություն է, իմաստնության մայրը, երջանիկ է նա, ով ապրում է առաքինությանը համապատասխան, չի տրտմում ո՛չ փորձությունների, ո՛չ արտաքին պարտադրանքների, ո՛չ հարստության, ո՛չ ունեցվածքի, ո՛չ էլ դրանց կորստի դեպքում: Դավիթ Անհաղթը տեսական (բացահայտում է ճշմարիտը) և գործնական (բացահայտում է բարին) բաժիններից նախապատվությունը տալիս է բարուն և իր միտքը հիմնավորելու համար վկայակոչում Պլատոնի հետևյալ խոսքերը. «Փիլիսոփա է ոչ թե նա, ով շատ բան գիտի, ոչ էլ նա, ով շատ բաների մասին է խոսում, այլ նա, ով անբիծ ու անարատ կյանք է վարում»: Անհաղթը ճշմարիտի և բարու փոխհարաբերության խնդրում առավելությունը տալիս է բարուն և կարծում, որ, հանուն բարու, կարելի է երբեմն մեղանչել ճշմարտության դեմ:

Ժողովրդական պատկերացումներում նույնպես գիտելիքը բացարձակ արժեք է դիտվել և նույնիսկ համարվել «մարդ դառնալու» կարևորագույն գործոն:

Բայց վերջին 20–25 տարիների ընթացքում հասարակական գիտակցության և հոգեբանության մեջ տեղի ունեցած ձևախեղումների հետևանքով ուսանողների միջավայրում դիտվեց սահուն անցում գիտելիքից դեպի դիպլոմ, այսինքն՝ գնահատվեց ոչ այնքան գիտելիքը, որքան գիտելիքով չամրագրված փաստաթուղթը:

Ինչո՞ւ կորավ հարգանքը գիտելիքի՝ որպես արժեքի նկատմամբ: Այդ ո՞ր երկրում է, որ ուսանողը հսկայական գումար է վճարում, միաժամանակ ամեն ինչ անում, որպեսզի առանց գիտելիքի դիպլոմ ձեռք բերի:

Ինչո՞ւ աշակերտը կորցրեց պատկառանքը ուսուցչի, ուսանողը՝ դասախոսի նկատմամբ: Ինչո՞ւ են աշակերտն ու ուսանողը ուսուցչի ու դասախոսի հանդեպ իրենց պահում այնպես, կարծես սոցիալականացման գործընթաց չեն անցել: Ինչո՞ւ ուսուցիչն ու դասախոսը կորցրին իրենց սրբի լուսապսակը: Ինչո՞ւ գիտելիքի յուրացման ու տիրապետման գործընթացը փոխարինվեց դրամով (որպես ուսման վարձ) դիպլոմ ձեռք բերելուն:

Թվարկենք այն գործոնները, որոնք, մեր կարծիքով, արժեզրկեցին գիտելիքը և այն կրողին (առաջնային և երկրորդային պատճառների առանձնացումը թողնում ենք ընթերցողին):

Առաջին՝ փլուզվեց ԽՍՀՄ-ը՝ իր հետ տանելով այն արժեհամակարգը, որով ապրել էր խորհրդային հասարակությունը:

Նախկին արժեքները դադարեցին գործելուց, նորերը չձևավորվեցին: Հասարակությունը հայտնվեց արժեքային դատարկության մեջ: Արժեքներով ապրելու ժամանակ ու տրամադրություն էլ չկար, որովհետև հասարակությունը հայտնվեց բազմաբնույթ ճգնաժամերի մեջ: Գոյատևման խնդիրը մարդուն ստրկական կախվածության մեջ դրեց աշխատանքից, գործատուից: Նա փակեց իր «սրտի դավթարը», արեց այն, ինչ պահանջում էին իրենից՝ անտեսելով մասնագիտությունը, պատիվը, կոչումն ու արժանապատվությունը:

Այս հորձանուտի մեջ հայտնվեցին նաև ուսուցիչն ու դասախոսը, գիտնականն ու մտավորականը: Ովքեր չհամակերպվեցին՝ հեռացան: Բազմաթիվ փորձառու ուսուցիչներ դուրս մնացին դպրոցներում իրականացվող բազմաբնույթ ռեֆորմների պատճառով, փոխարենը՝ դպրոց թափանցեցին փորձ, նվիրում, երբեմն անհրաժեշտ գիտելիք չունեցողները, որոնց համար դպրոցը, մանկավարժությունը ոչ թե կոչում էին, այլ պարզապես վճարովի աշխատանք:

Ցածր աշխատավարձը ստիպեց ուսուցչին մտնել աշակերտի (նրա ծնողների) գրպանը՝ զբաղվել մասնավոր գործունեությամբ, աշակերտին տանել իր տուն, նրան տեսանելի դարձնել իր կենցաղավարությունը, գործոններ, որոնք ուսուցչին դարձրին «հողեղեն»: Պարզ դարձավ, որ գնահատական ստանալը միայն գիտելիքով պայմանավորված չէ: Այս արատավոր երևույթը աշակերտն իր հետ բերեց բուհ և, որպես ուսանող, նույնկերպ վարվեց դասախոսի հետ: Կրակին յուղ լցրին մեր որոշ կոռումպացված դասախոսներ: Ահա թե ինչու առաջին և երկրորդ կուրսերում դասախոսների զգալի մասը զբաղված է ոչ այնքան իր բուն գործով, որքան դպրոցի բացթողումները շտկելով:

Երկրորդ՝ տարեցտարի ահագնացող արտագաղթը նվազեցրեց աշակերտների թիվը դպրոցում, ուսանողներինը՝ բուհում: Շատ բուհեր ուսանողների մեծ պակաս ունեն: Բուհն ուսանողով ապահովելու համար մեղմվեցին ընդունելության քննության պահանջները. որոշ բուհերում ուսանող են ընդունում ըստ ատեստատի գնահատականների, իսկ ոչ պետական բուհերում ընդունելությունը կատարվում է հարցազրույցով: Արդյունքում՝ սովորելու ձգտում ունեցող ուսանողների կողքին հայտնվեցին վճարունակ երիտասարդներ: Այստեղից էլ՝ տարեցտարի նվազող պահանջները գիտելիքի գնահատման առումով: Գաղտնիք չէ, որ բուհում են հայտնվում տառերը մի կերպ իրար կապող երիտասարդներ, ովքեր ոչ միայն գիտելիք չունեն, այլև վարվեցողության տարրական կանոններին չեն տիրապետում: Նրանց համար գիտելիքը ոչ միայն արժեք չէ, այլև, մեծ հաշվով, գլխացավանք է:

Երրորդ՝ համակարգիչը, համացանցն ու բջջային հեռախոսը պատանիներին, երիտասարդներին կտրեցին գրքից, համակողմանի ու հիմնարար գիտելիք ձեռք բերելու ցանկությունից: Ուսանողների ձեռքին մեծ մասամբ հեռախոս է, ոչ թե դասագիրք ու գիրք: Շատ ուսանողներ կիսամյակի ընթացքում զբաղված են ոչ թե գրականություն կարդալով, գիտելիք ձեռք բերելով, այլ թեստեր սերտելով:

Չորրորդ՝ խիստ հակասական դեր կատարեցին ոչ պետական բուհերը: Դրանց դերն, անշուշտ, դրական էր պետական բուհեր չընդունվածներին կամ չդիմածներին սովորելու հնարավորություն տալու առումով: Այդ բուհերում սովորողների մեջ քիչ չէին և չեն խելացի, սովորելու ձգտում ունեցողները, ովքեր ավարտելուց հետո հաջողությամբ աշխատում են պետական և ոչ պետական հատվածներում, երբեմն զբաղեցնում բարձր պաշտոններ: Բացի այդ, շատ երիտասարդներ, ովքեր պետական բուհերում սովորելու հակում կամ համապատասխան պատրաստվածություն չունեին, բայց վճարունակ էին, փողոցից կտրվեցին, մտան լսարան: Եվ վերջինը՝ այդ բուհերում աշխատող շատ դասախոսներ կարողացան սոցիալական հարցեր լուծել, բայց վատն այն էր, որ այդ հաստատություններում (աննշան բացառությամբ) հայտնվեցին բազմաթիվ անգրագետ ու անկիրթ երիտասարդներ: Նրանք ինչպես թերուս ընդունվում, այդպես էլ ավարտում են (դարձյալ աննշան բացառությամբ), ձեռք են բերում դիպլոմ, որը երբեմն օգտագործում են որպես մուրճ:

Հինգերորդ՝ նախկինում դպրոցից բուհ տանող ճանապարհը երկար էր: Մինչև բուհ հասնելը շրջանավարտները սովորում էին զանազան տեխնիկական ուսումնարաններում, տեխնիկումներում, մաս-

նագիտանում որոշակի ոլորտներում և ընդունվում աշխատանքի: Այսօր դպրոցից բուհ տանող ճանապարհը շատ է կարճացել. շրջանավարտը, դպրոցից դուրս գալով, բախում է բուհի դուռը: Գիտելիք, մասնագիտություն ձեռք բերելու հիմնական վայրը դարձել է բուհը: Բոլորն այստեղ են դիմում՝ անկախ ունակություններից և հնարավորություններից:

Վեցերորդ՝ բիզնեսի պահանջների և հոգեբանության մուտքը ուսումնական հաստատություններ: Դարեր շարունակ համալսարանական կրթությունը ոչ միայն մեզանում, այլև Եվրոպայում համարվել է սուրբ գործ: Այսօր փոխվել է բուհի կարգավիճակը. խնդիրը կիրառելի, լավ վաճառվող և արագ սպառվող գիտելիք տալն է դարձել: Բուհը շուկայի համար պետք է արտադրի գիտելիք, ծառայություններ և վաճառի դրանք: Բուհը դառնում է կորպորացիա, ուսանողը՝ «հաճախորդ» (կլիենտ): «Գնորդը միշտ իրավացի է» կարգախոսը թափանցում է բուհ: Արդյունքում՝ ապագա ուսանողի և նրա ծնողի վերաբերմունքը բուհի նկատմամբ դառնում է սպառողական. հաշվի են առնում բուհի վարկանիշը, «գեղեցիկ և համոզիչ փաթեթավորումը», գովազդը, ժամանակակից կայքի առկայությունը, առաջատար է դառնում «գին–որակ» հարաբերակցությունը, համալսարանը վերածվում է գիտելիքի սպառման մեծ խանութի (սուպերմարկետների նմանությամբ):

Այնուհետև, տարվելով շուտ ու հեշտ փող վաստակելու, բարձր աշխատավարձ ստանալու գաղափարներով, մեր երիտասարդներից շատերը հետևում են ոչ թե իրենց նախասիրություններին, այլ շուկայում գոյություն ունեցող պահանջարկին կամ մասնագիտության վարկանշին, որի պատճառով անտեսվում են հիմնարար գիտությունները: Ուսանողի համար կրթությունը դառնում է ոչ թե հիմնական, այլ ընդհանուր գործունեության միայն մի կողմը՝ աշխատանքի, անձնական կյանքի հետ միասին: Նման ուսանողների գերակշիռ մասը դասերի գրեթե չի հաճախում, վատ է սովորում, նրան հետաքրքրում է ոչ այնքան գիտելիքը, որքան դիպլոմը: Իսկ դպրոցի վերջին դասարանում սովորող աշակերտների մեծ մասը դպրոցի փոխարեն հաճախում է կրկնուսույցների մոտ՝ ընդունելության քննություններին նախապատրաստվելու նպատակով:

Այսօր մեր շատ ուսանողներ չգիտեն բաներ, որ գիտեին խորհրդային դպրոցի միջին դասարանների աշակերտները:

Յոթերորդ՝ գիտելիքի և դրա կրողի նկատմամբ արժեքի կորստի առումով, փոքր դեր չխաղացին հայրենական հեռուստաընկերություն-

ները, որոնցում գրեթե բացակայում են ուսումնական, գիտահանրամատչելի հաղորդումները (բացի կրոնականից, որոնցում հաջողությամբ հուդայաքրիստոնեություն է քարոզվում): Փոխարենը՝ հեռուստացույցից բնակարան է առատորեն ներթափանցում փողոցի լեզուն, բռնության, մարդատյացության քարոզչությունը, ամենակուլ ռաբիսը, անհարգալից վերաբերմունքը գիտելիքի և դրա կրողի նկատմամբ, որոնք իդեալազրկում, հոգեզրկում են պատանուն, երիտասարդին, դարձնում ազգային արմատներից և ակունքներից կտրված անմակարդակ էակ (առանձին հեռուստաընկերությունների խիստ սահմանափակ հայագիտական, ուսումնագիտական հաղորդումները որակ չեն կազմում): Բոլորովին հիմնազուրկ և անճարակության արդյունք են երբեմն հնչող այն արդարացումները, թե հեռուստատեսությունը ժողովրդի պահանջներն է բավարարում: Ոչ մի ժողովուրդ, ազգ, չի կամենա այլասերվել, դառնալ հոգեմտավոր տհաս, մանկուրտ, բիրտ, մարդասպան: Էլիտար (բարձրաշխարհիկ, պրոֆեսիոնալ) մշակույթով աշխարհի հետ չափի մեջ մտնող ազգը արաբա-թաթարա-թրքական մլմլոցի, բռնության, անբարոյականության, «Քարե դարդի», անիմաստ, աննպատակ սերիալների պահանջ հաստատ չունի: Ազգն իր ակունքների մեջ շարունակում է մնալ բարձր բարոյականության, մարդասիրության կրող, գիտելիքը, բարձրաճաշակ արվեստը (նաև ժողովրդական, ազգային-ազգագրական, կենցաղային դրսևորումներով) գնահատող: Տվեք այդպիսի մշակույթ, և արդյունքներն իրենց սպասեցնել չեն տա: Մինչդեռ, այն, ինչ արվում է այսօր, կարծես ծրագրավորված քաղաքականություն է, որով փորձում են փչացնել մեր ազգի՝ դեռ առողջ մնացած գեները: Չեն համոզում նաև այն պնդումները, թե հեռուստաընկերությունները մասնավոր են, և իշխանությունները դրանց վրա իշխանություն չունեն: Բարձր մակարդակի խորհրդակցություններում հեռուստաընկերությունների քաղաքականության, քարոզչության վերլուծությունը, նոր ուղիների համատեղ ուրվագծումը մասնավոր հեռուստաընկերությունների իրավունքների խախտում չեն: Հաստատ է մի բան. հեռուստատեսության այսօրվա քարոզչությունն իր բնույթով, էությամբ հակազգային է, եթե չասենք՝ սադրանք ազգի նկատմամբ, որը դառնում է ազգային անվտանգության կարևորագույն խնդիր:

Այս ամենի հետևանքով ընկել է հասարակության ոչ միայն բարոյականության մակարդակը, այլև գրագիտության աստիճանը: Զանգվածային լրատվամիջոցներում բազմաթիվ են ոչ գրագետ, ոչ հայեցի խոսքն ու զրույցը, նախադասություններ՝ բազում տառասխալներով, իսկը՝ «անգրագիտության տոնավաճառ»:

Ամփոփենք: Հավանաբար, գույները խտացրի: Ամեն ինչ չէ, որ այդքան վատ է ու, ամենակարևորը՝ անդարձ կորած: Բարեբախտաբար, դեռ քիչ չեն այն պատանիներն ու երիտասարդները (երբեմն նույնիսկ կուրսերն ու լսարանները), որոնց համար գիտելիքը և՛ ուժ է, և՛ արժեք: Նրանք գիտելիքի տիրապետման ու գործնականում ներդրման մեջ են տեսնում իրենց կյանքն ու կոչումը: Ունենք հրաշալի ուսանողներ, ովքեր տիրապետում են մի քանի լեզուների, կողմնորոշվում են համացանցում, մրցույթներում գրավում մրցանակային տեղեր, աշխատում են, ապահովում իրենց մասնագիտական առաջընթացը: Հուսադրող է, որ դեռ կան ուսուցիչներ ու դասախոսներ, ովքեր սիրում են իրենց գործը, ում համար աշխատանքը ոչ միայն գոյությունը պահպանելու միջոց է, այլև կոչում, կյանքի իմաստ:

Երբ Ճապոնիայի վարչապետին հարցրել են, թե որն է իր երկրի աննախադեպ հաջողության գաղտնիքը, նա պատասխանել է. «Մենք ուսուցչին տվել ենք նախարարի չափ աշխատավարձ, պատգամավորի չափ կարգավիճակ և կայսեր չափ պաշտամունք»:

Մեր ուսուցչին պետք է վերադարձնել այն կարգավիճակը, որն ունեցել է նախկինում, նաև խորհրդային տարիներին՝ թեև համեստ աշխատավարձ, բայց մանկավարժի արժանապատվություն, սեփական առաքելության գիտակցում: 1956 թ. ԱՄՆ-ի նախագահ Էյզենհաուերը կրթության ոլորտի աշխատողների հետ խորհրդակցության ժամանակ խորհուրդ տվեց ուշադրություն դարձնել Խորհրդային Միության փորձին, նվաճումներին, կրթական ծրագրերին, այլ ոչ թե երեխաներին բթացնել՝ ստիպելով նրանց լուծել թեստեր: Մենք գնացինք հակառակ ուղղությամբ. կազմալուծեցինք խորհրդային դպրոցն ու բուհը, որոնք այդ հասարակության և համակարգի ամենակայացած կառույցներն էին: Պարզապես պետք էր փոխել գաղափարախոսությունը՝ համապատասխանեցնելով ժամանակի պահանջներին, այլ ոչ թե կրթական ծրագրերի հիմքում դնել Բենջամին Բլումի տաքսոնոմիան («Բլումի տաքսոնոմիա», 1956 թ.) և այլ պահանջներ ու առաջադրանքներ, որոնք որևէ կերպ չեն առնչվում մեր կրթական համակարգի պատմությանը, ավանդույթներին և լավագույն նվաճումներին, չեն բխում դրանցից, այլ ուղղակի նմանակումներ են: Պատմական փորձը ցույց է տալիս, որ Եվրոպայից եկող ամեն ինչ չէ, որ լավ է: Հիշենք XIX դարի հայ ազգային գործիչներից մեկի խոսքերը. «... Եվրոպայի ոչ թէ քուրչերը, այլ ճշմարիտ լուսաւորականութիւնը ունենալ կ'ուզենք նէ»[1]:

[1] Գր. Չիլինկիրեան, Յառաջաբան // Ծաղիկ, 1861, համար 1, էջ 1:

ՄԵՐԻ ԲԱԴԱԼՅԱՆ
ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, պ.գ.թ., դոցենտ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՆԱԶԱՎՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՐՈՇՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Մարդկային արժեհամակարգի մշակույթի ձևավորումը, հիմնված հասարակական համամարդկային արժեքների վրա, կանոնակարգում է մարդու անհատական և սոցիալական վարքագիծը՝ առօրյա կյանքում իրականացնելու իմացական, գործնական և անձնական խնդիրների լուծումը: Մարդու անձնական, անհատական արժեհամակարգում հիմնավոր տեղ են զբաղեցնում ազնվությունը, բարությունը, հավատարմությունը, հայրենասիրությունը, կյանքի ու մարդկանց նկատմամբ վերաբերմունքը և այլն:

Ազնվությունը պատմականորեն դիտարկվել է որպես անհատի և հասարակության փոխգործունեության հիմքում ընկած բարոյական, սոցիալական և մշակութային արժեք: Ազնվությունն իր բնույթով բարոյականության բաղադրատարր է և մի կողմից՝ պայմանավորում է գոյություն ունեցող արժեհամակարգը, մյուս կողմից՝ ձևավորվում և տարածվում է հասարակական համակարգում՝ պայմանավորելով հասարակական, պետական օրենքները, կանոնները, կարգավորելով համակարգային փոխհարաբերությունները:

Կրթական միջավայրն, ըստ էության, այն տարածքն է, որտեղ վերլուծվում, քննարկվում, դաստիարակվում և տարածվում են «ազնվություն», «արդարություն», «հարգանք» և այլ բարոյական նորմեր ու արժեքներ, ուստի կրթական գործընթացում ընդգրկվածներն իրենց գործու-

նեության շրջանակներում կրում են ազնվության, մասնավորապես՝ ակադեմիական ազնվության պահպանման և փոխանցման պարտավորություն:

Ակադեմիական ազնվությունը սահմանվում է որպես հինգ հիմնարար արժեքների՝ ազնվության, վստահության, անկեղծության, հարգանքի և պատասխանատվության պահպանման պարտավորություն՝ անկախ իրավիճակից:

Կրթական միջավայրում ակադեմիական ազնվության կողքին դրսևորվում է նաև ակադեմիական անազնվության (ԱԱ) վարքագիծ: ԱԱ-ն իր բնույթով խիստ բազմաշերտ հասկացություն է, ուստի և հետաքրքրական է դրա ուսումնասիրությունը խորքային համապատասխան շերտերի բացահայտման ու վերլուծության առումներով: ԱԱ-ի վերաբերյալ հետազոտություններ են կատարել թե՛ արտասահմանյան, թե՛ հայրենական հետազոտողները: Դրանք հնարավորություն են տալիս բուհական համակարգում ձեռնամուխ լինելու ԱԱ-ի տարատեսակ դրսևորումների բացահայտմանը և հաղթահարմանը:

ՀՀ բարձրագույն կրթության համակարգում ինչպես ուսանողների, այնպես էլ պրոֆեսորադասախոսական կազմի ակադեմիական անազնվության դրսևորումների բացահայտման նպատակով ուսանողության շրջանում իրականացրել ենք սոցիոլոգիական հետազոտություն: Առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել կրթական միջավայրում ակադեմիական անազնվության հիմնական դրսևորումների աստիճանը,
- պարզել կրթական միջավայրում ակադեմիական անազնվության դրսևորումների հիմնական պատճառները,
- առաջարկել ակադեմիական անազնվության դրսևորումների նվազեցման գործուն միջոցներ:

Առաջադրված խնդիրներին լուծում տալու համար ՀՀ առաջատար բուհերի ուսանողների շրջանում անցկացվել է սոցիոլոգիական հարցում: Հետազոտության օբյեկտիվության ապահովման նպատակով հարցումն անց է կացվել անանուն:

ԱԱ-ի դրսևորման յուրաքանչյուր տեսակի բացահայտման, դիտարկման, ուսումնասիրության նպատակով հարցաթերթիկում ընդգրկվել են որոշակի հարցեր, որոնք վերլուծելով՝ փորձելու ենք առաջարկություններ անել:

Հարցման ընտրանքը հաշվարկելու համար օգտվել ենք **GPower** համակարգչային ծրագրից[1]: Հայաստանի Հանրապետությունում ուսանողների 84 591 թվի դեպքում[2] ընտրանքը կազմել է 382:

[1] http://vahe.ucoz.ru/load/gpower/1-1-0-30
[2] www.armstat.am

Հետազոտության շրջանակներում առանձնացվել են ակադեմիական անազնվության վարքագծային դրսևորումների հետևյալ տեսակները՝

- արտագրություն, գրագողություն,
- սուբյեկտիվություն,
- համաձայնություններ,
- մոտիվացման նվազում,
- բացասական ազդեցություն որակի վրա:

Հարցաթերթիկում ներառվել են հետևյալ հարցերը.

1. Ուսումնառության ընթացքում երբևէ դիմե՞լ եք հետևյալ քայլերից որևէ մեկին (թեկուզ մեկ անգամ):
2. Ուսումնառության ընթացքում երբևէ առնչվե՞լ եք սուբյեկտիվության հետևյալ դրսևորումներից որևէ մեկին:
3. Ուսումնառության ընթացքում երբևէ օգտագործե՞լ եք համաձայնության հետևյալ տեսակներից որևէ մեկը:
4. Մոտիվացման նվազմանը նպաստող հետևյալ ո՞ր դրսևորումներին եք առնչվել ուսումնառության ընթացքում:
5. Որակի անկման պատճառ համարվող ո՞ր դրսևորումներին եք առնչվել ուսումնառության ընթացքում:

Հարցաթերթիկի առաջին՝ «Ուսումնառության ընթացքում երբևէ դիմե՞լ եք հետևյալ քայլերից որևէ մեկին (թեկուզ մեկ անգամ)» հարցին ռեսպոնդենտների 53,2%-ը պատասխանել է, որ ուսումնառության ընթացքում արտագրել է որևէ ինտերնետային կայքից, 16.1%-ը՝ որևէ թերթում կամ ամսագրում զետեղված հոդվածից, 41,9%-ը՝ որևէ գրքից, 30,6%-ն էլ ներկայացրել է ուրիշից վերցրած աշխատանք (օրինակ՝ նախորդ տարիների ուսանողներից): Հարցվածների 27,4%-ը նշել է, որ քննության ընթացքում օգտվել է ծածկագրերից, և միայն 6,5%-ն է, որ չի դիմել ակադեմիական անազնվության դրսևորման նշված դրսևորումներից և ոչ մեկին: Վերջին ցուցանիշն ակնհայտորեն ցածր է և ցավալիորեն վկայում է այն մասին, որ բարձրագույն կրթության ոլորտում ակադեմիական անազնվության դրսևորումներն զգալի տեսակարար կշիռ ունեն:

1. Ուսումնառության ընթացքում երբևէ դիմե՞լ եք հետևյալ քայլերից որևէ մեկին (թեկուզ մեկ անգամ)՝ *



Ուսանողի կողմից նման քայլերի հետագա կրկնումներից խուսափելու նպատակով առաջարկում ենք սկզբնական փուլում.

- ներկայացված նյութը գնահատել 0 միավորով,
- հանձնարարել նոր առաջադրանք,
- կրկնել այն դասընթացի ուսուցումը, որի շրջանակներում ուսանողը գրագողությամբ է զբաղվել, կարելի է տվյալ դասընթացի փոխարեն կրկնել ընտրովի առարկաների ցանկում ընդգրկված որևէ այլ դասընթաց, իսկ պարբերաբար կրկնության դեպքում հարկ է կիրառել ավելի խիստ պատժամիջոցներ՝ ընդհուպ բուհից հեռացումը:

Վերոնշյալ միջոցառումների արդյունավետ իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ է ստեղծել միասնական տեղեկատվական բազա:

Հարկ է նշել նաև, որ որոշ դասախոսներ հաճախ աչք են փակում գրագողության փաստի վրա՝ խուսափելով կիրառել համապատասխան պատժամիջոցներ: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է հատուկ պատժամիջոցներ կիրառել գրագողությունը «խրախուսող» դասախոսների նկատմամբ՝ խիստ նկատողությունից մինչև աշխատանքից ազատում: Բնականաբար, «արտագրություններ» ԱԱ տեսակը չի սահմանափակվում նշվածով. բավական մեծ տեսակարար կշիռ ունեն այլ հեղինակներից ուղղակի մեջբերումները (արտատպումը)՝ առանց աղբյուրների մատնանշման: Անգամ դասախոսությունների ժամանակ լուսապատկերներ օգտագործելիս անհրաժեշտ է հղումներ կատարել, եթե ներկայացվում է այլ հեղինակի խոսք:

Արևմուտքում գրագողության բացահայտման հատուկ ծրագրեր կան: Դրանց օգնությամբ բացահայտվում է, թե աշխատանքի որ տոկոսն է այլ տեղերից վերցված: Հայաստանում այդ հարցի լուծումը շատ ավելի բարդ է, քանի որ կարելի է անգամ որևէ էլեկտրոնային տեքստ ուղղակի հայերեն թարգմանել և ներկայացնել, և այլևս ոչ մի ծրագիր չի կարողանա բացահայտել, որ դա գրագողություն է:

Սեփական աշխատանքն իրականացնելիս անհրաժեշտ է օգտվել այլ հեղինակների աշխատանքներից, սակայն պետք է ստեղծել ամբողջությամբ նոր և յուրահատուկ գործեր՝ կատարելագործելով վերլուծական ունակությունները, գրագիտորեն կիրառելով այլ հեղինակների առաջարկած նյութերը և ունենալով սեփական հետազոտական ներդրումը:

Քանի որ նշված երևույթներից սկիզբ առած խնդիրները ծնում են ակադեմիական անազնիվ վարքագիծ, որն էլ վերջնարդյունքում բացասաբար է ազդում կրթության որակի վրա, առաջարկում ենք վերոնշյալ երևույթների կանխարգելման նպատակով մշակել համապատասխան կանոնակարգեր՝ ԱԱ-ի գնահատման մեթոդաբանություն և համապատասխան գործիքակազմ կիրառելով բարձրագույն կրթության ոլորտում: Կարևոր է, որ դրանք ոչ միայն իրավունքների և պարտականությունների շրջանակը կարգավորող փաստաթղթեր լինեն, այլ հենց ազնիվ մշակույթի ձևավորման նախապայման: Այդ փաստաթղթերի միջոցով բուհը կիրազեկի ուսանողին և դասախոսին իր ներքին արժեհամակարգի մասին, ձեռնամուխ կլինի այդ արժեքների տարածմանը, ինչպես նաև կամրագրի անազնիվ վարքագծի դրսևորման դեպքում կիրառվող պատիժները:

2. Հաջորդ՝ «Ուսումնառության ընթացքում երբևէ առնչվե՞լ եք սուբյեկտիվության հետևյալ դրսևորումներից որևէ մեկին» հարցին ի պատասխան՝ ունենք հետևյալ պատկերը. ուսանողների 75,8%-ը նշել է, որ առնչվել է սուբյեկտիվության դրսևորման այն դեպքին, երբ դասախոսը տարբեր պատճառներով ցուցաբերել է սուբյեկտիվ վերաբերմունք, 45.2%-ն ականատես է եղել դասախոսի՝ որոշ ուսանողների հանդեպ սուբյեկտիվ մոտեցման ցուցաբերմանը՝ քննությանը ուսանողի նկատմամբ պատշաճ վերահսկողություն չցուցաբերելով և թույլ տալով օգտվել ծածկագրերից: Այս հարցի շրջանակում ևս չնչին՝ 4.8% են կազմում այն ուսանողները, ովքեր երբևէ չեն դիմել սուբյեկտիվության նշված դրսևորումներից որևէ մեկին:

2. Ուսումնառության ընթացքում երբևէ առնչվե՞լ եք սուբյեկտիվության հետևյալ դրսևորումներից որևէ մեկի հետ՝ *



1. Դասախոսը տարբեր պատճառներով ցուցաբերել է սուբյեկտիվ վերաբերմունք (օրինակ՝ կախված սեռից, առաջադիմության մակարդակից, անվճար կամ վճարովի համակարգում սովորելու հանգամանքից և այլն)
2. Քննությանը դասախոսը ոչ օբյեկտիվ մեղադրանք է (օրինակ՝ արտագրության մեջ) ներկայացրել, ինչի արդյունքում ստացել եք ցածր գնահատական
3. Քննությանը դասախոսը որոշ ուսանողների նկատմամբ սուբյեկտիվ մոտեցում է ցուցաբերել (օրինակ՝ թույլատրել է արտագրել)
4. Դասախոսը ուսանողական խորհրդի անդամ հանդիսացող ուսանողների հանդեպ սուբյեկտիվ մոտեցում է ցուցաբերել (օրինակ՝ բացակայությունները զրանցելիս, գնահատելիս և այլն)
5. Չեմ առնչվել

ԱԱ «սուբյեկտիվություն» տեսակի վարքագծային դրսևորումների սահմանափակման նպատակով առաջարկում ենք.

- հստակեցնել գնահատման համակարգերի հիմքում առկա չափանիշները,
- հստակեցնել ստեղծված որոշակի իրավիճակում քննության ձևի ընտրությունը,
- կոդավորված անանուն քննատետրերով գրավոր քննություններ անցկացնել,
- համակարգչային քննությունների անցկացման՝ ՀՊՏՀ-ում գործող մոդելը կիրառել հայաստանյան մյուս բուհերում:

Չնայած այն հանգամանքին, որ սուբյեկտիվիզմը հիմնականում իր արտահայտությունն է գտնում բանավոր քննությունների ժամանակ, այնուամենայնիվ, կարծում ենք, որ, բանավոր քննությունը, լինելով կրթության գործընթացի անբաժանելի մասը, ապահովում է անձերի միջև շփումը և համապատասխան չափորոշիչների հստակեցման ու հարստացման դեպքում կարող է դառնալ կրթության որակի և ուսանողի գիտելիքների համակողմանի գնահատման արդյունավետ գործիք: Նշված առաջարկները, հնարավոր է, նվազեցնեն ԱԱ-ի դրսևորումները, սակայն, կարծում ենք՝ ակադեմիական միջավայրում անազնվության դրսևորումները ներկայացվածներով չեն սահմանափակվում: Հայտնի է, որ կանոնակարգող միջոցառումները կարող են արդյունավետ լինել գոյություն ունեցող արժեքների ամրապնդման պարագայում, իսկ վերջիններիս փոփոխման դեպքում դրանց կիրառումը, առանց երկարաժամկետ միջոցառումների, անարդյունավետ է: Հետևաբար՝ բուհերը պետք է ձեռնամուխ լինեն այնպիսի ռազմավարական քաղաքականության մշակմանը և իրագործմանը, որը ոչ միայն կբարձրացնի դասախոսի և ուսանողի պատասխանատվության աստիճանը կրթական շրջանակի նկատմամբ, այլ նաև կնպաստի արժեհամակարգի արդյունավետության մակարդակի բարձրացմանն ուղղված ռազմավարության ներդրմանը:

Երրորդ՝ «Ուսումնառության ընթացքում երբևէ օգտագործե՞լ եք համաձայնության հետևյալ տեսակներից որևէ մեկը» հարցով փորձել ենք պարզել, թե ուսանողները ակադեմիական անազնվության հաջորդ դրսևորման՝ համաձայնության ո՞ր տեսակներին են դիմել:

Ռեսպոնդենտների գրեթե կեսը՝ 48,4%-ը, նշել է, որ գնահատական ստանալու շուրջ համաձայնության են եկել դասախոսի հետ, 25,8%-ն էլ դիմել է տարբեր հոգեբանական մանիպուլյացիաների (համոզում, խղճի վրա ազդում, խնդրանք): Հարցվածների ընդամենը

1,6%-ն է նշել, որ գնահատական ստանալու համար գումար է առաջարկել դասախոսին, 8,1 %-ը դիմել է ղեկավար կազմի միջնորդությանը, իսկ 12,9 տոկոսը երբևէ չի դիմել համաձայնության որևէ տեսակի:



Դասախոսների անտարբերության վերացման, համաձայնությունների մեջ չներգրավվելու հիմնական գործուն առաջարկը նրանց եկամուտների ավելացումն է: Այսօր հայաստանյան կրթական համակարգում դասախոսի դրույքը հիմնականում կազմվում է ըստ լսարանային ժամերի: Բուհերը հակված են ներգրավելու հնարավորինս շատ ուսանողների, քանի որ բյուջեի եկամուտների հիմնական մասը գոյանում է ուսման վճարներից: Մյուս կողմից՝ կրթական ծառայությունների առաջարկի շուկան հագեցած է, իսկ պահանջարկի շուկան նվազման միտում ունի: Այս պարագայում եկամուտների ավելացման ընդունված եղանակը ուսանողական վարձավճարների բարձրացումն է, չնայած որոշ դեպքերում դա հանգեցնում է ուսանողների քանակի նվազման, իսկ արդյունքը նշանակալի չի լինում:

Կարծում ենք՝ բուհերը հավանական ուսանողների համար ավելի գայթակղիչ կդառնան, եթե հանդես գան որպես արտաքին շուկաներ, ինչպես նաև համագործակցեն հավանական գործատուների և օտարերկրյա բուհերի հետ, ինչն, իր հերթին, կբարձրացնի բուհերի հեղինակությունը՝ նպաստելով դիմորդների թվի ավելացմանը:

Հաջորդ՝ «Մոտիվացման նվազմանը նպաստող հետևյալ ո՞ր դրսևորումներին եք առնչվել ուսումնառության ընթացքում» հարցին ռեսպոնդենտների ավելի քան կեսը՝ 55,8%-ը, պատասխանել է, որ համաձայնության է եկել բացակայություններն ամրագրողների հետ /կուրսի ավագ, ամբիոնի աշխատակից և այլն/, 25,6%-ը նշել է, որ դիմել է հոգեբանական ներազդման տարբեր միջոցների, 9,3%-ը ներկայացրել է կեղծ բժշկական տեղեկանք, 23,3%-ը, ավելորդ ակտիվություն դրսևորելով, խանգարել է դասը, իսկ 14,0%-ը նշել է, որ երբևէ չի առնչվել մոտիվացման նվազմանը նպաստող վերոնշյալ դրսևորումներից որևէ մեկին:

4. Մոտիվացիայի նվազմանը նպաստող հետևյալ ո՞ր դրսևորումներին եք առնչվել ուսումնառության ընթացքում *



Կրթական հաստատությունների ռազմավարության հիմքում պետք է դրվեն ուսանողի և աշխատաշուկայի փոխգործակցության մեխանիզմները: Գործնականում դա կարող է արտահայտվել այսպես. ուսումնառության ընթացքում ուսանողները դասընթացների մի մասը անց են կացնում այդպիսի հաստատություններում՝ որոշակի խնդիրների լուծման ուղղությամբ աշխատելով: Դրանք բավական արդյունավետ կարող են լինել թե' կրթության որակի բարձրացման, թե' ուսանողների և դասախոսների մոտիվացման աճի տեսանկյուններից: Այսպիսի համալիր միջոցառումների իրականացումը պետք է ուղեկցվի պետության կողմից նպատակային ոլորտների հետ համատեղ աջակցող քաղաքականության իրագործմամբ: Արդյունքում՝ ուսանողները հեշտությամբ աշխատանք կգտնեն այդ կառույցներում: Նման ծրագրերի հաջողության պարագայում դրանք կդառնան զանգվածային և կնպաստեն ակադեմիական միջավայրում արժեհամակարգերի վերափոխմանը՝ նվազեցնելով անազնվության դրսևորումները:

Հաջորդ՝ «Որակի անկման պատճառ համարվող ո՞ր դրսևորումներին եք առնչվել ուսումնառության ընթացքում» հարցով նպատակ ենք հետապնդել պարզելու, թե ուսանողները ակադեմիական անազնվության հետևյալ՝ որակի անկման պատճառ համարվող վարքագծային դրսևորումներից որի հետ են առնչվել:

Հարցվածների 69,2%-ը նշել է, որ ուսումնառության ընթացքում առնչվել է դասախոսի կողմից դասընթացի բովանդակության չարդիականացմանը, 17,3%-ը փաստել է, որ նոր դասընթացն ուսուցանելու համար դասախոսը ուսանողներից այլ դասընթացի նյութեր է ձեռք բերում, 5,8%-ը մատնանշել է քննությունների վերահանձնումների ժամանակ անցողիկ շեմի իջեցումը, իսկ 50%-ը նշել է, որ դասախոսը ոչ պատշաճ վարքագիծ է դրսևորում լսարանում, ինչը վրդովեցուցիչ է: Հարցվածների միայն 7,7%-ն է նշել, որ չի առնչվել որակի անկման պատճառ համարվող դրսևորումներից որևէ մեկին:

5. Որակի ևվազմանը նպաստող հետևյալ ո՞ր դրսևորումներին եք առնչվել ուսումնառության ընթացքում *



Որակի բարելավմանն ուղղված միջոցառումների շրջանակում, կարծում ենք, արդյունավետ կարող են լինել արտաքին բուհերի հետ համագործակցությամբ նոր ամբիոնների, ուսումնական ծրագրերի ստեղծումը՝ օտար լեզվով կամ խառը լեզուներով ուսուցմամբ: Իսկ դասախոսել կարող են մեր հայրենակիցները, ովքեր դասավանդում են աշխարհի առաջատար ակադեմիական հաստատություններում: Սա զգալիորեն կբարձրացնի մեր դասախոսների մոտիվացման աստիճանը, քանի որ հնարավորություն կունենան ընդլայնելու իրենց համագործակցության հնարավորությունները:

Նշենք, որ հարցվածների գերակշիռ մասը՝ 79%-ը, սովորում է առկա բակալավրիատում, մնացածը՝ այլ կրթաձևերում. հեռակա բակալավրիատ, առկա մագիստրատուրա և հեռակա մագիստրատուրա: Հարցվածների 79%-ը իգական, իսկ 21%-ը արական սեռի ներկայացուցիչներ են:

Այսպիսով՝ սույն հետազոտության շրջանակներում մեր ներկայացրած առաջարկությունները կարող են նվազեցնել ակադեմիական անազնվության դրսևորումները, ինչն էլ, իր հերթին, կնպաստի ակադեմիական համակարգի արդյունավետության և հասարակության մեջ դրա նկատմամբ վստահության մակարդակի բարձրացմանը:

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ-ԿԱՏՎԱԼՅԱՆ
ՀՊՏՀ փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, փ.գ.դ.

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆԻ՝ ՀԱՅԿԱԿԱՆԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Պատմականորեն ընդունված է այն տեսակետը, որ ընտանիքը հասարակության կազմավորման կարևոր բջիջն է, նրա հայելին, և հակառակը: Ինչպիսին ընտանիքն է, այնպիսին էլ հասարակությունն է կամ ազգային կյանքը, և հակառակը: Կամ, կրկնելով Կոնֆուցիոսին, ասենք հետևյալը՝ ընտանիքը փոքր պետություն է, պետությունը՝ մեծ ընտանիք: Այս նշվածներին կավելացնեի հետևյալը. կրթությունը այն մանրադիտակն ու խոշորացույցն է, որը հստակ պատկերացում է տալիս այն մասին, թե ինչպիսին է տվյալ հասարակությունը, ազգային հանրությունը, պետությունը, վերջիններս ինչպիսի վերաբերմունք ունեն իրենց ներկայի ու ապագայի նկատմամբ, ինչպես են պատկերացնում անհատի ձևավորման ու ինքնադրսևորման հնարավորությունները, ինչպիսի պայմաններ են ստեղծում ինքնաճանաչման, ինքնահաստատման, անհատ–հասարակություն փոխհարաբերության ձևավորման համար: Այս հարցադրումներն ինքնին նշանակում են, որ կրթության վրա դրվում են բազմակողմանի ու լուրջ պատասխանատվություններ, գործառութային անելիքներ: Եվ հատկանշական է նաև այն, որ յուրաքանչյուր շրջադարձային դարաշրջանում այս ամենը վերաարժեքավորվում է յուրովի ու ինքնատիպ դրսևորումներով: Եվ, ուղղակիորեն, կարող ենք ասել՝ այդպիսին է նաև արդի հայաստանյան ու հայկական իրականությունը, այդ թվում՝ արցախյան

ազգային կյանքը: Նկատի ունենալով առաջադրվող և հիմնարար այս ներածականը, բայց նաև կարևոր սկզբունքային ու կանխորոշիչ սկզբունքը՝ ուշադրություն դարձնենք կրթությանն առնչվող մի քանի, մեր կարծիքով, առավել հատկանշական հիմնախնդիրների, որոնց շարքում առանձնապես կարևորում ենք այն հարցի պարզաբանումը, թե որքանով է կրթությունը դառնում ազգային ինքնության, ազգայինի պահպանման ու զարգացման կարևոր միջոց, թե որքանով է հնարավոր ազգային կրթությունը և ինչո՞ւ:

Առավել ընդգրկուն նշանակությամբ՝ կրթությունը, ներառյալ դա իրականացնող ուսումնական, լայն իմաստով՝ դպրոցական համակարգը, հոգևոր մշակույթի ամենակազմակերպված ոլորտն է, համակարգ, որ ուղղակի կամ անուղղակի ձևով իր ազդեցությունը, պահանջներն ու ստեղծագործական ազդակներն է տարածում հոգևոր (գեղանկարչություն, քանդակագործություն, երաժշտություն, գեղարվեստական գրականություն, գիտություն) և (նյութական՝ արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն) և այլ ոլորտների կազմակերպման ու զարգացման վրա: Կրթությունն է ապահովում անհատի ու հասարակության ինքնակազմակերպումը, ճշգրտում է ինքնաբացահայտման հնարավորությունները, ներքին մղիչները:

Եվ ահա, ելնելով վերը նշվածներից, և նկատի ունենալով հայկականը, հայաստանյանը, առաջադրենք կրթության ընդհանուր ու մեթոդաբանորեն կողմնորոշիչ հետևյալ ըմբռնումը: Կրթությունը մարդակերտման ու մարդու հասարակայնացման, անհատականության, հայկականի ձևավորման, հասարակական, ազգային կյանքը համակարգայնորեն կազմակերպելու ամենահիմնավորված ու ընդհանրացված միջոցն է պատմականի, տրամաբանականի ու արդիականի հնարավորություններով, չափանիշներով՝ ուսուցման, գիտելիքների յուրացման, գործադրման միջոցներով, պատմականորեն ձևավորված իդեալների ու նպատակների իրականացման համար, մարդկային հնարավորությունները բազմակողմանիորեն զարգացնելու ու դրանք կյանքի կոչելու, կյանքը, մարդկային հարաբերությունները դրականի՝ արժեքայինի յուրացման ու դրանք իրականության վերածելու չափանիշներով, դաստիարակության նպատակով:

Այստեղից բխում է նաև երկու հարացուցային պահանջ՝

ա. Կրթության կազմավորման անհրաժեշտությունը որպես ազգայինի պահպանման ու ինքնակազմակերպման, հայացման կարևոր նախապայման, անհատի համակողմանի զարգացման ու անհատականության ձևավորման միջոց:

բ. Կրթությունը որպես հայրենիքին նվիրվածության, հայ մարդու ձևավորման, հայկական որակների պահպանման, հայ-

րենասիրական ոգու ու գիտակցության հասունացման, հարստացման պատմականորեն ինքնահաստատված գործունեության ոլորտ:

Այն, որ կրթության հիմնախնդիրն ունի ընդգծված ազգային նշանակություն ու զգալիորեն պայմանավորում է նաև քաղաքական, քաղաքակրթական, մշակութային գործընթացների հաջողություններն ու գործընթացները, վկայում են նաև հետևյալ փաստերը.

- Խորհրդային Միության, այդ թվում՝ Հայաստանի բոլոր հաջողությունները՝ գիտություն, տեսական ու գործնական տիեզերագիտություն, ռազմական տեխնիկա, տնտեսագիտություն և այլն, զգալիորեն պայմանավորված էին կրթության աննախադեպ առաջադիմությամբ ու նվաճումներով:

- Այս է նաև պատճառը, որ Ղարաբաղյան շարժման, հայկական նոր պետականության ստեղծման գաղափարական այլ հիմնախնդիրների մեջ կարևորագույն տեղ էր հատկացվում նաև ազգային, հայեցի կրթությանը, դրա լավագույն ավանդույթների վերականգնմանը, զարգացմանը, նոր սկզբունքների մշակմանն ու ձևավորմանը՝ որպես ազգայինի, հայկականի պահպանման ու զարգացման կարևոր նախապայման, ազգային արժեքային համակարգի բարձրագույն դրսևորում ու դրա ամրապնդման գրավական, կողմնորոշիչ ու հրամայական: Իսկ այն, թե դրանք որքանով կյանքի կոչվեցին, ինչ վիճակում է գտնվում ներկայիս հայաստանյան կրթական համակարգը, այլ խնդիր է, հասարակական–քաղաքական այլ իրողությունների արտահայտություն:

- Եվ, թվում է, թե խնդիրը լուծվեց՝ ուսումնական ծրագրերում ներառելով Հայաստանին վերաբերող նոր դասընթացներ, առարկաներ, դասագրքեր, հարստացնելով բովանդակային մանրամասները և այլն: Օրինակ՝ հայ եկեղեցու պատմության, քաղաքացիական կրթության, հայրենագիտության, հայոց լեզվի ու պատմության դասաժամերի ավելացում և այլն: Ասվածը, որոշ տարբերություններով, վերաբերում է դպրոցական, հետդպրոցական ու բուհական բոլոր ուսումնական հաստատություններին: Բայց ազգային կրթության ձևավորումն ավելի խոր և բազմախորհուրդ իրողություն է, քան գոյություն ունեցող վիճակը, իրական կամ ձևական փոփոխությունները: Ավելին, եթե իրականացվող քաղաքականությունը ենթադրում էր ռուսական դպրոցների սահմանափակում կամ վերացում, դասաժամերի կրճատում, ներկայումս ավելի ընդգրկուն են անգլերեն և այլ լեզուներով թեքում ունեցող դպրոցները, բուհական համակարգերում ավելացել են դրանց ժամաքանակները, կազմավորվել են ամերիկյան, ռուսական, ֆրանսիական և այլ բուհական և լեզվական թեքումներով ու-

սումնական հաստատություններ: Այսինքն՝ ըստ էության, խնդիրը չի վերացել, այլ ավելի է խորացել և, հավանաբար, դրանից խուսափել հնարավոր չէ, բայց նաև ակնհայտ է, որ նշված կարգի բուհերը գտնվում են արտոնյալ վիճակում և վայելում են ավելի մեծ հեղինակություն, քան բուն հայաստանյան ուսումնական հաստատությունները:

- Չի արդարանում ու նպատակին չի ծառայում նաև ավագ դպրոցի կազմակերպումը: Կազմակերպական, կարգապահական, դաստիարակչական, նաև գիտելիքային առումներով ցածր մակարդակում են գտնվում ավագ ու հանրակրթական դպրոցները: Որոշ դպրոցներ կարծես վերածվել են ընտանեկան կալվածքների՝ ծնողից զավակ տնօրինության անցման արատավոր գործընթացով: Գերակշռող է կին ուսուցիչների թիվը, ինչը բացասական ազդակներ է հաղորդում ողջ կրթական համակարգին՝ դրա ցանկացած բաղադրիչով: Դա, դժբախտաբար, իր արտահայտությունն է գտնում նաև բուհական համակարգում: Դպրոցներում ձևավորվող բոլոր հայտնի ու անհայտ բացասական իրողությունները իրենց տարաբնույթ արտահայտությունն են ստանում նաև բուհական համակարգում: Ցածր ու անորոշ են դաստիարակվածության ու ինքնաարժեքավորման, ինքնապատասխանատվության մակարդակները: Աճում է անտարբերությունը: Նվազում է միջին ու կայուն աշակերտական, ուսանողական կազմը: Թեև պակաս է լավագույնների, նվիրյալների թիվը, բայց ոգևորողը, հուսադրողը հենց նրանք են՝ իրենց իդեալներով ու նպատակներով, ինքնագիտակցված պահվածքով ու սովորելու ցանկությամբ: Այնինչ, հասարակական որոշ շերտերի համար բուհում սովորելն ունի զուտ ձևական ու ինքնացուցադրման նպատակ: Ծավալվող արտագաղթը ներառում է նաև մտավոր ու ուսումնատենչ կարողություններով օժտված պատանիների, երիտասարդների մի մասին:

- Որոշ աննշան բացառություններով, ձևական ու ցուցադրական բնույթ են կրում նախաբուհական ու բուհական հաստատությունների կառավարման խորհուրդները, որոնցում հաճախ ընդգրկված են լինում ուսումնական գործին անծանոթ, անհրաժեշտ գիտելիքներից ու արժեքային կողմնորոշումներից զուրկ անձնավորություններ:

- Չափազանց կասկածելի է սնկի պես գերաճած մասնավոր բուհերից ու ուսումնական այլ հաստատություններից շատերի գոյությունը:

Նշված այս և այլ կարգի թերությունները ուղղակիորեն հակադրվում են կրթական, առավել ևս ազգային իդեալներին ու նպատակներին, ուսումնական գործընթացներին, կրթման ու դաստիարակության սպասելիքներին, ազգային ավանդույթներին, նսեմացնում են կրթական համակարգի նշանակությունը: Միաժամանակ, կասկածելի

են դառնում նաև արևմտյան ուսումնակրթական համակարգի պահանջներին համապատասխանող «բարեփոխումները», որոնք ոչ միշտ ունեն հուսադրող հետևանքներ և հաճախ հակադիր են նաև ազգայինին, հայկականին ու հայեցիին, հաշվի չեն առնում հայության ամրակայված ավանդույթներն ու կրթության նկատմամբ դրական ու բացասական նոր փոփոխությունների պատճառները, կրթական գործընթացների դրական ու բացասական հետևանքները բարոյական, գիտական, ընդհանուր մարդաբանական ու ազգային առումներով:

Ուշադրություն դարձնենք մեկ այլ՝ կրթության համար մեթոդաբանական էական նշանակություն ունեցող կարևոր իրողության ևս:

Ներկայումս կրթության գերնպատակ ու հասարակական կյանքի զարգացման կարևոր միջոց է համարվում հետևյալ պահանջը և հիմնարար բանաձևային սկզբունքը՝ գիտելիք – կարողություններ – հմտություններ: Առաջին հայացքից թվում է, թե սա մեծապես կնպաստի կրթական համակարգի, նաև ազգային կյանքի, տնտեսության, գիտության զարգացմանը: Բայց իրականում դա թվացյալ է և զգալիորեն շեղվում է նաև ազգային կրթության բուն հրամայականներից: Այսինքն՝ աղավաղվում, անտեսվում է այն հանգամանքը, որ կրթությունը, առավել ևս հայեցի կրթությունը, պետք է նկատի ունենա մարդաբանական, հայկաբանական այն կողմնորոշվածությունը, որ կրթության բուն նպատակը, նշվածից բացի, պետք է լինեն նաև հայկականի, ազգայինի հարստացումները, արժեքայինը և արժեհամակարգայինը: Այն, որ կրթությունը հայության ինքնության ձևավորման, տարբեր տեսակի հակահայկական, հակազգային ու թշնամական ուժերի դեմ մղվող պայքարում ունի ռազմավարական կարևոր նշանակություն և յուրահատուկ ձևով խտացնում է մշակութային ինքնահաստատման բոլոր հնարավորություններն ու պահանջները, կասկածից վեր է:

Այնինչ, նշված բանաձևման հետևանքով մարդը վերածվում է յուրատեսակ մեքենայի, քանզի հարաբերականորեն, գուցե փոքր-ինչ չափազանցված, այդ ամենը հատուկ է նաև արդի տեխնոլոգիական միջոցներին, արհեստական բանականության բոլոր դրսևորումներին՝ ծրագրային որոշակի նպատակներով ու գիտելիքների, կարողությունների, հմտությունների հնարավորություններով, գործնական որոշակի հեռանկարով: Տեխնիկան, ըստ էության, արհեստավարժվել է այդ երեք բաղադրիչների իրացման մեջ և իր «կամքը», «ցանկություններ», «գիտելիքները, կարողություններն ու հմտություններն» է թելադրում մարդուն: Ստեղծելով տեխնոլոգիական զանազան միջոցներ՝ մարդը նաև ստրկանում է դրանց: Եվ, այս կապակցությամբ, ակամա հիշում եմ տասնիններորդ դարի նշանավոր մտածող Մատթեոս Մամուրյանի մտահոգությունն այն մասին, որ մեքենայական արտադրու-

թյան զարգացման ընթացքում մարդը վերածվում է յուրահատուկ ու անիմաստ մեքենայի: Իսկ քսաներորդ դարի ականավոր փիլիսոփա Էրիխ Ֆրոմը նշում էր, որ ժամանակակից մարդը դարձել է մեքենայի ատամնանիվ՝ դրանով ընդգծելով այն անկումային իրողությունը, որ մարդ – մեքենա հարաբերությունը դարի ու ապագայի հակահումանիստական ամենաընդգրկուն դրսևորումներից է:

Ուստի, առաջնորդվելով այս մտահոգությամբ ու որպես վերը նշված բանաձևման միակողմանիության հաղթահարման անհրաժեշտ նախապայման, հավասարակշռող միջոց ու ավելի կարևոր կողմնորոշիչ, ավելացնում եմ, որ կրթության բուն նպատակը և առաքելությունը պետք է լինեն նաև կրթվածությունը, ինչը ենթադրում է կրթության վերածումը հատուկ համակարգի՝ այդ երկու բաղադրիչների սերտ փոխկապակցությամբ, այսինքն՝ կրթվածություն՝ մարդկայնացում – հայացում – դաստիարակություն + գիտելիք – կարողություններ – հմտություններ: Սա նշանակում է, որ կրթությունը ստանում է նաև ընդգծված արժեքային, մարդաբանական, ազգային ու գործնական գիտելիքակազմ յուրահատկություն ու ձևավորում, դրանք կյանքի կոչող և համակողմանի զարգացած անհատականություն, հայկականով առաջնորդվող անձնավորություն: Կրթությունը ու դրա առանցքը կազմող գիտելիքը հոգեկերտվում է, դառնում արժեքայինի հատուկ դրսևորում: Ավելին, ընդհանուր կրթվածությունը, դաստիարակությունը, հայացումը անհրաժեշտաբար ենթադրում են նաև գիտելիքների, կարողությունների ու հմտությունների յուրացում: Նշանակում է՝ կրթության համակարգը պետք է ձևավորվի որպես այդ երկու խումբ բաղադրիչների փոխկապվածության արդյունք ուսումնակրթական ոլորտների ու զարգացումների բոլոր մակարդակներում: Եվ այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե կրթության այդ երկու հիմնական ենթահամակարգերը իրար բացառող անտինոմիաներ են, սակայն իրականում պայմանավորում են միմյանց և կողմնորոշում այն հիմնական նպատակը, որ հայոց կրթական համակարգը, որքան էլ լինի գիտականին ու գործնականին միտված, պետք է նաև, և հատկապես, լինի ազգային, զարգացնի ընդհանուր մարդկային ու ազգային որակները: Եվ այսպես՝ ուսումնական ամբողջական համակարգը եթե չի ներառում նաև կրթվածության ու դաստիարակության համադրույթներ, այդ կրթությունը կորցնում է իր իմաստը, հայկականի կողմնորոշվածությունը, մնում է թերի ու վերացական: Հետևաբար, նախ՝ մարդ ու հայ, ապա՝ գիտելիք – կարողություններ – հմտություններ, որոնք, ոչ թե պետք է միմյանց հակադրվեն, այլ լրացնեն ուսումնական – կրթական համակարգի հիմնական առաքելությունները: Հայության, Հայաստանի ու Արցախի Հանրապետությունների համար

անհրաժեշտ են ոչ միայն որակյալ տնտեսագետներ, մանկավարժներ, փիլիսոփաներ, բժիշկներ, իրավաբաններ, մաթեմատիկոսներ, աստղագետներ, ճարտարագետներ և այլ մասնագետներ, այլև հայ մասնագետներ՝ հայ տնտեսագետ, հայ բժիշկ, հայ մաթեմատիկոս և այլն: Ասվածը կարևորվում է նաև նրանով, որ ներկայումս մեծ թիվ են կազմում արտերկրի տարբեր ուսումնական հաստատություններում սովորել ցանկացողները, և այդ ցուցանիշն աստիճանաբար աճում է: Բնականաբար, հարց է առաջանում՝ նրանց քանի տոկոսն է վերադառնալու Հայաստան: Հավանաբար՝ շատ քչերը: Ուստի արտերկրում, ի դեպ նաև Հայաստանում, իր մասնագիտությունը իրացնող հայը չպետք է մոռանա իր հայ լինելը և հնարավորության սահմաններում գործի նաև հայկականի համար: Սա պետք է լինի նաև պետական քաղաքականության հիմնարար սկզբունքներից մեկը բարոյական, իրավական, քաղաքական բոլոր հնարավոր չափորոշիչներով:

Նշանակում է՝ հայկական կրթությունը պետք է լինի ոչ թե կրավորական, հայեցողական, այլ ակտիվ, ստեղծագործական, տրամաբանորեն ու ազգայնորեն հիմնավորված, համամարդկային ու համաշխարհային հիմնարար գաղափարներով ու զարգացումներով հագեցած: Ազգայինով դեպի համամարդկայինը և հակառակը, ժամանակակից համաշխարհային զարգացումներին համապատասխանող, բայց ոչ ազգայինի, հայկականի հաշվին, այլ հայկականով, հայաստեղծման գերնպատակներով ամրակայված: Եվ այս համատեքստում չափազանց կարևոր է այն հանգամանքի գիտակցումը, որ արտաքին ու ներքին մարտահրավերների և ազգայինին, հայկականին հակադրվող զանազան գործընթացների, այդ թվում՝ համընդհանրացման, աշխարհաքաղաքացիության, աղանդավորական շարժումների, պատերազմական իրավիճակի պայմաններում հայկական կրթության՝ որպես ազգաամրակայման, ազգային գիտակցության ձևավորման կարևոր միջոցի դերն ու նշանակությունը դառնում է չափազանց արդիական ու հրատապ՝ իր բոլոր դրսևորումներով ու զարգացման մղումներով:

Այժմ անդրադառնանք մեկ այլ խնդրի. որքանով է հայկական որդեգրված ուսումնական համակարգը ծառայում իր նպատակին՝ հայրենասիրական, ազգային իդեալների իրականացմանը, հայ մարդու՝ պատանու, երիտասարդի, հասուն անձնավորության հայկական կերպարի կազմավորմանը: Եվ եթե հաշվի առնենք, որ դրանք ունեն նաև ընդհանուր հասարակական պայմանավորվածություն՝ որքանով են այս պարագայում կարևորվում ոչ միայն ուսումնական հաստատությունները, այլև այնպիսի միջոցներ, ինչպիսիք են հեռուստատեսությունը, մամուլը, զանազան զանգվածային միջոցառումներ և այլն:

Վերջիններիս ես չեմ անդրադառնա, քանզի պրոֆեսոր Արամ Սարգսյանի զեկույցում դրանք համակողմանիորեն ներկայացված են:

Փորձեմ առաջնորդվել մեկ այլ կարևոր հարցադրումով ևս: Արդյոք հայկականին վերաբերող դպրոցական ու բուհական ծրագրերը, դասընթացները լուծո՞ւմ են վերը նշված ազգային խնդիրները: Դժբախտաբար՝ ոչ: Որպես օրինակ նկատի ունենանք ամենահիմնականը՝ հայոց պատմությանը վերաբերող դասագրքերն ու ծրագրային դասընթացները՝ նկարագրականություն, փաստագրում, իրադարձությունների մանրապատումներ, ինչը ոչ մի հայրենասիրական հետք չի թողնում սովորողի՝ աշակերտի և ուսանողի հոգեբանության, հայակերտման, ազգային մտածողության, հերոսականի, հայաճանաչման ձևավորման վրա:

Հետևաբար՝ հաջորդ քայլը պետք է լինի այնպիսի նոր դպրոցական ու բուհական դասընթացի կազմակերպումը, որը կհաղթահարի այդ թերությունը և ուղղակիորեն կնպաստի հայկականի ամրապնդմանը՝ իր ամենատարբեր դրսևորումներով: Պայմանականորեն դա համարենք ***հայրենաբանություն*** կամ ***հայկաբանություն:*** Ու թվում է, թե այդ ամենը առկա է կամ մասամբ առկա է մեր դպրոցական ու բուհական ծրագրերում, սակայն չի ծառայում իր հիմնական ու ազգայինին կողմնորոշված նպատակներին, օրինակ՝ դպրոցներում դասավանդվող հայ եկեղեցու պատմությունը, քաղաքացիական կրթությունը, տնտեսագիտությունը և այլն: Առաջարկվող այս գաղափարի՝ հայկականի ամրապնդման լավագույն օրինակը նախագծել է Ղևոնդ Ալիշանն իր «Յուշիկ հայրենյաց հայոց» հանրագիտական, հայրենասիրական աշխատությունում, որում բնապաշտականը, հայոց պատմության կարևոր իրադարձությունները, նվաճումները և ազգաճանաչման, հայրենասիրության ոգեկերտումները միախառնվելով՝ ամբողջական ու վերապրումային համապատկեր են ստեղծում հայկականի, հայոց ու Հայաստանի մասին:

Հաջորդը ռազմագիտությունը բուհական համակարգում ներառելու կարևորությունն է, որի իրագործման համար արդեն որոշակի քայլեր արվում են: Բայց, ի հավելումն, ես առաջարկում եմ որևէ մեկին չազատել զինվորական ծառայությունից՝ լինի ասպիրանտ, թե գիտական աստիճան ունեցող: Ի՞նչ գիտնական կամ բարձրագույն կրթություն ունեցող, որ Հայաստանի համար այս ծանր իրավիճակում չտիրապետի զենքի ու ռազմական գործի արվեստին, բայց, իհարկե, հատուկ ու մասնագիտացված՝ կարճ տևողությամբ: Հայ երիտասարդը պարտավոր է տիրապետել զենքի ու ռազմական արվեստի հմտություններին:

Այժմ, որպես ամփոփում, նշեմ, թե ինչ մեթոդաբանական ու հարացուցային սկզբունքով պետք է ձևավորվի ու առաջնորդվի ազգային կրթական համակարգը: Կարծում եմ՝ դրա լավագույն սկզբունքն ու հայակերտման մեթոդաբանական կողմնորոշումը տվել է Խորենացին իր առաջադրած երեք հիմնական չափորոշիչներով. «....թեպետ մենք փոքր ածու ենք և թվով շատ սահմանափակ ու զորությամբ թույլ և շատ անգամ օտար թագավորությունների կողմից նվաճված, բայց և այնպես մեր երկրում էլ գրելու և հիշատակելու արժանի շատ սխրագործություններ են կատարվել...» և, ի լրումն՝ որովհետև, հայությունը եղել է բոլոր «Հյուսիսային ազգերի մեջ վեհագույնը»: Իսկ որպես տեղի ունեցած անկումների, ձախողումների անառարկելի քննադատություն, ինչում է պատմահոր նշանավոր «Ողբը»՝ ազգային ինքնամաքրման անառարկելի հրամայականով: Այս երեք հիմնադրույթները ուղեցուցային պետք է լինեն նաև մեր օրերի գնահատականներում ու կրթադաստիարակչական առաքինություններում: Ազգային բարձր ինքնագիտակցություն, հպարտություն, բայց նաև քննական, քննադատական լուրջ վերաբերմունք թերությունների, անկումների նկատմամբ:

Անդրադառնանք երկու փաստի ևս.

- ՀՀ սահմանադրության 15-րդ հոդվածում նշվում է, որ պետությունը խթանում է մշակույթի, գիտության, կրթության զարգացումը: Հասկանալի է, որ սա, ըստ էության, ոչինչ չասող անորոշ ձևակերպում է, նույնիսկ այն դեպքում, երբ հայոց գենետիկ ու պատմական հասունացման հիմնական բնորոշիչները սրանք են՝ հատկապես կրթությունը, այսպիսի անորոշությունը անսկզբունքայնության դրսևորում է՝ անկախ այն հնարավոր փաստարկման, որ մանրամասները տրված են լինելու կրթության մասին օրենքում:

- Հաջորդ դիտարկումը վերաբերում է հետևյալին: Ինչպես հայտնի է, մայիսի 30-ին հռչակվեց Արարատյան համահայկական ու արցախյան բակալավրական կրթական նոր համակարգի ծնունդը: Ի տարբերություն այլ ելույթների, հուսանք, որ իրական կլինի տնօրեն Մեսրոպ քահանա Արամյանի այն պնդումը, որ հաստատությունը պետք է համապատասխանի ոչ միայն միջազգային կրթական համակարգի պահանջներին, այլև լինի նաև համահայկական, ազգային, հայրենասիրական:

Ազգային կրթության վերաբերյալ այս շարադրանքի հիմնավորումների ու հարստացումների համար մեծ հնարավորություններ են ապահովում հայ տեսական մտքի և ուսումնակրթական համակարգի նվաճումները: Նշենք այն կարևոր փաստը, որ մեսրոպյան այբուբենի ստեղծման ու դրա կիրառության առաջին կարևոր նվաճումը հայերեն

դասավանդմամբ ազգային դպրոցների հիմնադրումն էր: Իսկ այն իրողությունը, որ պետականության անկման պայմաններում հայոց եկեղեցին զգալիորեն փոխարինում էր պետությանը, պետք է նկատի ունենալ ոչ թե եկեղեցին ինքնին վերցված, այլ նրա ծավալած մշակութային հսկայական գործունեությունը, որի առանցքը կրթական, ուսումնական ոլորտն էր:

Հետագա դարերի ընթացքում ավելի համակողմանի հիմնավորումներով են առաջադրվել ազգային կրթության հրամայականները: Այս տեսակետից առանձնահատուկ է 19-րդ դարի հայ տեսական մտքի ներկայացուցիչների՝ Աբովյանի, Նալբանդյանի, Ալիշանի, Մամուրյանի, Պալասանյանի և այլոց մանկավարժական ըմբռնումները, որ միախառնված էին նրանց ընդհանուր ազգաբանական ու մարդաբանական հայեցակարգերի հետ: Տիրապետող է դառնում հետևյալ հիմնարար մոտեցումը. կրթությունը և դաստիարակությունը ազգայինի կազմավորման կարևոր նախապայմաններն են: Ըստ նրանց՝ այն կրթությունն է (միախառնված դաստիարակությանը) պատմամշակութային արժեք ներկայացնում, որը նպաստում է ազգայինի ինքնապահպանմանն ու զարգացմանը, հայրենասիրության, հայ մարդու ձևավորմանը, հայրենասիրական հոգեբանության կազմավորմանը, ազգային արժեքների յուրացմանը[1]: Հետևաբար՝ գիտելիքը պետք է ներծծված լինի նաև դրանցով, հայկականով: Արդի հայկական կրթական համակարգի համար չափազանց կողմնորոշիչ կարող է լինել Մատթեոս Մամուրյանի հետևյալ միտքը. ժողովրդի յուրացրած կրթությունը «կրնա ըստ տեսակին, զայն կնամարդի ու ստրուկի ընել, կամ արի ու ազատ»[2]: Ըստ Ղևոնդ Ալիշանի՝ լավ դաստիարակությունը մարդուն կրթում է այն գաղափարով, որ ինքը միայն իր և իր ընտանիքի համար չէ, որ «ավելի մեծ ընտանիք մալ ունի, որ է ազգը»[3]: Իսկ Ստեփան Պալասանյանը կրթության հիմնական նպատակը համարում էր ազգի, հասարակության համար լայնախոհ սերունդ պատրաստելը և քննադատում էր այն «փտած ազգասերներին», որոնց իմացության շրջանակները սահմանափակվում էին միայն ազգայինով[4]:

[1] Այս մասին մանրամասն տե՛ս Ս. Ա. Սարգսյան, Մարդու հիմնախնդիրը 19-րդ դարի հայ փիլիսոփայական ու հասարակական մտքում, Եր., 2001, էջ 233- 250:
[2] Մ. Մամուրյան, Երկեր, Եր., 1966, էջ 188:
[3] Ղ. Ալիշան, Երկեր, Եր., 1981, էջ 183:
[4] Ստ. Պալասանյան, Խոսք զհայրենյաց, Փորձ, թիվ 1, 1877-78:

ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Քննարկումների ընթացքում արվեցին հետևյալ առաջարկությունները.

1. Բարձրագույն կրթության պետական կարգավորում և բուհերի ինքնավարություն

1.1. Օրենսդրությամբ սահմանել և ամրագրել բուհի ինքնավարության ընդլայնմանը նպաստող կազմակերպաիրավական ձևը:

1.2. Լիովին ազատականացնել բուհերի կողմից սեփական ակտիվների կառավարումը և ֆինանսական գործունեությունը՝ սեփականության իրավունքով ամբողջ գույքը հանձնելով նրանց:

1.3. Բուհերին տալ լիակատար ինքնուրույնություն ընդունելության կազմակերպման և դիմորդների ընտրության հարցերում:

1.4. Շատ բուհեր, հատկապես պետականները, ընկալվում են առավելապես իբրև տնտեսական, այլ ոչ թե կրթական գործունեություն ծավալող հաստատություններ: Այս ընկալումն էլ պայմանավորում է ոլորտի կարգավորման, վերահսկողության սահմանման սկզբունքները: Գործնականում Հայաստանի բուհերի գործունեության վերահսկողությունը հիմնականում կենտրոնացած է ընթացակարգային, այլ ոչ թե բովանդակային, ծրագրային խնդիրների վրա: Այդ իրավիճակը հարկավոր է փոխել:

1.5. Նվազեցնել պետական մարմինների դերակատարությունը բուհերի կառավարման գործընթացում՝ չեղարկելով այն դրույթը, համաձայն որի բուհի կառավարման խորհրդի անդամների 50%-ը Կառավարության և ԿԳՆ ներկայացուցիչներ պետք է լինեն: Բուհերի կառավարման գործում մեծացնել աշխատակազմի դերը, ռեկտորներին վերապահել բուհերի զարգացման, ֆինանսների տնօրինման լայն լիազորություններ: Հետևողականորեն իրականացնել բուհերի խոշորացման (օպտիմալացման) պետական քաղաքականություն՝ ընդունելության ծավալների կտրուկ նվազման հետևանքները մեղմելու և գործունեության արդյունավետությունը մեծացնելու նպատակով:

2. Կրթության որակ

2.1. Կրթության որակի ապահովման գրավականներից է ոլորտում մրցակցային հավասար պայմանների ստեղծումը: Մասնավորապես՝ բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող իրավական նորմերին տարբեր աստիճանով ենթարկվելու հանգամանքը բուհերի միջև անհավասար մրցակցության նախապայմաններ է ստեղծում: Այդ պարագայում հատկապես օտարերկրյա ուսումնական հաստատությունները մրցակցային առավելություններ են ստանում, քանի որ կրթական գործընթացի ամբողջ շղթան կազմակերպելու հարցում անհամեմատ ազատ են:

2.2. Բուհերի կրթական ծրագրերը, դրանց իրականացման գործընթացները պետք է մշտադիտարկման առարկա դառնան: Ուսումնական ծրագրերի վերանայման ընթացքում ելակետը աշխատաշուկայի պահանջարկը պետք է լինի: Ըստ այդմ՝ հարկավոր է սերտ գործակցել գործատուների հետ՝ բարձրագույն կրթությամբ մասնագետների նկատմամբ հստակ և հասցեական պահանջները բացահայտելու համար: Անհրաժեշտ է գործատուներին ներառել բուհերի որակի ապահովման գործընթացներում:

2.3. Նպաստել հանրակրթության ոլորտում մասնագիտական կողմնորոշման ինստիտուտի, ինչպես նաև բուհական համակարգում օբյեկտիվ և վստահություն ներշնչող վարկանշային համակարգի կայացմանը, ինչը կօգնի դիմորդներին՝ իրենց ունակություններին համապատասխան մասնագիտություններ և որակյալ բուհեր ընտրելու:

2.4. Ակտիվացնել ուսանողների ներքին և արտաքին ակադեմիական շարժունությունը:

2.5. Ակադեմիական շարժունության զարգացման նպատակով ՀՀ Կառավարության «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգ»-ում կատարել փոփոխություններ, մասնավորապես՝ վերացնել կամ մեղմել առարկայական տարբերությունների հանձնման պահանջին վերաբերող դրույթը:

2.6. Փոխել ուսանողների զորակոչի ժամկետները. զորակոչն սկսել ոչ թե հունվարից (հունիսից), այլ փետրվարից (հուլիսից), ինչը զորակոչվող ուսանողին հնարավորություն կտա ավարտելու կիսամյակը, իսկ զորացրվողին՝ լիարժեքորեն մասնակցելու կիսամյակային դասընթացներին:

3. Արժեհամակարգ

3.1. Հաստատուն դարձնել այն ըմբռնումը, որ կրթությունը ժամանակակից հասարակական զարգացման հիմնարար արժեքներից է:

3.2. Կարևորել մարդու պատշաճ վերաբերմունքն իր կրթության մակարդակի և որակի նկատմամբ: Կրթության շնորհիվ կարելի է ոչ միայն պահպանել հասարակության արժեքները, այլև հարստացնել և զարգացնել դրանք:

3.3. Խոսելով կրթության արժեքների մասին՝ դիտարկել դրանց երեք շերտ. կրթությունը որպես պետական արժեք, հասարակական արժեք, անհատի արժեք: Բարձրագույն կրթության արժեքն առավելապես աշխարհայացքի փոփոխության մեջ է:

3.4. Համալսարանները պետք է նախաձեռնեն հասարակության արժեհամակարգի փոփոխությունը կրթության՝ որպես արժեքի դիտարկմամբ և հետևողական աշխատանք իրականացնեն այդպիսի արժեհամակարգին ոչ հարիր ակադեմիական անազնվության դրսևորումները բացառելու նպատակով:

4. ՀՀ և ԱՀ համագործակցություն բարձրագույն կրթության բնագավառում

4.1. Հետևողականորեն ձևավորել ՀՀ և ԱՀ բարձրագույն կրթության և գիտական հետազոտությունների միասնական տարածք:

4.2. Ապահովել ակադեմիական շարժունության բարձր մակարդակ ՀՀ և ԱՀ բուհերի միջև: Միաժամանակ որոնել ԱՀ համալսարանների ուսանողներին ՀՀ համալսարանների միջոցով «Էրասմուս+» փոխանակման ծրագրերում ներառելու ուղիներ:

4.3. Ձեռնարկել քայլեր բարձրագույն կրթության տարածաշրջանային քլաստերներ ստեղծելու ուղղությամբ: Այդպիսի առաջին նախագծերից կարող է լինել Արցախի, Գորիսի, Կապանի ուսումնական հաստատությունները մեկ քլաստերում միավորելը և Ստեփանակերտը հարավային գիտակրթական քլաստերի կենտրոն դարձնելը:

5. Ֆինանսավորում, գնումներ հարկեր, գեղչեր

5.1. Ներկայումս ՀՀ և ԱՀ համալսարանները կանգնած են ֆինանսական մարտահրավերների առջև, որոնք ժողովրդագրական և այլ գործոնների ազդեցությամբ էլ ավելի կուժգնանան առաջիկա տարիներին: Իրավիճակը մեղմելու միակ ճանապարհը պետական ներդրումների ծավալների մեծա-

ցումն է կրթության, մասնավորապես՝ բարձրագույն կրթության բնագավառում:

5.2. Օրենսդրորեն ամրագրել եկամուտների աղբյուրների բազմազանեցումը խրախուսող դրույթներ: Բարձրագույն կրթության համակարգում մասնավոր ներդրումները խթանելու նպատակով սահմանել հարկային արտոնություններ, կիրառել տնտեսական այլ մեխանիզմներ:

5.3. Բուհերի ընդհանուր բյուջեների 70-90 տոկոսը ձևավորվում է ուսման վարձավճարների հաշվին: Մինչդեռ, օրենսդրությամբ բուհերի վրա դրված են այնպիսի գործառույթներ (հատկապես սոցիալական բնույթի), որոնց իրականացումը վտանգում է ոչ միայն դրանց զարգացումը, այլև կենսագործունեությունը (խոսքը վերաբերում է ուսանողների համակազմի 10%-ին և սեփական միջոցների 7%-ին): Նպատակահարմար է վերանայել այդ դրույթները, համալսարանների հայեցողությանը թողնել այդպիսի խնդիրների լուծումը՝ հիմնվելով սոցիալական կորպորատիվ պատասխանատվության սկզբունքների վրա:

5.4. Նպատակահարմար չէ համալսարանների բյուջեների 2%-ի փոխանցումը ՀԵՀ-ին. բուհերն այդ գումարները կարող են ուղղել ուսանողների ուսման վարձի զեղչմանը, դասախոսների վերապատրաստմանը, ինչի համար ներկայումս ռեսուրսները չեն բավականացնում:

5.5. Բարելավել Արցախի համալսարանների բյուջեների կառուցվածքը. վարձավճարներից գոյացած բյուջեի 50%-ի չափով կատարել ֆինանսավորում ԱՀ պետբյուջեից:

5.6. Արցախում ներդնել ուսանողների վարկավորման համակարգ: Սպաների ուսանող երեխաների ուսման վճարների փոխհատուցումը կատարել ակադեմիական առաջադիմության հաշվառմամբ:

5.7. ՀՀ հարկային օրենսգրքում առկա հիմնահարցերի ամբողջական լուծման նպատակով անհրաժեշտ է կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

ա) Բաժին 6, գլուխ 22, «Եկամուտ չհամարվող տարրերը» հոդված 108-ի 1-ին մասում ավելացնել նոր՝ 19-րդ կետը՝ հետևյալ բովանդակությամբ. «Բարձրագույն ուսումնական հաստատությունների վճարովի ուսուցման համակարգում սովորող ուսանողներին, օրենքի համաձայն, հաստատության սեփական միջոցների հաշվին տրվող ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման գումարները»:

բ) Բաժին 6, գլուխ 22, «Ծախսերի առանձին տեսակների հաշվառման առանձնահատկությունները» հոդված 121-ի 8-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Բարձրագույն ուսումնական հաստատության ուսանողներին կրթական ծառայությունների մատուցման հետ կապված բոլոր անհրաժեշտ ծախսերը՝ անկախ օրենքով սահմանված դեպքերում և կարգով այդ ծառայությունների դիմաց ուսանողների կողմից հատուցում չկատարելու հանգամանքից»:

գ) Բաժին 7, գլուխ 27, «Նվազեցվող եկամուտները /նվազեցումները/» հոդված 147-ի 1-ին մասի 24-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Բարձրագույն ուսումնական հաստատությունների վճարովի ուսուցման համակարգում սովորող ուսանողներին, օրենքի համաձայն, հաստատության սեփական միջոցների հաշվին տրվող ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման գումարները»:

5.8. Անապահով ընտանիքների ուսանողներին տրամադրել սոցիալական աջակցության տարբեր փաթեթներ:

5.9. Պետական բուհերին անհրաժեշտ է ազատել շահութահարկի հաշվարկումից և վճարումից:

5.10. Գնումների գործընթացում պետք է նվազեցվեն բյուրոկրատական սահմանափակումները:

5.11. Բուհերի ֆինանսական միջոցների օգտագործումը կարող է շատ ավելի արդյունավետ լինել, եթե «Գնումների մասին» ՀՀ օրենքի կարգավորման դաշտում գործելու պարագայում նրանց նկատմամբ որոշակի բացառություններ կատարվեն (սեփական միջոցներով գնումներն իրականացվեն Համաշխարհային բանկի կամ ԵՄ միջազգային դրամաշնորհների միջոցների ծախսման ընթացակարգերով):

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

Խմբագիր՝
Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Էջադրումը և ձևավորումը՝
Ն. ԽՉԵՅԱՆԻ